

Այո՛ւնյաց երկիր


Ե Ր Կ Չ Ա Ք Ա Ք Ա Ք Ե Ր Ք

№ 1
/113/

17
հունվարի 2007

ՀԻՄՆԱԳԻՐ ԵՎ ՀԻՄՆԱԳՐԱԿԻՉ՝ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ: ■ ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Զանգեզուր աշխարհի նահապետը ԱՄԵՆ ՄԻ ՏԱՐԱԸ ԽԱՉՔԱՐ ԴԱՐՁԱԾ...



ԳՈՒՄԱՆՆ ԷՆ Է

Գուսանն էն է՝ սառ ջրի պես հովացնի սիրտը մարդու, Գարնան քնքուշ ծաղիկների բույրով լցնի սիրտը մարդու, Երգով, կյանքով ծառա լինի իր հայրենի հողին, ջրին, Առատ տարվա հացի նման լիացնի սիրտը մարդու:

Գուսանն էն է, որ իր խոսքով կրակի պես մեղմի ցուրտը, Ուրիշների կակիծը լա, իրեն համար սեղմի շուրթը, Վիստ սրտին հույս ներշնչի, փարատելով մուժն ու մուրը, Բլբլույի պես անուշ երգով քնքշացնի սիրտը մարդու:

Գուսանն էն է՝ երգը լինի ծաղիկ բացող աղբյուրի պես, Միրո կարոտ ջահել սիրտը հովացնի համբույրի պես, Հովտից հովիտ անցնի գարունն արթնացնող զեփյուռի պես, Գարնան շաղոտ ծաղկանց բույրով քարմնացնի սիրտը մարդու:

Գուսանն էն է, որի երգը հազար փորձանքի դիմանա, Լեզվից-լեզու անցնի գնա, ամեն ազգի մարդ իմանա, Հասնի ամեն սեղան սուփրի, կարոտ սրտի քարզման դառնա, Ամպից ելած արեւի պես ուրախացնի սիրտը մարդու:

Գուսանն էն է, Աշոտ ախպեր, թե տա հոգուն, բարձրացնի, Ուր որ գնա՝ կյանքն ու սերը երկրի վրա քաղցրացնի, Որի երգը փոթորկի դեմ, կրակի դեմ կարծրացնի, Հարազատ հոր խրատի պես ամրացնի սիրտը մարդու:

20-րդ դարի գուսանական արվեստի ազնվական ասպետը

ԷՂՈՒՐՈՒ ՄԻՐՉՈՅԱՆ

Կրճաղագիտոր, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, պրոֆեսոր

Մեր ժողովրդի գուսանական արվեստի մնայուն դեմքերից է Աշոտը: Նրա լավագույն երգերն ապրում են ժողովրդի մեջ: Միանգամայն գովելի է Կապանում լույս տեսնող «Այո՛ւնյաց երկիր» թերթի նախածեռնությունը, որ մտահղացել է Այո՛ւնյաց աշխարհի գավակի հիշատակը հարգել: Չեն կասկածում, որ Գորիսն էլ կմիանա այս ձեռնարկին, ողջ Այո՛ւնիքն էլ: Եվ վարպետի 100-ամյա հոբելյանի

տոնումն էլ կդառնա համահայկական երեւոյթ: Երբեմն պատահում է, մի արժանավոր մտավորականի, ազգի երեւելի գավակի 100 տարին լրանում է, նոր միայն հիշում են, հապճեպ հոբելյանական հանձնաժողով ստեղծում եւ փորձում ինչ-որ ձեւով հոբելյանը մշել: Եվ ողջունելի է, որ դուք վաղուց քեզ նախապատրաստվում այդ հոբելյանը մշելու: Չգիտեմ այսօր այդ մասին ինչ է մտածում մշակույթի նախարարությունը:

Պիտի ասեմ, որ իմ սուրբեկտիվ վերաբերմունքն ունեմ Գորիսի եւ գորիսեցիների հանդեպ: Մտերիմ

են եղել Աշոտ Սաթյանի հետ, մեզ իրար հետ կապել է ստեղծագործական համագործակցությունը: Ջերմ հարաբերություններ ունեի գուսանի հետ: Նա գտարյուն գորիսեցի էր, գորիսեցու բնավորությունն արտահայտող: Բոլորիս մտապատկերում կա իբրեւ ժողովրդի ուրախություններից եւ տխրություններից անբաժան, նրա հույզերը խորապես զգացող մարդ: Աշուղներից երեքի հետ են շփվել՝ Աշոտ, Գավասի, Շահեն: Չեմ հանդիպել Շերամին: Աշոտի արվեստը ժողովրդականիս ավելի մոտ է, ուստի բարձր են գնահատում նրա վաստակը: Տարիներ առաջ ներկա են եղել նրա 80-ամյա հոբելյանի տոնակատարությանը: Ջանգեզուրի ժողովուրդն այդ օրն արժանի մատուցեց իր տաղանդավոր գա-

վակին: Այնպես որ ուրախ են, որ կրկին պատեհ առիթ է ընձեռվել եւս մեկ անգամ մեծարելու 20-րդ դարի գուսանական արվեստի ազնվական ասպետին, որն իր ժանրով միշտ էլ ժողովրդի հետ էր, հոգեթով, սովորական մարդուն (եւ ոչ միայն նրան) սրտամոտ երգերով հարստացրեց հայ արվեստի գանձարանը: Նրա երգերն ընդմիշտ կհնչեցնի ժողովուրդը: Ժողովուրդ, որն իր անսպառ սիրով հավերժի այցեատոմս տվեց սիրված գուսանին ու կնքեց նրան իբրեւ մեծ երգիչ ու երգահան: Աշոտն այն աշուղներից է, որ իր արվեստով կապրի: Խոնարհվում են նրա հիշատակի առջեւ եւ վերջում մաղթում սյունեցուն լինել այնպես ավանդապահ, ինչպես միշտ եղել է:

2007թ. ապրիլի 25-ին
աշուղ Աշոտը
կդառնար հաարյուր
տարեկան

ՀԱՄԱՐՈՒՄ

ՄԱՅ ԶԵՍ ՏԵՆԻ, ԹԵՎՈՒՋ ՄԻ ԵՐԳՈՒ ՄԱ
Գուսանի կյանքի ուղին ներկայացվում է ըստ Անդրանիկ Կարապետյանի «Գուսան Աշոտի բանաստեղծական աշխարհը» աշխատության (1995թ.): Գուսանի անցած ուղու եւ ընտանիքի մասին տեղեկություններ են պարունակում նրա որդու՝ Համլետ Դարայանի հետ գրույցը, այլ հրապարակումներ

02 է.Ձ

ԳՐԱՎՄԱՍԳԻՏԱԿԱՆ-ԵՐԱՄՇԵՏԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՅԱՅԸ
Գուսանի երգերի ժողովածուներից երեքի առաջաբանները, որ հեղինակել են Սերո Խանգաղյանը, Սեւակ Արզումանյանը, Գարեգին Հովսեփյանը, մինչեւ այժմ հրապարակված վերլուծություններից առավել ամբողջականն են ու հետաքրքիրը

03 է.Ձ

ԿԱՐՏԻԷ ԵՎ ՉԼԱԳԱՏԱՆԸ
Խորագրի ներքո Ավետիք Իսահակյանի, Համո Սահյանի, Աշոտ Սաթյանի եւ այլ նշանավորների խոսքն է գուսան Աշոտի մասին

03 է.Ձ

ԱՇՈՒՂԱԿԱՆ ԱՐՎԵՍ
Թեմային առնչվող հարցեր են քննարկում ՀՀ մշակույթի նախարարության, հանրային ռադիոյի, «Սայաթ-Նովա» մշակութային միության եւ աշուղագիտական կենտրոնի պատասխանատուները

04 է.Ձ

ԳՈՒՄԱՆԻ ԵՐԳԱՇԽԱՐՀՈՒՄ
Խորագրի ներքո ներկայացվել են նրա բազմաթիվ, նաեւ անտիպ, ստեղծագործություններ

04 է.Ձ

ՀԱՍՏԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՓՈՒՆԼՎԱՍՏԱՆ ՃՆԱՊՈՐԿ
Ներկայացվում են նշանավոր կոմպոզիտորների եւ ծանաչված երգիչ-երգչուհիների (թեւեւ ոչ բոլորի) լուսանկարները, ովքեր նպաստել են գուսանի ստեղծագործական ընթացքին

05 է.Ձ

ՄԵՐՈՐՑԱ ՀԱՅԱՅԸ ԳՈՒՄԱՆԻ ԱՏԵՂՃԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ
Գուսանի երգաշխարհին հայացք են ձգում Օֆելյա Համբարձումյանը, Ռուբեն Մաթեոսյանը, Թովմաս Պողոսյանը, Արզաս Ոսկանյանը, Շավիղ Գրիգորյանը

07 է.Ձ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՄՈՒ. ԱՐԽԻՎ
Գուսանի ստեղծագործական ընթացքը պարբերաբար եւ բազմակողմանի լուսաբանվել է ժամանակի մամուլում: Հովհաննես Բաղդասարյանի եւ Տաթևիկ Սազանդարյանի էլույթներն այդ շարքից են

09 է.Ձ

ԱՆՎԱՐՏ ԶՆԱՐ
Համանուն գրքի հեղինակը գուսանի վաղամեծիկ որդին է՝ Ռուբեն Դարայանը, որի բանաստեղծություններից երկուսը ներկայացվում է ընթերցողին

11 է.Ձ

ԳՈՒՄԱՆ ԱՇՈՒՄ ԶԱՐԵ ՀԱՎԵՐՄԱՑՈՒՄՆԵՐ
Գուսանն ընդմիշտ դրոշմված է գորիսեցիների հիշողության մեջ, ինչն արտացոլված է համանուն հրապարակման մեջ եւ գուսանի մտերիմների հուշերում

15 է.Ձ

ՎԿԱՑՈՒՄ ԵՆ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ
Գուսանը նաեւ իր երգերի կատարողն էր, գորիսյան երաժշտական խմբերի ներշնչանքի աղբյուրը

16 է.Ձ

Այո՛ւնյաց երկիր
Խմբագրակազմն իր եւ ընթերցողների շնորհակալությունն է հայտնում
«ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՄԿ»
ՓՎԿ ԲԱՄՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
գլխավոր տնօրեն
ՄԱՔՍԻՄ ՀԱՎՈՔՅԱՆԻՆ՝
համարը
հովանավորելու
համար:

ԿՅԱՆՔԻ ՈՂԻՆ



Գուսանի բնակարանում քամանչայի սրբակեղծ մեղեդու եւ հոգեգմայլ երգի շունչը զգացվում է նաեւ այսօր

Մահ չես տեսնի, թեկուզ մի երգդ մնա...

ԱՆՆՈՒՆԻԿ ԿԱՐՊԵՏՅԱՆ
բանասիրական գիտությունների դոկտոր

Գուսան Աշոտը (Աշոտ Հայրապետի Դադայան) սերունդ է Գորիսի հնագույն մի տոհմից: Գուսանն իրենց տոհմի ու իր ծնողների մասին ուշագրավ տեղեկություններ է հաղորդում անտիպ ինքնակենսագրականում, որ պետք է հրատարակել «Կյանքիս հեքիաթը» խորագրով: Դադայան տոհմի այրերը զբաղվել են հողագործությամբ ու այգեգործությամբ: Նրանց հարկի տակ խիստ հարգի են եղել ժողովրդական երգն ու ասքը: Պապը՝ Արզումանը, եղել է լավ երգող, առակասաց ու հեքիաթասաց, իր խոսքով մշտապես հմայել է քանոնավաճառներին: Նմանապես շնորհալի է եղել նաեւ Աշոտի հայրը՝ Հայրապետը, որը, հողագործ լինելուց բացի, նաեւ ճանաչված որմնադիր էր: Հին Գորիսի կամարակապ շատ տներն են այլ կառույցներ նրա ձեռքի դրոշմն են կրում: Ահա թե ինչու ժողովուրդը նրան կնքել է բարերար Հայրապետ: Հայրապետը նաեւ երգող էր. երգել է լուսավոր թախիծով ու ժողովրդական կենսափիլիսոփայությամբ հագեցած երգեր: Գարնանն ու աշնանը նա իր զավակներով յոթ լծկան եզներով վար ու ցանք էր անում: Նրա բազմաշունչ ընտանիքը (ուներ երեք տղա եւ չորս աղջիկ) ապրում էր գեղջկական ուրախ կյանքով: Ահա այս պարզ հարկի տակ 1907 թ. ապրիլի 25-ի գիշերը ծնվում է չորրորդ արու զավակը, եւ գիշերվա անդորը խախտում են նորածնի ծիչն ու Դադայան տոհմի ավագների զինու թասերի զրնգոցը... Ծնողները նորածնին Տաթևի վանքում մկրտում են՝ անվանակոչելով Աշոտ:


Աշոտի մայրը՝ Դիցուհին, հարուստ տոհմի դուստր էր, առակասաց Արզումանի աղջիկը: Դիցուհին հորից սովորել էր ժողովրդական առակներ, իսկ մորից՝ օրորոցային

երգեր: Աշոտի մանկական հիշողության մեջ դաջվել են մորից լսած օրորոցայինները: Մայրը որդու սնարի մոտ մեղմ երգել է, իսկ տղան մոր հետ դնդնացել է, մինչեւ որ վրա է հասել անուշ քունը: Արդեն հինգ տարեկան հասակում Աշոտը բնության գրկում էր, օրնիբուն ունկնդրում էր թռչունների դայլայլը, գառների ու ոչխարների մայունը, հորթերի բառաչը, հմայվում էր հովիվների սրնգի ծայնով ու երգերով:

Հայրապետ Դադայանի տան քառասուն տարվա ուրախությունն ընդհատվում է կնոջ՝ Դիցուհու անսպասելի մահով: Այդ կորուստը գեղջկական շեն տանը բերում է ամայություն, իսկ փոքրիկ Աշոտին տառապալից որբություն:

Մոր կորուստը հետագայում թախծային մի նուրբ երանգ է հաղորդում որդու քնարին: Պատանի Աշոտը օգնում է խաշնարած հորը կատարելով հովվություն Ջանգեզուրի սարերում: Հայրենի բնության գրկում էլ ստանում է երաժշտական առաջին կրթությունը, յուրացնում է սրնգի վրա նվագելու արվեստը: Լեռների գրկում անցկացրած մանկության ամիզ օրերի պատմությունը հետագայում վերածվում է քնարական վերիուշի:

Չոգուն ամբարած Ջանգեզուրի գուսանների երգերը՝ Աշոտը 1921-ին փոխադրվում է ավագ եղբոր մոտ՝ Բաբու, որտեղ եւ հովվական պարզ սրինգը փոխարինվում է սագով ու քամանչայով: Այստեղ էլ նա ավարտում է բաներիստ դպրոցը: Հետեւելով իր հոգու ներքին ծայնին Աշոտը բռնում է գուսանական արվեստի ճանապարհը: Ստեղծագործելը դառնում է նրա ապրելու կերպը, իսկ երգն ու քամանչան՝ նրա ուղեկիցները: 1928 թվականին վերադառնում է ծննդավայր եւ լիովին նվիրվում իր սիրած արվեստին: Աշոտի անունը լայն ճանաչում է գտնում 1930-ական թվականներին: Նրա քնարին որոշակի լիցք է հաղորդում ժողովրդական ստեղծագործողների օլիմպիադայում 1-



Գուսան Աշոտ



Գուսանի հայրը՝ Հայրապետ Դադայանը



Գուսանի առաջին կինը՝ Համիկը

ին կարգի մրցանակ ստանալը: 1958 թ. անդամագրվում է Հայաստանի գրողների միությանը:

Ապրելով ստեղծագործական լիարյուն կյանքով Աշոտը բացվում է միանգամից: Առանց երկարատև ընդմիջումների ծնվում են նրա երգերը, մտնում ամեն հարկի տակ, թափանցում ամեն անկյուն, հուզում մարդկանց սրտերը՝ հեղինակ-

կին բերելով համընդհանուր ճանաչում: Իրար են հաջորդում գուսանի երգերի ժողովածուները. 1942-ին «Գուսանական երգեր», 1955-ին «Գուսանի սերը» (նոտագրված՝ 1958-ին), 1974 ին «Սիրո կրակներ», 1979-ին «Սրտի նվագներ», 1982-ին «Ծովաստղիկ», 1988-ին «Լեռները կանչում են»:

Գուսան Աշոտը 1967 թվականից հանրապետության ժողովրդական

արտիստ էր: Աշոտը ապրեց մինչեւ խոր ծերություն եւ, իբրեւ ճշմարիտ արվեստագետ, մինչեւ կյանքի վերջը մնաց իր արվեստից անբաժան: Ստեղծագործելը, իբրեւ ապրելու կերպ ու կենսաձեւ, ուղեկցեց նրան մինչեւ կյանքի վերջին օրը... Ամեն օր նրան կարելի էր հանդիպել Երեւանի կամ Գորիսի փողոցներում երգը շուրթերին, բարի ու արդար ժպիտը դեմքին... Կյանքի վերջին տարիներին գուսանը հիմնականում Գորիսում էր, գտնվում էր հարազատ ժողովրդի հետ ամենօրյա շփումների մեջ: Իր աստեղային պահերը մեծ մասամբ ապրել է ծննդավայրում, եւ նրա երգերից շատերը ծնվել են գորիսյան գիշերների խորհրդավոր լռության մեջ: Իսկ ցերեկները գուսանին ամեն օր կարելի էր հանդիպել Մխիթար Սպարապետի անվան հրապարակում, ուսուցչի տան պատուհանի գոգին հենված՝ մարդկանցով շրջապատված, իր նոր ծնվելիք երգի տողերը կամ երաժշտությունը դնդնալիս...

Հիրավի՝ գուսան Աշոտը կենսական կապի մեջ էր իր ծննդավայրի հետ, զանգեզուրյան բնաշխարհի հետ, որտեղից եւ քաղում էր իր երգերի նյութը՝ նեկտարը: Տեղին ենք համարում մեջբերել մի անգամ մեր գրույցի ընթացքում նրա հետեւյալ խոսքը.

– Մեր եւ ծորերը (ծեռքը պարզում է դեպի հին Գորիսը), կիրճերը լիքն են երաժշտությամբ: Ես ոչ միայն լսում եմ այդ երաժշտությունը, այլեւ տեսնում եմ: Ես չեմ ստեղծում, ես ընդամենը քաղում եմ, գրի եմ առնում:

Աշոտն ուներ ստեղծագործական աշխատանքի իր եղանակը: Նա երգի տեքստն ու մեղեդին մշակում էր միաժամանակ: Իր ամեն մի նոր երգ ընթերցում կամ կատարում էր գրասերների շրջանում, անգամ գրի ու գրականության հետ կապ չունեցող մարդկանց մոտ, հաշվի էր առնում բոլոր օգտակար դիտողություններն ու խորհուրդները: Այս ձեւով նա իր երգերը նախքան տպագիր խոսքի վերածվելն ու բեմահարթակներից հնչելը ենթարկում էր ժողովրդի փորձաքննությանը՝ դրանց հավիտենական կյանքի ուղեգիր տալու համար:

Մոտ երկու տասնամյակ հանրապետության գուսանական խորհրդի պատվավոր նախագահն էր:

... 1988-ի դեկտեմբերյան մահաբեր երկրաշարժը շանթահարել էր Հայոց աշխարհը: Դեկտեմբերի 9-ին գուսանին հանդիպեցի Սպարապետի անվան հրապարակում «Գուսանի պատիհան» հենված: Անտվոր հուզված վիճակում էր: Երբ ձեռքը սեղմեցի, զգացի, որ այն բռան մեջ դողում է, իսկ աչքերը լցված էին արցունքով: Նա դիմեց ինձ.

– Այս ի՞նչ եկավ մեր գլխին: Ո՞նց կարելի է դիմանալ այս վշտին... Ո՞նց պիտի տանենք այսքան երեխաների մահը...

Ես չկարողացա մխիթարական խոսք ասել նրան, բայց նաեւ զգացի, որ ժողովրդի գուսանը ժողովրդին պատուհասած աղետը շատ ծանր է տանում: Մեզ պաշարած տխրությունն այնքան խորն էր, որ խոսակցություն ծավալելը անհնարին էր: Բայց ահա գուսանը ծոցագրպանից հանում է նախորդ գիշերը ծնված երգը եւ կարդում:

Դրանից հետո գուսանն ավելի էր տկարացել. զանգատվում էր սրտից, շնչարգելությունից: Տեսնելով վիճակի վատթարացումը՝ նրան փոխադրում են Երեւան՝ բուժումն այնտեղ շարունակելու նպատակով, բայց ապարդյուն... 1989-ի հունվարի 28-ին տապալվում է հայոց գուսանական արվեստի վերջին մեծ կաղնին:

ՆՏԵՐՆԱԿԱՆ ԱՐՔԱՆԻՐ

«Չեքիս քասը
ավանդական
քո հին թասն է,
Սայաթ-Նովա»

ԳՈՒՍԱՆ ԱՇՈՏ



Գրիգոր Նարեկացի



Կոմիդաս



Սայաթ-Նովա



Նաղաշ Յովնաթան
(1661-1722 թթ.)



Զիվանի
(1846-1909 թթ.)



Շերամ
(1857-1938 թթ.)

ԳՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ-ԵՐԱԺՇՐԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՅԱՑՔ

Սրբահույզ երգերի վարպետը

«ԳՈՒՍԱՆԻ ՍԵՐԸ» ԳՐՔԻ ԱՌԱՋԱԲԱՆԸ ԿՐՃԱՏՈՒՄՆԵՐՈՎ

ՍԵՐՈ ԽԱՆՁԱԳՅԱԼ

Իսկական երգն այն է, որ գարունն ավետող առաջին քնքուշ հովի պես աննկատելի շրջում է ամեն տեղ, մտնում ամեն օջախ, հուզում սարերի հովվի սիրտը, ընկերակցում լեռների ընդերքը պեղող հանքագործին, դառնում սիրահար պատանու ուղեկիցը եւ երկար ու երկար ժամանակ չի ընկնում մարդու շուրթերից, նրա հետ է լինում բուռն ուրախության ու վշտի պահին, նրա տանը, հանդում, դազգահի մոտ, ամեն տեղ...

Լավ երգն ապրում է դարեր, փոխանցվում է սերնդից սերունդ ու երբեք չի մեռնում, չի կորչում: Մարդիկ չեն ծանոթանում նրանից, ինչպես չեն ծանոթանում առավոտյան գեփյուռի փսփոցից կամ ծարավ հագեցնող աղբյուրի քչքչոցից: Լավ երգը մարդուն ուղեկցում է նրա օրորոցից մինչև ծերության օրը, մինչև նրա արդար հանգչելու պահը...

Հազարամյակների ընթացքում հայ ժողովուրդը իր հոգու մաքրության, հյուրի առաջ իր սեղան-սուփրան բաց անելու ավանդական սովորության հետ միասին, պահպանել է իր հոգու բազմաձև գանձերը, դրանց հետ նաեւ իր երգը երբեմն խորխոր մարտական, երբեմն քնքուշ ու թախծոտ, բայց ոչ երբեք նվազող ու հուսակոտ: Պատահական չէ, որ ամեն մի նոր լավ երգ հացի պես քաղցր ու համապագորյա է դառնում մեզ համար, ապրում է մեր կյանքում ու կենցաղում, որպես նրա մի անբաժանելի մասը:

Նոր չէ, որ մեր ժողովուրդը ամենուրեք երգում է մեր նոր ժամանակների գուսանական երգի տաղանդավոր վարպետներից մեկի՝ գուսան Աշոտի ստեղծած սրտահույզ երգերից շատերը: Երգում է, երբեմն մոռանալով, որ այդ երգի ստեղծողն իր անբաժան քամաչայով ապրում է իր հետ, իր ժամանակակիցն է:

Քսանական թվականների վերջերին էր, որ տակավին պատանի Աշոտը գուսանական երգի ասպարեզն իջավ: Դեռես կայուն չէր նրա ծայրը, բայց նրա առաջին երգերում երևում էր ասպագա ստեղծագործողը: Նրա մելոդիաները ինքնատիպ էին, հուզիչ ու կենսախիճը: Այնուհետեւ գարնանալիորեն ծաղկեց նրա տաղանդը, եւ նա դարձավ մեր ժողովրդի կողմից սիրված տաղանդավոր գուսանը:

Աշոտի ստեղծագործություններում կա մեր դարաշրջանի շունչը. նրա երգերը ներծծված են պայծառության ու կենսուրախությամբ, մեր կյանքի վեհությամբ: Աշոտը մարդու հուզաբաթավ զգացմունքների երգիչն է, նոր կյանք կառուցող աշխատավորի հույզերի արտահայտիչը երգարվեստի մեջ:

Գուսան Աշոտը, խաշնարածի որդի լինելով, իր մանկությունն անց է կացրել Զանգեզուրի բարձր լեռներում, հո-

վիվների ու խաշնարածների մոտ՝ հովվական հասարակ մաղախն ուսին ու սրինգը ձեռքին: Երբ առաջին անգամ նա իջավ սարերից ու «մարդամեջ» մտավ, լեռնային վճիտ աղբյուրի պես հնչեց նրա առաջին երգը.

Ոչ մի ծաղիկ քո բուրմունքը չունի.
Ոչ մի մայր քեզ պես գոգավ չի ծնի...

Ինքնատիպ, թարմ ու կյանքով լի այդ երգն իսկույն անցավ շուրթից - շուրթ, տարածվեց Հայաստանի գյուղերում ու քաղաքներում, Անդրկովկասում, Միջին Ասիայում ու Միուբյան այլ վայրերում: Այդ երգը թարգմանվեց շատ լեզուներով ու երգվեց...


Հետո իրար հաջորդեցին գուսան Աշոտի «Զանգեզուրի բարի ծնունդ», «Կյանք տուր, կյանք առ», «Իմ Հայաստան» եւ այլ բազմաթիվ երգեր, որոնք եւս տարածվեցին գարնանալի արագությամբ: Երգերի հետ ժողովրդի կայն խավերի մեջ հայտնի դարձավ նաեւ գուսանի անունը: Այդ օրվանից էլ դաշտերում ու գործարաններում, ժողովրդական տոների ու ուրախությունների ժամանակ, հայկական հին ու նոր երգերի հետ հնչում են նաեւ Աշոտի սրտաբուխ երգերը:

Գուսան Աշոտի երգերի հաջողության պատճառն այն է, որ դրանք նորություններ էին մեր ժամանակակից գուսանական արվեստի մեջ իրենց թեմատիկայով ու մեղեդիներով: Նրա հենց առաջին երգում զգացվում էր խոր ժողովրդայնություն, քնքուշ լիրիկա, բանաստեղծական խոսքի ու մեղեդիի ինքնատիպություն ու թարմություն:

Նրա երաժշտական արվեստի սկիզբը գտնվում է հայկական ժողովրդական երգի գունեղ ակունքներում, մեր գուսանական տաղերի բազմադարյան շտեմարանում: Աշոտի ստեղծած երաժշտության մեջ մենք տեսնում ենք մեր հին ու նոր ժողովրդական երգերի երանգները, մեծ Սայաթ Նովայի, Նաղաշ Յովնաթանի, Զիվանու, Շերամի երգարվեստի հմայքները: Աղբյուր ունենալով այս ամենը, Աշոտը, սակայն չմնաց նրանց սովերի տակ կորած, առանց սեփական գույնի ու ստվերի. նա ստեղծեց իրենը, միայն իրեն հատուկ մեղեդին, իրեն բնորոշ երաժշտական ու պոետական հնարները:

Թեեւ նա ստեղծագործել սկսել է քսանականներին, սակայն որպես իսկական գուսան բանաստեղծ, Աշոտը ձեւավորվեց Հայրենական պատերազմի տարիներին: Թիկունքում ստեղծած նրա երգերը «գեփյուռի թեուկ» հասնում էին ուղեւորական տաղերի, եւ այնտեղ՝ գետնատների ու խրամատների մեջ հնչում էին նրա երգերը: Կարծես այդ երգերը կրակագիծ էին բերել հայրենի լեռնաշխարհի բուրմունքը, գեփյուռի համբույրը, մեր սեւաչյա աղջիկների սիրո թրթիռը:

Իր երաժշտական ու բանաստեղծական խառնվածքով Աշոտը լիրիկ գուսան է: Նրա լիրիկան ամսիջական է ու տպավորիչ: Սեր դեպի աշխատավոր մարդը, հայրենիքը, բնությունը,



ազնիվ աշխատանքը, դեպի ժողովուրդների սրբազան եղբայրությունը-ահա գուսան Աշոտի արվեստի հիմնական մտղվները:

Իր ծնող հայ ժողովրդի իղծերն է արտահայտում գուսանը, երբ անուր կերպով կանգնում է խաղաղության դիրքերում եւ ցանկանում, որ միշտ «Ամմար արեւը խաղաղության».

Լույս տա, փայլի ողջ աշխարհին...»:

Գուսան Աշոտի «Էն սարերը», «Աշուղ են», «Ձեփյուռը փչեց», «Ոչ մի խորշակ», «Ուր է», «Ժողովրդին», «Սայաթ Նովա», «Պախրա» եւ այլ շատ գործեր դարձել են մեր ժողովրդի սիրած երգերից, որովհետեւ այդ երգերի մեջ կա ժողովրդի կյանքը, աշխատանքը, նրա հույզերն ու ձգտումները:

Աշոտը շատ լավ է հասկանում, որ այդ բոլորի համար նա ամենից առաջ պարտական է իր հայրենիքին ու մայր ժողովրդին:

«Երբ գովքն են անում մեր հայրենիքի, Խոսում է սրտիս ամեն մի լարը...»-

երգում է նա: Հայրենիքի գովքն անելիս խոսում է նրա սրտի ամեն մի լարը, երգում է իր ամբողջ Էուսթյամբ, սրտահույզ ու երախտապարտ ծայրով: Եվ պատահական չէ, որ նա գուսան լինելու համար իրեն պարտական է համարում իր հայրենիքին, ժողովրդին:

«Հորովելիդ ծայրն են առել,
Քեզնով գուսան Աշոտ դառել»:

Աշոտը սիրում է երգել իր շրջապատի մարդկանց, մորը, քրոջը, զավակին, եղբորը, բոլորի մեջ լավ ու ազնիվը տեսնելով: Այդ երգերից մեկն է «Մոր սերը» հուզաբաթավ երգը: Չնայած գուսանը ձեռք է զարկել բազմիցս երգված թեմայի, բայց գտել է արտահայտչական նոր ձևեր, բանաստեղծական գունեղ պատկերներ, նոր մեղեդիներ մայրական անսահման սերը գովելու համար:

«Լույսի նման, հույսի նման կենաստու,
Կյանքի նման թանկագին է մոր սերը,
Որդու համար միշտ էլ

պայծառ լուսատու,
Հավերժական, սրտագին է
մոր սերը: ➔4

ԿԱՐԾԻՔ ՈՒ ԳՆԱՀԱՏԱՆՔ

Լեռնային արծիվ
Զանգեզուրի բարի ծնունդ

Գուսան Աշոտին այսպես է անվանել մեր հայրենակից, կոմպոզիտոր Աշոտ Սաթյանը:

Գուսանի մասին մեր մեծերից ու նշանավորներից շատերն են կարծիք հայտնել, գնահատանքի ու երախտի խոսքեր ասել: Ահա դրանցից մի քանիսը:

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ

1938-ին էր, երբ լսեցի երիտասարդ Աշուղ Աշոտի երգը... Լսեցի, հուզվեցի եւ ասացի. Փառք Աստծուն... Այուրյաց Գողթանի ոգին կենդանացել է...

ՀԱՍՈ ՍԱՀՅԱՆ

Աշոտը եւ մեծ բանաստեղծ է, եւ մեծ երգահան: Նրա ստեղծագործությունը պարզ է, մաքուր, ձգող ու կանչող, ապրող ու հավերժող՝ ինչպես մեր Որոտնա լեռները ծյունագանգուր:

ԿԱՐԱՊԵՏ ՄԻՏԱԼ

ամերիկահայ գրող

Գուսան Աշոտի երգերը մեզ են հայրենիքից խաբրիկ մը բերող երաններու, որ հեռու ավերում կցրին մեր վիշտը, մոռացնել կուտան մեր պանդուխտ ըլլալու մասին...

ՎԱՐԴԳԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Վճիտ ու մարդկային են գուսանի երգերը: Ինչո՞ւ. ամենից առաջ նրա երգերը մարդկային հոգու թրթիռների արձագանք են: «Էն սարերը», «Մոր սերը», «Պախրա», «Հուշարձան», «Ուր է», «Ծառերը ծաղկում են», «Սարի սիրուն յար»... Յուրաքանչյուր ընթերցող իր մտքում երեւի կշարունակի ցուցակը իր սիրած, իր հոգուն մտերիմ երգերով... Ինչպիսի խոր մարդկային հույզեր են փայլվում այս երգերի մեջ, որքան նրանք գեղեցիկ են: Եվ դա բնական է. գուսանը դրանք չի հորինել գրասեղանի առաջ նստած, դրանք մեծ մասամբ կյանքի արձագանքներ են: Բայց ամեն անգամ, երբ խնդրում են պատմել իր սիրած երգերի ծնունդյան պատմությունը, գուսանը շփոթվում է, լռում: Նա այնքան մոտիկ է կյանքին, մարդկանց, որ դժվարանում է որոշել՝ ե՞րբ հուշեց կյանքը ու երբ ծնվեց երգը: Իսկ երբ փորձում է վերլուծել, ստացվում են պարզ, անպաճույճ գրույցներ մարդկային ուրախության ու թախծի մասին:

ԿՈՒՍԱՆՏԻՆ ՕՐԲԵԼՅԱՆ

ԽՍՅՄ ժողովրդական արտիստ

Երկար ժամանակ երազում էի հանդիպել ժամանակակից գուսանական արվեստի մեծ երախտավորին:

1967 թվականն էր: Երեւանում նշվում էր մեծ երգահանի 60-ամյակը: Հանդիսության ժամանակ մեր խումբը կատարեց նրա «Ուլ, դու գուսան», «Ծառերը ծաղկում են» երգերը, որոնք սիրով ընդունվեցին: Երգերը կատարում էր երգչուհի Բելա Դարբինյանը: Հանդիսության ավարտից հետո գուսանը եկավ կուլիսների հետեւ եւ կամեցավ հանդիպել մեզ: Հանդիպումը ջերմ էր, անմոռանալի: Դրանից հետո սկիզբ առավ մեր քնքուշ, անխախտ բարեկամությունը:

ԼԵՎՈՆ ԳԱԹԵՅԱՆ

Ֆրանսահայ երգիչ

Իմ կուռքը Սայաթ-Նովան է՝ մեծ բոլոր ժամանակների մեջ... Բայց հոգեզմայլ եւ ժողովրդական են նաեւ մեծ սիրահար գուսան Աշոտի երգերը, որոնք ես սիրով կերգեմ Սփյուռքի շատ երկրներում մեջ...

«ԱՊՐԻԼ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՍՍԱԹԵՐՈՅ, ԱՄՆ, ԼՈՍ-ԱՆՋԵԼԵՍ, 1983 թ.

Գուսաններ մեզ մոտ շատ են եղել ու կան անվանումով, հա-

յազգի՝ կոչումով: Աշոտն ուրիշ է: Զարմանալի մի պատմությանով նա մեզ բերեց հայ երգի իրական մեղեդին ոչ գունազարդված, ոչ սահմանված, ոչ գուսանական: Զանգեզուրի ավանդապատ տարածքում հանկարծակի վեր խոյացավ այդ լեռների պես պարզ եւ այդ լեռների պես վեհ գուսանի կերպարը, որը թախանձագին ու սիրակարոտ ժայռերի վերան չէր, այլ նրանց ապառաժը:

ԳՈՒՐԳԵՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

բանաստեղծ, երգահան, Արցախ

Գուսան Աշոտին ժողովուրդն իրապես կոչել է 20-րդ դարի Սայաթ-Նովա:

Կարող են լինել լավ գուսաններ, երգահաններ, բայց գուսան Աշոտն այն միակ ժողովրդական երգահաններից է, որոնք լեռնային ջրի պես գուլալ երգերի հետ միաժամանակ ստեղծել են հրաշալի պոեզիա:

Գուսան Աշոտը որքան տաղանդավոր երգահան էր, նույնքան էլ տաղանդավոր բանաստեղծ էր:

Զգիտեմ, ո՞ր երկինքն է նրան ավելի շատ շուք արել, բայց համոզված եմ, որ նա իրեն հավասարաչափ նաեւ Արցախի գավակ էր համարում: Նա որքան Զանգեզուրին է, այնքան էլ Արցախին է:

ԿՈՒՍԱՆՏԻՆ ՕՐԲԵԼՅԱՆ

ԽՍՅՄ ժողովրդական արտիստ

Երկար ժամանակ երազում էի հանդիպել ժամանակակից գուսանական արվեստի մեծ երախտավորին:

1967 թվականն էր: Երեւանում նշվում էր մեծ երգահանի 60-ամյակը: Հանդիսության ժամանակ մեր խումբը կատարեց նրա «Ուլ, դու գուսան», «Ծառերը ծաղկում են» երգերը, որոնք սիրով ընդունվեցին: Երգերը կատարում էր երգչուհի Բելա Դարբինյանը: Հանդիսության ավարտից հետո գուսանը եկավ կուլիսների հետեւ եւ կամեցավ հանդիպել մեզ: Հանդիպումը ջերմ էր, անմոռանալի: Դրանից հետո սկիզբ առավ մեր քնքուշ, անխախտ բարեկամությունը:

ԳՈՒՍԱՆ ՇԱՀԵՆ

Առանց Աշոտի բավական աղքատ կլինեի մեր գուսանական արվեստը: Նա եկավ, առավել սեր ու ջերմություն ավելացրեց գուսանական երգերին: Մենք նրանից շատ բան ունենք սովորելու...

ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աշուղական արվեստը մոռացված չէ եւ չի կարող կորչել

ՀԱՎԱՍՏԻԱՅՆՈՒՄ ԵՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ



Գորիս, Գուսան Աշուղի անվան մշակույթի կենտրոնը

Այն հարցին, թե ինչ տեղ ու դեր է տրվում աշուղական արվեստին իրենց նախարարությունում մշակութային քաղաքականություն իրականացնելիս, ՀՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարության արվեստի եւ ժողովրդական ստեղծագործության բաժնի պետ Ռազմիկ Աբրահամյանը պատասխանեց, թե արվեստի բոլոր տեսակներն էլ ծառայում են մշակութային քաղաքականության իրականացմանը, այդ թվում եւ աշուղական արվեստը: «Այն առանձնահատուկ մի երեւոյթ չէ, շատ հնուց արեւելքից եկած արվեստ է, որը միայն մերը չէ, զուտ հայկական ծնունդ չէ: Բայց դեռ մեր հին միջնադարյան աշուղներից սկսած՝ մեծ գաղափարներով, տարածում ունեցած, եկավ-հասավ մեր օրերը»:

Նա հայտնեց, որ մշակու-

թային քաղաքականություն իրականացնելիս՝ յուրաքանչյուր արվեստի տարատեսակի համապատասխան աջակցություն է ցուցաբերվում այդ արվեստի զարգացման, տարածման, քարոզչության համար: Կոնկրետ աշուղական արվեստին, ըստ պարոն Աբրահամյանի, ուրույն տեղ է տրվում. ինչպե՞ս է դա արտահայտվում: «Եթե հասարակական կազմակերպությունների, ժողովրդական, աշուղական ոչ պետական կամ պետական երաժշտական կոլեկտիվների կողմից որոշակի ծրագրի է առաջարկվում, որն իր ստեղծագործությունները, թվանդանային իր նպատակով մշակութային քաղաքականության իրականացմանն աջակցող է, ինչ-որ տեղ կարելի է, կառավարությունն ընդառաջում է այդ ծրագրին, եւ իրականացվում է առանձին ֆինանսական աջակցությամբ»:

Նախարարության ուղղակի կապն այդ արվեստի հետ նախ պայմանավորված է «ժողովրդական եւ աշուղական երգի պետական հանույթի» գործունեությամբ, որի երգացանկում տեղ են գտնում մեր աշուղների ստեղծագործությունները: Բացի դրանից, գործում է նաեւ նորաստեղծ «ժողովրդական նվագարանների պետական նվագախումբը» (1-1.5 տարի է պետական է: Նվագախումբը 10 տարվա պատմություն ունի, կառավարությունն ընդառաջել է եւ պետական կարգավիճակ տվել): Աշակցություն են ցույց տվել նաեւ «Սայաթ-Նովայի» աշուղական երգի ոչ պետական հանույթին (ղեկավար՝ Թովմաս Պողոսյան):

Ամեն տարի այս կամ այն գուսանի նշանակալի տարերայրի առիթով հոբելյանական հանձնաժողովներ են ստեղծվում, եւ այդ հանձնա-

ժողովների որոշմամբ պետական աջակցությամբ միջոցառումներ են անցկացվում: «2007թ. ունենք Շահեմի, Աշուղի հոբելյանները: Գուսան Աշուղի 100-ամյակը նախարարության նախաձեռնությամբ պիտի տոնվի: Կատեղծենք հանձնաժողով, որը որոշում կկայացնի միջոցառումների վերաբերյալ: Դրանց շարքը, կարծում եմ, կգա կիսանի Սյունիք, Գորիս: Այս տարի կնշվի Արաքսյա Գյուլզարյանի հոբելյանը, որը աշուղական երգի փառահեղ կատարողներից էր»:

Ռ.Աբրահամյանը պատմեց, որ այս տարվանից, Թովմաս Պողոսյանի առաջարկությամբ եւ աջակցությամբ, Թիֆլիսում անցկացվող Վարդատունը կազմակերպվելու է նաեւ Երեւանում: «2007թ. բյուջեի մեջ մտել է արդեն «Վարդատուն» փառատունը, որը տեղի է ունենալու Սայաթ-Նովայի հուշարձանի տարածքում: Բացօթյա մեծ արարողություն է լինելու. ցանկացանք՝ ինչպես որ տոնում են Թիֆլիսում, այդպես էլ դրա հաջորդ կիրակի տոնն այստեղ անցկացվի»:

Նաեւ «Հայ աշուղների միությունն» էր ցանկացել փառատուն նախաձեռնել: Նախարարությունը դիմել է այդ միությանը, որ 2008 թվականի համար առաջարկ ներկայացնի աշուղական երգի մեծ փառատուն կամ մրցույթ անցկացնելու համար: «Միգուցե այդ փառատունը նպաստի աշուղական արվեստի վերագարթնփն»,- ասում է պարոն Աբրահամյանը եւ հավելում, որ այսօր նաեւ ժամանակակից աշուղներն են իրենց նոր երգերով մասնակցում երգի մրցույթների, փառատոների, տեղեր գրավում: «Այնպես որ, աշուղական արվեստն աննկատ չի մնում...»:

ԱՐՄԻՆԵ ՎԱԿԱՏԱՆ

ԳՈՒՄԱՍԻ ԵՐԳԱՇԽԱՐՀՈՒՄ ՆԱՐԵԿ

Նարեկն եկավ, վանք մտավ, միտքը տիեզերքն առավ, Կարկաչն առած ջրերի, Ապրումները հուզաբով, կրակ դարձավ չմարող, Շառաչն առած ջրվեժի, Աղաղակեց ողբաձայն, տառապանքներն անսահման Տեմչանքն առած աշխարհի:

Նա քանքարեց տաճարեց, Արեւի պես ճառագեց, Չցանաճը նա ցանեց.

Հազար մտքից թել առավ, արեւներից ուժ առավ, Խոսքի բռնվեց աստծո հետ Նարեկ աստվածն առաջին, ասես հաղթեց արարչին, Չուլվեց կյանքին առիակետ, Միտքը վառեց մոմի պես, լույսեր սփռեց ծովի պես, Ողբաղողանց երգ երկնեց Մի կայծ դառավ կրակի, Մասունք դարձավ նա կյանքի, Աշխարհի թողեց դարերին: Հազար սրտի սիրով նա, գրիչ առավ եղեգնյա, Լույս մտքերով ծովացավ, Զննց ելնող մի ծիլը, ցողի արծաթ կաթիլը, Հազար ոսկե բառ դարձավ, Հոգին հեծած վշտերին Վանա ծովի ծափերին, Վանա ծիծաղն ո՞ր ա նցավ:

Հայ աշխարհում սրբացավ, Հոգին արշալույս դարձավ, Հուրն իր տվեց սրտերին:

ԿՈՍԻՏԱՍ

Քո ոսկեհուր քնարն առած աշխարհի կեկար, մեծ Կոմիտաս, Հավերժական զանձ հանեցիր հայոց երկրից, մեծ Կոմիտաս, Հայոց երկիրը դու ճառագած՝ իմաստության բյուր աստղերով, Աստվածային քո փառքը շատ, դու երգահան, մեծ Կոմիտաս:

Դու մարգարտյա երգի աղբյուր, հավերժական խոսուն քնար, Հայոց վշտի ու խնդրության երգով լցրիր աշխարհն արար, Դու լեռներից մեծն ամենա, լեռների սուրբ, սուրբ վեհափառ Ինչքան տվիր, դեռ ավելին հետո տարար, մեծ Կոմիտաս:

Հովի նման երգը թռավ-զնաց հասավ աշխարհներին, Մի երգիդ մեջ քանի աշխարհ՝ նրանք բուրմունք ծաղիկների, Հույզի արցունք կիջնի հոգուդ ով հանդիպի պանդուխտներիդ, Հավքի լեզվով, ծաղկի շնչով դու երգեցիր, մեծ Կոմիտաս:

Աշտուն ասաց, արար աշխարհի հիացրիր երգերով մեր, Քանի անգամ հողագնդում արեւ դարձրիր երգերը մեր, Աշխարհ առած երգի օվկիան փայլեցրիր անունը մեր, Թոնրի կրակ, օջախի լույս, հոգի անմար, մեծ Կոմիտաս:

ԳՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ-ԵՐԱՇՇՏԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՅԱԶԲ

Սրբահույզ երգերի վարպետը

➔3 Ջան, անուշ մայրիկ, ջան, բնորոշ մայրիկ, Քո լեզվին մատաղ, քո լեզուն մեղմիկ»:

Կամ ահա ընդհանուր, այսպես ասած, «Գուսանական-փիլիսոփայական» մի երգ՝ «Ջեյ աշխարհ» ը: Եթե մեր հին գուսանները, հին իրավակարգերի դեմ տրտնջալով «աշխարհը փուչ» էին համարում, մեր օրերի գուսանը բարձր ծայրով բացականչում է. «Ո՞վ է ասում, թե փուչ ես դու, մորս նման թանկ ես, աշխարհ»:

Աշտուն իր ստեղծագործական բոլոր թելերով կապված է ժողովրդի հետ, ծառայում է նրան, իր լիրիկական, խրատական ու հայրենասիրական երգերով օգնում է մեր ժողովրդին՝ անցնելու իր ճանապարհը: Նա լավ է գիտակցում, որ ինքը կոչված է ազնվորեն ծառայելու հայրենիքին ու ժողովրդին, ուստի եւ իր մի երգի մեջ ինքն իրեն դիմելով ասում է. «Ժողովրդիդ սիրո համար վառիր քեզ, Խալխին նոքար անմահ Սայաթ-Նովի պես...»:

Իսկական արվեստի այդ սկզբունքին հավատարիմ մնալով, նա իր սրտի ողջ ավյունը, իր ստեղծագործական ջանքերը չի խնայում ժողովրդի համար: Եվ քանի որ, ինչպես վերը շեշտեցինք, նրա ստեղծագործական աղբյուրը ժողովրդից է, նրա լիրիկական հերոսը ժողովուրդն է, ուստի գուսան Աշուղի ստեղծա-

գործությունը մտել է ժողովրդի կենցաղի ու աշխատանքի մեջ:

Նրա երգերից շատերը դարձել են մեր հանրապետության երգչական անսամբլների ռեպերտուարների անբաժան մասնիկները, կատարվում են նաեւ բազմաթիվ այլ լեզուներով:

Մենք նպատակ չունենք այս կարճ խոսքի մեջ վերլուծելու երաժիշտ Աշուղի եւ բանաստեղծ Աշուղի ամբողջ ստեղծագործությունը, դա դուրս է նաեւ այս ժողովածուի նպատակից, սակայն ուզում ենք նշել, որ գուսան Աշուղի երգերին հատուկ են մեր գուսանական կլասիկայի բնորոշ գծերը՝ երաժշտության ու խոսքի խոր ներդաշնակությունը, խոսքի բանաստեղծական ուժն ու թովիչ մեղրդիան: Եթե դրան ավելացնենք նաեւ կատարման վարպետությունը, ապա լիովին հասկանալի կդառնա գուսան Աշուղի երգի հմայքի ու ժողովրդայնության գաղտնիքը:

Ինքնու կերպով սովորելով բազմաթիվ գործիքներ նվագելը եւ ապա գրագիտություն ձեռք բերելով, Աշուղը համառոտեւ ուսումնասիրել է հայ կլասիկ գուսանների, հատկապես Սայաթ-Նովայի եւ Ջիվանու խոշոր ժառանգությունը, օգտագործել է խոսքի ու երաժշտության բնագավառում կուտակված նախորդների փորձը, հմտորեն օգտագործել է ժողով-

րական երաժշտության պայծառ երանգները՝ պարզությունը, անկեղծությունը եւ մտերիմ ջերմությունը:

Նա իր երաժշտական առաջին «կրթությունը» ստացել է հովիվների շրջանում. «Ես հիշում եմ մեր սարերի լանջերը, Աղբյուրների սառ ջրերի կանչերը:

Ես հիշում եմ մորս ձայնը սարերում, Ոչխարների մակաղելը քարերում, Հովիվների սրինգների ձայնն անուշ՝ Մարին նստած թուխ ամպերի հովերում...»:

Նրան իրապուրել են Ջանգեզուրի գուսանների երգերը: Նրան առանձնապես հմայել է ժամանակի հայտնի աշուղ Աթան (1852-1942), որից առաջին անգամ լսել է հայ եւ ադրբեջանական գուսանական աշուղական երգեր, ծանոթացել հայկական գուսանական երգի կառուցման առանձնահատկություններին եւ ձեւերին:

Պատերազմական շրջանի երգերը գուսան Աշուղը պակեց իր հանրահայտ «Աղբյուր - հուշարձան» երգով, որը իրավամբ երգի մի պեանչելի կոթող է: Ահա նրանից մի քառատող. «Նրանց արդար հոգիներից Բիտում է պաղ, գուլալ աղբյուր, Ամեն անգամ ջուր խմելիս, Շրթունքներով կտանք համբույր...»:

Եկավ երագած օրը՝ հաղթանակը: Աշուղը սկսեց մասնակցել ժողովրդի վերքերի ապաքինմանը: Նա ստեղծեց սիրո, աշխատանքի

նոր երգեր, որտեղ ցույց տվեց մեր ժողովրդի հոգու ուժն ու ամրությունը, հուսանիզմն ու հայրենասիրությունը: Պատերազմը վերջացավ, այլևս ոչ մի նոր ձեռք չի մոտենա մեր երկրին, ոչ մի ծաղիկ չի տորոպի օտար բռնակալի ոտքի տակ: Այս միտքը լավ է արտահայտել նա իր մի երգում-

«Ոչ մի խորշակ բուրաստանս չի մտնի, Ոչ մի քամի վարդիս թուփը չի պոկի: Ոչ մի ծաղիկ չի թառամի, չի թռչնի, Քանի որ այն իմ մայր հողումն է բացված, Իմ հայրենի բարդիներով պարսպված»:

Գուսան Աշուղի ստեղծագործության եական գիծը պայծառ լավատեսությունն է կյանքի, մարդու ապագայի նկատմամբ: Նրա երգերի մեջ արտահայտված է անսահման սերը դեպի մարդն ու հայրենիքը, դեպի եղբայրական ժողովուրդները, քնքշություն դեպի մերձավորն ու հարազատը, անկեղծ սքանչացում բնության ու աշխարհի գեղեցկությունների նկատմամբ: Երբեմն նրա երգերի մեջ զգացվում են նաեւ թախծի շեշտեր, բայց այդ թախծի թեթեւ երանգները ծնվում են իր հայրենի աշխարհի նկատմամբ տածած բացառիկ սիրուց: Գուսանն ուզում է հավերժ ապրել իր գեղեցիկ երկրի ու «ծնող մեծ ժողովրդի հետ»:

Լավ է ասել գուսան Աշուղն իր մասին. «Կյանքի հովտում թե մի ծաղիկ ցանես դու, Երգի ծովին թե մի աղբյուր տանես դու, Ո՞վ իմ գուսան, ամունդ ամանս կանես դու...»:

ՏԱՄՄՅԱՎԵՆԵՐ

Համագործակցության եւ փոխլրացման ճանապարհ

Այդպես կարելի է բնութագրել գուսան Աշոտի մեկտեղված ճանապարհը Հայկական ժողովրդական երգի-պարի պետական վաստակավոր անսամբլի (գեղարվեստական դեկավար) ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, ԽՍՀՄ պետական մրցանակի դափնեկիր, պրոֆեսոր Թաթուլ Ալթունյան) եւ Հայաստանի ռադիոյի եւ հեռուստատեսության Արամ Մերանգույանի անվան ժողգործիքների վաստակավոր անսամբլի (գեղարվեստական դեկավար՝ Մանվել Բեգլարյան) հետ:



Արամ Մերանգույանի անվան ժողգործիքների վաստակավոր անսամբլ (1970-ական թվականներ)



Հայկական ժողովրդական երգի-պարի պետական վաստակավոր անսամբլ (1970-ական թվականներ)

Գուսանի երգերի նոտագրման, շտկման, հղկման, գործիքավորման, նվագախմբային համակարգման գործում անփոխարինելի դեր խաղացին հայ կոմպոզիտորական մտքի ժամանակի ճանաչված անունները՝ Գրիգոր Հախինյան, Մանվել Բեգլարյան, Ստեփան Ջրբաշյան, Արմեն Մանդակունյան, Թաթուլ Ալթունյան, Արամ Մերանգույան: Առհասարակ, գուսանի արվեստն ըստ պատշաճի են գնահատել ժամանակի առաջատար երաժիշտները:




ԱՐԱՄ ԱՄԵՐԱՆԳՈՒՅԱՆ




ԷՐԱՌՐ ԿՈՒՅԱՆ




ՄԱՆՎԵԼ ԲԵԳԼԱՐՅԱՆ



ՍՏԵՓԱՆ ՋՐԲԱՇՅԱՆ



ԳՐԻԳՈՐ ՀԱԽԻՆՅԱՆ



ԽԱՉԱՏՈՒՐ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԳՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ-ԵՐԱԺՇՏԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՅԱՅՔ

Սիրո կարոպի երգը

«ԾՈՎԱՍՏՈՂԻԿՍ» ԳՐՔԻ ԱՌԱՋԱԲԱՆԸ

ՍԵՎԱԿ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

գրականագետ-քննադատ, բանասիրական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր

Հայ բազմադարյան գուսանական արվեստի գեղեցիկ շառավիղներից է գուսան Աշոտը, արդի հայ գուսանական երգի մեծանուն վարպետներից մեկը: Նրա անունը վաղուց դուրս է եկել Հայաստանի սահմաններից, տասնամյակներ շարունակ հնչում է ամենուր սրտահույզ երգեր պարգևելով աշխարհին, խնդրություն ու խաղաղություն բերելով մարդկանց հոգիներին:

Գուսան Աշոտի արվեստում խտացվել են հայ ժողովրդի գուսանական-աշուղական մշակույթի լավագույն ավանդույթները: Իր խառնվածքով, նախասիրություններով Սայաթ-Նովայի ու Շերամի հետնորդն է: Ժամանակի հետ ստեղծել է իր ինքնատիպ աշխարհը՝ ուրույն ոճով, մեղեդիական ու բանաստեղծական յուրահատուկ նկարագրով:

«Ծովաստղիկս» ժողովածուն հեղինակի ստեղծագործական որոնումների ու այդ որոնումներում հասունության նոր որակ քննելու իմաստությունն է հաստատելու առհավատյան է: Գուսան Աշոտի ամեն մի գիրք իր առանձնահատկություններն ունի, երգածայնային ու պոետական խոս-

քի իր արժանիքներն ու նրբությունները: Ամենից առաջ նշենք, որ սա հեղինակի կյանքում երաժշտական-ոճական նոր ետապ է, Աշոտի երգերը ներառում են արեւմտահայ երգաոճային ինչ-ինչ տարրեր, մի համգամանք, որն անպայման ավելի հարուստ, ավելի բազմազան է դարձնում նրա երգարվեստը:

Այնուհետեւ, ամբողջ ժողովածուում տիրապետող է թեմատիկ մի պլան՝ մարդուն թեւեր տվող, հոգին ազնվացնող սերը: Գուսանի նախորդ ժողովածուներում նույնպես սերը քիչ բաժին չէր կազմում: Սակայն այստեղ այդ թեման գրեթե միահեծան իշխանություն ունի եւ իրենով պայմանավորում է ամբողջ գրքի գաղափարական-բովանդակային ուղղվածությունը: Ավելի քան հարյուր քսան երգի գերակշիռ մեծամասնությունը հյուսված է

Սիրամրմունջ իմ խաղերից, Սիրամրմունջ իմ տաղերից...

Հյուսված է մարդկային վսեմ ու առիքնող այն զգացման վրա, առանց որի, գուսանի համոզմամբ, անիմաստ է մարդկային գոյությունը:

Աշոտը եւ բանաստեղծ է, եւ երգահան: Սա ինքնին յուրաքանչյուր գուսանի բնութագրական կողմն է: Իսկ Աշոտը տաղանդաշատ գուսան է:

Նրա մեղեդիների եւ բանաստեղծական տեքստերի ներդաշնակությունն այնպիսին է, որ բացառում է ուրիշ մի գուգակցություն. Աշոտի ներաշխարհում մեղեդին ու բանաստեղծական տեքստը ծնվում են միաժամանակ, խմորվում են մույն հույզերից ու ապրումներից, եւ դժվար է պատկերացնել մեկը առանց մյուսի: Ջարմանալի ձեւով նրա կրկնեղերը միշտ փոփոխվում են, բովանդակային նոր հնչերանգներ ստանում: Սա նույնպես թարմություն է գուսանի արվեստում:

Այս ամենով հանդերձ՝ Աշոտի երգերի լայն մասսայականության, ավելացնենք նաեւ՝ երկարակեցության գաղտնիքը պետք է որոնել դրանց ժողովրդական ակունքների մեջ: Գուսանը շատ բան է քաղել ժողովրդից, սովորում է նրանից ու նրան է վերադարձնում համով ու հոտով այնպիսի երգեր, որոնք դեռ երկար ու երկար պիտի ուղեկցեն ժողովրդին:

Սիրո երգի ճշմարիտ վարպետ է գուսան Աշոտը: Սիրո կարոտը նրա երգերի ամենից ուժեղ, ամենից կենսական լարն է: Ու այդ կարոտը մաքրության շողերով է օժիված, ազնիվ ու տեւական զգացմունքների բխվածք է:

Աշոտի սերը հաճախ անկեղծ մենախոսության է փոխարկվում՝ հոգեբանական ամենատարբեր նրբերանգներով: Ապա՝ մերթնդմերթ ինքնախոստովանությունների գեղարվեստական հնարանքով է

արտահայտում սիրո մեծ կարոտը:

Անգամ այդպիսի ներանձնացումի պահերին նրա սերը յուրովի իմաստավորվում է պայծառ խոի-խրատներով ու իմաստուն խորհուրդներով, եւ գուսանը դառնում է սիրո ազնիվ խրատաբանն ու ճշմարիտ ուղեցույցը:

Եւ հյուրընկալ աշխարհում օրհնված բարի հյուր լինենք, Բացվող վարդի շուրթերին մի կաթիլ գով ջուր լինենք, Տաճարներին սրբացած՝ գոնե մի մոմ լույս լինենք, Երկնի ճամփան բացողը սերն ու սիրտն են, ով ճամփորդ:

Ու սրան հաջորդում է կրկնեղերով խրատ-խորհուրդի մեղեդիական այլ տոնայնությանը.

Հոգուն բարձունք տանողը, Ամուր կամար կապողը, Չարի ճամփան փակողը Սերն ու սիրտն են,

ով ճամփորդ:

Այս ոգով են հղացված «Արտերը», «Ջավակս», «Եղնիկները», «Արտի կտակ», «Իմ պապը» եւ ուրիշ շատ երգեր: Իսկ «Կախարդանք», «Վարդ աղբյուր», «Ծովաստղիկս», «Խարույկներ վառեն» եւ այլն, հոգու եւ սրտի գուլալ երգեր են, մի-մի գլուխգործոցներ: Դրանք՝ գուսանի բառերով՝ «մասունքներ են կյանքի» եւ նրանց հեղինակի սիրո երգի վարպետ Աշոտի անունը իրենց հրեղեն թեւերին կտանեն զալիք սերունդներին:

1982թ.

ԳՈՒԲԱՆԻ ԵՐԳԱՇՆԱԲՈՒՄ

ԽՈՍՔ ՀԱՎԵՐԺՈՒԹՅԱՆ

Պանթեոնները լուս հոգուս չեն ձգտում, Ա՛խ, ես ծնվել եմ ձորերի ծոցում.

Ես պիտի ապրեմ Սյունյաց սարերի մով բարձունքներում, Ուր բույր շռայլով ծաղկունք է բացված աղբյուրի ցողքում,

Ես պիտի խոսեմ վեհ գագաթների մով կապույտներում, Ուր լույս հեղեղով լուսինն է ելնում ձորեր կամրջում:

Հավքը հագարան սուրբ սեր է կանչում, Ուր հավքի կանչում եղնիկն է մնջում, Սիրո անրջում:

Պալատները մեծ հոգուս չեն ձգում, Չէ՞ որ օձվել եմ երգի հնոցում.

Ես պիտի խորհեմ լալազար լանջում առանց ննջելու, Ուր իմ իղձերն են սիրո թեւ առած գով ու հովերում, Հավատով ապրեմ եղեգան փողի լուստ ձայներում, Լեռների ծնունդ իմ հոգին վառեմ անհաս բարձունքում:

Ուր հայոց բախտի աստղն է շողում, Հավերժի գրկում լույսով օրհներգում, Հույսով օրհներգում:

Հոգիներն անսեր, ա՛խ, ինձ են ձգտում, Ես աչք եմ բացել արեւի ծոցում.

Հոգով շափաղել երկնալարերով եղեմ ծաղկոցում, Ուր հովն է իջնում, մի պահ քուն առնում գառ վարժի ծոցում,

Անցորդին սրտիս ձայնիկն եմ տվել խոհերով լեզուն, Մարերն էլ առան Աշոտիս սրտի սերն ու հավատը:

Որ սուրբ հավատը հավերժ շողշողա Երկնի ցողքերում, անգամ ծովերի Գոհար խորքերում:

ԳՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ-ԵՐԱԺՇՏԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՅԱՅՔ



ԳՐԱՍԱՆ ԱՇՈՒՄ

«ՍԻՐՈ ԿՐԱԿՆԵՐ» ԳՐՔԻ ԱՌԱՋԱԲԱՆ

ԳՐՔԻՆ ՀՈՒՍԵՓՆԱԸ

բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ավելի քան հիսուն տարի է, ինչ ստեղծագործում է տաղանդաշատ գուսան Աշոտը: Եվ այդ տարիների ընթացքում ինչքան բան է արել նա: Այդ ամենի մեջ դրսևորվում է գուսանի վառ և ինքնատիպ քանքարը, որն իր հարուստ ամհատականության մեջ ներծուլում է հրաշալի կերպով ժողովրդի բանաստեղծին և երգահանին: Իր ստեղծագործական թելմամվոր գործունեության ընթացքում գուսան Աշոտը հասել է այնպիսի բարձր բանաստեղծական-երաժշտական արդյունքների ու նվաճումների, որոնց գեղարվեստական նշանակությունն ու դերը հնարավոր է, որ մինչև վերջ չի բացահայտված և պետք է գրավի գրադատների և երաժշտագետների ուշադրությունը: Գուսան Աշոտը իր ստեղծագործության մեջ դիմում է գուսանական արվեստի ավանդական ծեսերին: Դրա հետ միաժամանակ նրա երգերը այնքան ինքնուրույն են, խորհմաստ ու հարագատ ժողովրդին, որ թվում է, թե նրա ամեն մի պատկերը, ամեն մի երգը բխել է ժողովրդի սրտից: Գուսան Աշոտի «Սիրո կրակներ» գրքի մեջ կան մի քանի առաջատար, գլխավոր թեմատիկ գծեր, որոնց մեջ գերիշխողը և հարատևողը սիրո փառաբանությունն է: Նրա ամեն մի գործի մեջ ակնհայտորեն զգացվում է բանաստեղծի անկրկնելի գրելատճը. անկեղծությունը, հոգեբանական ճշմարտացիությունը, ռոմանտիկական հուզմունքալիությունը, հարուստ պատկերավորությունը: Ժողովրդայնություն և հայրենասիրություն՝ ահա նրա ստեղծա-

գործությունների հիմնաքարը: «Սիրո կրակներ» երգերի ժողովածուն ընթերցողը նորից է համոզվում գուսանի ստեղծագործության զարմանալի քնարական հարստության, նոր ստեղծագործական գյուտեր անելու ունակության մեջ, հիանում նրա պատկերային շքեղ փայլատակունտներով և ռիթմական զարգացման բնականությամբ: Բնութագրելով գուսանի նոր գիրքը, նրա գաղափարական-գեղարվեստական արժանիքները, պետք է առաջին հերթին նշել, որ այն խորապես լավատեսական է, լայնաշունչ, կյանքով, հոգեկան ձգտումներով առեցնում: Այն հագեցած է մարդու և բնության գեղեցկության ռոմանտիկական հիացմունքով: Գուսանին խորք չեն նաեւ դրամատիկ, հուզալիտիկ պահերը, որոնք բանաստեղծորեն կոնկրետացված են, արտահայտում են բազմապիսի մտորումներ ու տրամադրություններ: Գուսանի նոր գիրք-երգարանը, որ պարունակում է հարյուրից ավելի երգեր, աչքի է ընկնում ռեալիստական ճշմարտացիությամբ, հոգեկան խորությամբ և բազմակողմանիորեն են ներկայացնում հեղինակի տաղանդի ուժն ու փայլը: Այս ամենը ինքնատիպ է, խիզախ, ներշնչունով լեցուն: Դրանցից առաջնակարգ տեղ են գրավում «Յագար օրհնանք», «Այուրյաց սարեր», «Օջախում», «Սերս վանքում Տաթևի», «Սիրահարը», «Երագ», «Անցար այգու նայելով» «Դարաբաղի գարունը», «Օտռերը ծաղկում են», «Ծննդավայր», «Իմ օրորան», «Մուրղուզա եղնիկ», «Մանուշակի ծորը», «Գարուն է», «Մուրք մայրեր», «Էն օրեր», և այլ երգեր, որոնք բացառիկ հետաքրքրություն են ներկայացնում: Այդ երգերում առավել պարզորոշ են արտահայտված տաղանդավոր գուսանի պոե-

տական գրելակերպի առանձնահատկությունները, ստեղծագործական ներշնչանքի անմիջականությունը, կենսահագեցվածությունը: Ժողովածուի այս և մյուս երգերը վկայում են հեղինակի ստեղծագործական հետաքրքրությունների բազմազանության և բանաստեղծական վառ երեւակայության մասին: «Պիտ երգեն» երգը անկասկած պատկանում է հայ գուսանական արվեստի լավագույն նվաճումների թվին և նրա կենտրոնական պատկերը առեցնում է մեծ կենսունակությամբ, պարզ ու որոշակի պոետական մտածողությամբ, լայն երգեցիկ շնչով: Գուսանի յուրահատուկ հատկորեն վառ պատկերները այնպիսի արտահայտչական ուժ ունեն, որ գրավում են անմիջականորեն ընթերցողների և լսողների միտքն ու զգացմունքները: Այդ գեղարվեստական առանձնահատկությունները կարելի է տեսնել նաեւ «Օջախում» երգի մեջ, որը ռճական տեսակետից կատարյալ է: Ամբողջը տրված է հույզի և խոհի պոետական խորը միասնության մեջ, սեղմ և խտացված ձևով: Ամեն ինչ այստեղ միաձուլվել է, և անցումները տեղի են ունենում ներդաշնակորեն: Կրքոտ և գեղեցիկ է հնչում «Գարուն է» երգը, որը պատիվ է բերում հեղինակին: Այո, այդպիսի ստեղծագործությունները պահանջում են բանաստեղծական վառ տաղանդ և գուսանական բարձր տեխնիկա՝ Սիրահարը երկնի հրով թե չվառվի, ի՞նչ սիրահար, Գիշերն անքուն ցողերի հետ թե չարտասվի, ի՞նչ սիրահար, Հավք ու հովից յարի մասին հարցնումը չանի, ի՞նչ սիրահար, Սիրով վառված ձորերն ընկած յար չկանչի, ի՞նչ սիրահար: Էն հագարան աստղերը թե չշողշողան, երկինքն ի՞նչ է, Օրերն առանց լուսաբացի, կրակների զարթոնքն ի՞նչ է, Սիրողը թե սիրամորմոք տաղեր չասի, սիրելն ի՞նչ է, Սերը գաղտնի մոմի նման թե չվառվի, ի՞նչ սիրահար: Ինչպես երեսուն է հենց վերնագրից, այս ժողովածուի հիմնական առանցքը սերն է՝ հարուստ պատկերային հրաշալի զուգորդումներով, քնարական զեղումներով, անսպառ կենսասիրությամբ: Իբրև դրա օրինակ կարելի է նշել «Դարպաս աղբյուր» գողտրիկ պատկերը, որը գրավում է ընթերցողին տպավորության ամբողջականությամբ, բանաստեղծական պատկերների կենսալիությամբ ու կոնկրետությամբ: Հեղինակն այստեղ իրեն չի կաշկանդում կամերային լիրիկայի նեղ շրջանակներով: Նրա երգը առաջացնում է հուզիչ զգացմունքներ և մտորումներ: Գուսանը այս երգում նույնպես դրսևորում է իրեն իբրև հասուն արվեստագետ, խոր և ողջախոհ վարպետ: Օրն անցնում է, մի կուն ջուր տուր, ելնեմ գնամ, Նա իմ սրտում, որտեղ մթնի՝ էնտեղ մնամ, Թե որ գտնեմ, ամեն տարի այցի կգամ, Ձուրդ մարդուն արժիվ դարձնող, Դարպաս աղբյուր: Օխտը սարի ծալքերից բխող ջուր ես, Հայոց հին-հին հեթիաթներ պատմող ջուր ես, Աշտուն ասաց՝ սիրուս հեթիաթն ասող ջուր ես, Անտառի հետ հավերժ խոսող, Դարպաս աղբյուր: Գուսան Աշոտի երգերը լի են լույսով ու բերկրանքով, անմիջական ընկալման թարմությամբ ու լիրիկական քնքշությամբ: Դա իր արտահայտությունն է գտնում և՛ հյուսթեղ կոլորիտի, և՛ հոգեբանական հարուստ նրբերանգների ու պարզության մեջ: Ճշմարիտ գեղարվեստական հաճույք են պատճառում նաեւ «Փերինները չբացան», «Անցար այգու նայելով», «Լուսնի շողով փերիս գա» խորապես սրտառու գործերը, որոնք տարբերվում են հոգեբանական խորությամբ, առիմբոնոլ անկեղծությամբ և ներշնչվածությամբ: Հիմնական և ամենից ավելի գնահատելի արժեքը նրա մի շարք երգերի դրամատիկ շունչն ու լարվածությունն է, հակադիր պատկերների և մոտիվների վարպետ զուգորդումները, որոնք

մեկ անգամ կարդացողի մոտ այլևս չեն մոռացվում: Այս առումով նշանավոր է «Այուրյաց սարերը», որը լի է վառ քնարականությամբ ու դրամատիկ խոր ապրումներով: Հագար ու մի երգում գոված սար եմ տեսել, Ձեր կարտոը միշտ եմ քաշել, Այուրյաց սարեր, Աես սիրով մեծ Նաղաշի ձեռքն է հասել, Ծաղիկներդ գույն-գույն նախշել, Այուրյաց սարեր, Ինձ մոտ սրտով ձեր գիրկն առեք, Այուրյաց սարեր, Յայլաներիդ ծովիս սահող երամ դառած, Իմ նագելին երամի մեջ երագ դառած: Նույնչափ պոետիկ ու սրտաբուխ է հնչում «Էն գարնան» վերտառությունը կրող երգը, որտեղ պարզությունն ու բնականությունը, հոգեկան պոռթկումներն ու ձգտումները արտահայտված են խորապես ճշմարտահայտի ու ցայտուն: Գուսան Աշոտի երգերում այնքան մեծագույն սեր, ջերմություն, մաքրություն և այնքան մարդկայնություն կա, որ ընթերցողը չի կարող չզգալ նրա պոեզիայի բարոյական գեղեցկության ուժն ու հոգեւոր հարստությունը: Նա իր՝ արվեստով շատ մոտ է ու հարագատ երգի արքա Սայաթ-Նովային և հոջակավոր գուսաններ Ջիվանուն ու Շերամին: Եվ նրա երգերը դասականների հետ հոգեհարազատ դարձնող գուսանի հոգու բացառիկ վեհությունն է, ճշմարտասիրությունը և բազմազան ժանրերի ու ձևերի օգտագործումը: Եվ իզուր չէ, որ ժողովուրդը նրան անվանում է՝ մեր օրերի Սայաթ-Նովա: Առանձնապես գնահատելի է հուզական արտահայտչականությունը, պատկերային գունագեղությունը, ժողովրդական մտածողության լիարժեքությունն ու վճիտությունը: Նրա պոեզիային հատուկ է և՛ նուրբ, և՛ առնական կրքոտության ակներեւ գծերը, որոնք նոր գրքում ավելի ընդգծված են: Երկնից իջած աստղափունջ ես ձորերի մեջ, Եոխասպատկեր քո երեկոն ցուրքերի մեջ, Հայոց բախտի պատմությունն ես ժայռերի մեջ, Սեզ ժայռերդ քեզնով հպարտ, իմ օրորան, Կուռ Լեռներդ քեզնով անպարտ, իմ օրորան: Իմ սերը քո ծաղկանց մեջ է, միշտ կվառվի, իմ օրորան, Սիրող սրտի հուրն անջեղ է, միշտ կվառվի, իմ օրորան: Գուսանը առանձնակի ուշադրություն է դարձնում տաղաչափությանը: Նրա երգերում զգացվում է գուսանական տաղաչափական ձևերի ոչ միայն կատարյալ իմացություն, այլև՝ ինքնատիպ վարպետություն, տեմբրային հագեցվածություն և ինտոնացիոն հարստություն: Հիանալի ճաշակը և երաժշտական նուրբ զգացողությունը գուսանին օգնում են ամբերի լուծելու ստեղծագործական բարդ խնդիրները, «Սիրո կրակներ» ժողովածուն մեկ անգամ ևս ապացուցում է, թե որքան թելմամվոր է եղել գուսանի գրիչը այս տարիների ընթացքում: Այս ժողովածուի մի շարք երգերը գարդարում են ոչ միայն անհատ կատարողների, այլև երաժշտական կոլեկտիվների երգացանկերը: Այդ երգերը մեծ մասապակա- նություն են վայելում, պատկերավոր են, համեմված ժողովրդական հարուստ բառ ու բանով: Վերընթեռնելով ժողովածուն, նորից համոզվում ես, որ գուսան Աշոտը տաղանդավոր բանաստեղծականությամբ և եղանակներով: Դրա ցայտուն ապացույցն է «Սիրո կրակներ» ժողովածուն, որտեղ ժողովրդի ոգին առմիշտ դրոշմված է բանաստեղծական հոյակերտ համադրություններով, պատկերային կուռ, ամբողջական ձևերով:

ՄԵՐՈՐՅԱ ՀԱՅԱՅԵ ԳՈՒՍԱՆԻ ԱՏԵՂՃԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Ժողովրդական, գուսանական երգը հոգու երգ է

ՎԱՅՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆԻ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՐՏԻՍՏՈՒՅԻ ՕՖԵԼՅԱ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ ՀԵՏ



Գուսան Աշոտի փորելիցների նշումը իսկական երգի փոնի էր վերածվում Գորիսում: Հարկապես շուրջը նշվեցին ծննդյան 75 և 80-ամյակները: Գուսանի ծննդյան 90-ամյակը, արդեն առանց իրեն, հավուր պարզաճի նշվեց և Գորիսում, և Երեւանում՝ «Արամ Խաչատրյան» մեծ համերգասրահում

Տիկին Համբարձում-Յան, ինչպե՞ս եք հիշում գուսան Աշոտին, մի հիշարժան դեպք պատմե՞ք ձեր հանդիպումներից:

– Պետական ռադիոյի մեներգչուհի էի, մի անգամ հեռաձայնեց, խնդրեց, որ հանդիպեմք եւ զամբեզուրյան, ինձ համար հաճելի առոգանությամբ, ավելացրեց. «մի լավ երգ ըմ կիրալ»: Ասացի. «Գուսան, շատ եմ սիրում ձեր երգերը, համեցե՞ք կհանդիպեմք»: Եկավ եւ ներկայացրեց «Օջախում» երգը: Չայնագրելու հնարավորություն ունեինք, ծայնագրեցինք, որ հետագայում նուտագրվի: Այդ երգը մեծ ճանաչում գտավ, սիրվեց ոչ միայն մեր երկրում, այլեւ նրա սահմաններից դուրս: Գուսանի երգերից տասը-տասնհինգը կատարել եմ,

մեկը մյուսից լավ եմ: Ընդհանրապես նրա երգերի նաեւ առաջին կատարողն եմ եղել, այն էլ ինչպիսի երգերի. «Ախպեր», «Վարդ աղբյուր», «Մանկություն», «Հով սարեր», «Ըղձաքար», «Սուրբ մայրեր»: Շատ-շատ երգեր եմ ստեղծվում թե գուսանների, թե ժամանակակից ստեղծագործողների կողմից: Կան երգեր, որ վաղ եմ իջնում բեմից եւ հեռանում ժողովրդի սրտից: Կարծում եմ գուսանի երգերը կմնան ժողովրդի հիշողության մեջ եւ կերպվեն, ինչպես այսօր երգում են Սայաթ-Նովա, Շերան, Կոմիտաս, մեր ժողովրդական երգերը:

– **Իսկ ինչ-որ բանով նրա երգերը տարբերվում են մյուս գուսանների երգերից:**

– Իհարկե տարբերվում են. նրա երգերը քնարական են, նաեւ լայնաշունչ երգեր

ունի, ռիթմիկ երգեր էլ եւ ստեղծել: Աշոտի երգերը հոգու երգեր են: Մասնավորապես մի երգ ունի՝ «Պախրա» վերնագրով. «Պախրան իրեն տեսել էր ջրի հայելում, Սարերի անուշ բույրն էր վայելում, Արդյոք խնձում էր, թե՞ համբուրում, Իր տեսքով տարված գուցե հարբում էր»: Պատկերացնում եք, թե ինչ համեմատություն է: Երգելուց առաջ ինձ միշտ հրապուրել են նրա երգերի տեսքերը, հրաշալի բանաստեղծ երգում Աշոտը: Ինձ խոստովանել է, որ սկզբից տեսնում է ստեղծում, եւ նոր միայն բանաստեղծական խոսքից ծնվում են հնչյունները՝ նույնքան զարմանահրաշ պատկերներով ու գույներով:

– **Վարպետին գուսան անվանե՞լն է ճիշտ, թե աշուղ:**

– Ոչ գուսանը, ոչ աշուղը,

ստեղծագործող էր Աշոտը: Գուսանը կամ աշուղը տերմին է, ստեղծագործող էր նա, բանաստեղծ: Ինձ համար, ժողովրդի համար գուսան Աշոտը ստեղծագործող մեկն էր, որ մի անգամ թերթերից մեկում նրա մասին գրեցին. «մեր այսօրվա Սայաթ-Նովան»: Դա երգչուհուս կարծիքն էր:

– **Իսկ այսօրվա երիտասարդ կատարողները կարողանում են հնչեցնել գուսան Աշոտ, ինչպես հարկն է, դուք աշակերտներ ունե՞ք:**

– Ես հնչեցրել եմ տասնյակ տարիներ, եւ երբ ինձ հարց են տալիս՝ ինչո՞ւ աշակերտներ չունեք կամ բուհում չէք դասավանդում, պատասխանում եմ՝ դասավանդել եմ ոչ մի տարի, այլ հիսուն տարի. հեռուստատեսությունը, ռադիոն այն դարոցն են, որ համալսա- ➔8

ՌՈՒԲԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ. «Գուսանի երգն այնքան հողեղեն է եւ այնքան է ձուլված հայ մարդու էութանը, որ բոլոր ժամանակներում հնչելի կլինի»

Ճանաչված երգիչ, հանրապետության վաստակավոր արտիստ Ռուբեն Մաթեւոսյանը ոչ միայն գուսան Աշոտի երգերը հնչեցրել է հանրապետությունում եւ աշխարհի տարբեր ծագերում, այլեւ բարեկամական կապերով կապված է եղել նրա հետ, քանզի հարեւաններ են եղել: Հայաստանի հանրային ռադիոյի եւ հեռուստատեսության Արամ Մերանգուլյանի անվան ժողգործիքների վաստակավոր անսամբլի գեղարվեստական ղեկավարի հետ մեր զրույցը, բնականաբար, ներառեց ոչ միայն գուսանի արվեստը, այլեւ որոշ դրվագներ նրա երկրային կյանքից:

Լրանում է գուսան Աշոտի ծննդյան 100-ամյա հոբելյանը եւ մեր թերթը որոշել է մի ամբողջական համար նվիրել վարպետի արվեստին:

– Ուրախ եմ, որ գուսան Աշոտի 100-ամյակը հիշատակելի է, մասնավորապես ինձ, Հավասին եւ Շահենը ըստ իս հայ գուսանական արվեստի մոտիվները եղան: Թեպետ նրանցից հետո հրապարակ իջան ուրիշ գուսաններ, սակայն ինձ համար դասական գուսանների շարքը նրանցով է ավարտում դարը: Գուսանական արվեստի կարկառուն ներկայացուցիչ է Աշոտը: 1961-1962 թվականներին գիտեմ նրան իբրեւ հեղինակ եւ հիշողության մեջ անցրեցի: Դա ինձ հայելի էր: Ծատ գնահատել նրա երգերը, բայց կուզեի մի երգի պատմություն հիշել: Նա գրել էր «Հով գիշեր, մով գիշեր» երգը, որ Վաղարշակ Սահակյանն էր կատարում: Ես էլ երգեցի՝ ինչպես ընկալում էի: Երբ լսեց կատարումս, ասաց, թե տեսնում եմ ինձ համար փոխում է: «Չեմ մոռանա գուսան Աշոտ անունը, Չմեռ չունի, միշտ դալար է գարունը»-ի փոխարեն ասաց կերպով: «Չես մոռանա գուսան Աշոտ անունս, Չմեռ չունի, միշտ դալար է գարունս», այսինքն ստացվում է այնպես, որ գուսան Աշոտն իմ անունը չէր մոռանալու:

Երաժշտական այդ կոլեկտիվում երգում էին ժողովրդական երգի լավագույն կատարողները: Խոսքը, անշուշտ, մեր անսամբլի մենակատարների մասին է: Նա նաեւ երգեր էր գրում, որոնք Թաթուլ Ալթունյանի ղեկավարած երգի-պարի պետական անսամբլում հնչեցնում էին մեր ժողովրդի շատ սիրելի երգիչ-երգչուհիները՝ Լուսիկ Քոչյան, Վաղարշակ Մամիկոնյան, Աստղիկ Քամայան, Վարդուհի Խաչատրյան եւ ուրիշներ:

Ես ոչ միայն սիրով եմ հիշում այդ հրաշք մարդուն, նրա կերպարը, նրա երգերը, այլեւ մինչեւ օրս էլ դրանք երգում եմ: Երբեք չեմ մոռանա «Հայրիկ» երգը, որն առաջին անգամ շատ սիրով երգեցի 1967 թվականը, երբ հայկական հեռուստատեսությամբ տոնվում էր վարպետի 50-ամյակը, եւ հեռուստատեսության էին նկերվել այն բոլոր երգիչ-երգչուհիները, ովքեր պատիվ են ունեցել գուսան Աշոտի արվեստը ներկայացնել: Այդ երգիչները հայ երգարվեստի ամենամեծերն էին՝ ԽՍՀՄ ժողովրդական արտիստուհի Տաթևիկ Սազանդարյան, Ավագ Պետրոսյան, Շարա Տայան, Օֆելյա Համբարձումյան, Հովհաննես Բաղայան, Ռուբեն Մաթեւոսյան, օպերային թատրոնի երգչուհի Ելենա Վարդանյան: Համերգը կազմակերպել էր Հայաստանի հեռուստատեսությունը, բնականաբար մասնակցում էր ժողգործիքների վաստակավոր անսամբլը, որ այն տարիներին Արամ Մերանգուլյանն էր ղեկավարում: Մի արվեստագետ, որ մեծ ավանդ ունի գուսան Աշոտի երգերի պրոպագանդան գործում: Այդ երգերը վերջնական հնչեղության եւ տեսքի են կազմակերպում շնորհիվ: Գուսանը երբ նոր երգ էր հորինում, նախեւ առաջ ներկայացնում էր մեր անսամբլին, որովհետեւ այդ տարիներին

Մայուն հերք թողեց

Վահրամ Օրբելյանի հարցազրույցը «Սայաթ-Նովա» աշուղական երգի անսամբլի գեղարվեստական ղեկավար, Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր, ՀՀ վաստակավոր արտիստ Թովմաս Պողոսյանի հետ

Ուրում եմ մեկ-երկու նախադասությամբ ներկայացնե՞ք աշուղ Աշոտի տեղն ու դերը հայ երգարվեստի մեջ:

– Հայ աշուղական արվեստը հայ ազգային երգի ամենահարուստ գանձարաններից է եւ մեր ժողովրդին տվել է բազմաթիվ երեւելի դեմքեր: Իսկ 20-րդ դարն առանձնացավ մեծ եռյակով՝ Հավասի, Աշոտ, Շահեն, երեք մեծուքյուն, որոնք եկան եւ մնայուն հետք թողեցին հայ աշուղական պատմության մեջ: Աշուղ Աշոտը իր սքանչելի երգերով սիրվեց, ճանաչվեց, տարածվեց նրա երգը հայի յուրաքանչյուր օջախում, քանզի մեր երգիչներից շատերը դարձան

նրա արվեստի լավագույն կատարողները: Նաեւ նրանց շնորհիվ աշուղ Աշոտի երգերը դարձան մեր ժողովրդի սեփականությունը, հարստացրին հայ երգի գանձարանը:

– **Ինչպե՞ս եք հիշում ձեր առաջին հանդիպումը աշուղի հետ:**

– Ընդամենը 17 տարեկան պատանի էի, երբ ավարտելով Թբիլիսիի 110-րդ միջնակարգ դպրոցը, եկա Երեւան, եւ իմ հեռավոր բարեկամներից մեկը, որն անձամբ ճանաչում էր վարպետին, ինձ առաջնորդեց նրա տուն: Վարպետը համբերատար լսեց պատմումս երգը: Կատարեցի նրա «Հով սարեր, մով սարեր» եւ «Ո՞ր է» երգերը: Մանա-

վանդ երկրորդ երգը լսելով, զարմացած հարցրեց. «Բախ, որտե՞ղ ես սովորել այդ երգերը»: Պատասխանեցի իմ ուսուցիչը եղել է Թբիլիսիի հայկական ռադիոյի ժամը, որի հաղորդումների մեջ պարբերաբար հնչում էին մեր մեծ երգիչների կատարումները, մեր ժողովրդական եւ աշուղական երգերը՝ Օֆելյա Համբարձումյան, Հովհաննես Բաղայան, Լուսիկ Քոչյան, Արաբսյա Գյուլգադյան եւ ուրիշներ, ինչպես նաեւ Թբիլիսիի հայ երգիչների կատարումներն էին հնչում: Ահա այդ կատարումներից մեր ինչպե՞ս սիրեցի մեր հայկական ազնվատոհմիկ երգը: Վարպետն ինձ հավանեց, պարբերաբար կանչում էր իր մոտ՝ նոր երգեր ուսուցանելու: Օրերից մի օր ինձ ասաց, որ հանրապետության ժողովրդական արտիստ Վաղարշակ Սահակյանը մրցույթ է



անցկացնում «Սայաթ-Նովայի» անվան աշուղական երգի վաստակավոր անսամբլը երիտասարդ նոր անուններով համալրելու նպատակով: Այնքան էի սիրում վարպետին, որ անգամ չէի ուզում մտածել, թե նրանից կարող եմ բաժանվել եւ երգելու գնալ մի ուրիշ տեղ: Բայց նա ինձ կշտամբեց, թե դեռ շատ փոքր եմ եւ չեմ գիտակցում ինչ ասել է «Սայաթ-Նովա» աշուղական երգի պետական վաստակավոր անսամբլ: Անձամբ ինքը տարավ այդ ➔8

ՄԵՐՈՐՅԱ ՀԱՅԱՅՔ ԳՈՒՍԱՆԻ ԱՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Մայուն հերթ թողեց

➔ Երկրային մասնակցելու, պիտի ասեմ, շատ պատկառելի հանձնախումբ կար, եւ 17 տարեկանում Աստծո կամոք ընդգրկվեցի Վարդաշակ Սահակյանի ղեկավարությամբ գործող աշուղական արվեստի վաստակավոր անսամբլի կազմում: Սակայն դրանից հետո էլ իմ եւ աշուղ Աշոտի բարեկամությունը չընդհատվեց եւ շարունակվեց մինչեւ նրա կյանքի վերջին օրերը: Իր վերջին երգը, որ նա ինձ ուսուցանեց, «Երազունս թեւեր առած» երգն էր՝ անմահ մի ստեղծագործություն: Վարպետն ինձ բացատրություններ էր տալիս. «Այս մեղեդու մեջ որոշ կետեր հիշեցնում են հայ հոգեւորական երգի որոշ պատահիկներ»: Եւ ինքն էլ այդ պատահիկները երգելով ասում էր. «Բալաս, այս կտորը հիշեցնում է մեր «Տեր ողորմյան»»:

– **Դուք նաեւ դասավանդում եք երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում, ի՞նչ տեղ են գրավում աշուղ Աշոտի ստեղծագործությունները ուսումնական ծրագրում:**

– Արդեն 10-րդ տարին է, ինչ երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում մտցվել է «Հայ աշուղական արվեստ» առարկան, որը դասավանդելու վաստակավոր եւ պատիվը ինձ տրվեց: Մենք ուսումնասիրում ենք աշուղական արվեստի պատմությունը, աշուղական գրականությունը եւ աշուղական արվեստի տեսությունը: Բազմաթիվ մեծերի կողքին ուսուցանվում է աշուղ Աշոտի արվեստը, նա ներկայացվում է իբրեւ ինքնատիպ, հոգեթու մեղեդիներով եւ չափազանց բովանդակալից տեքստերով սիրային երգերի հեղինակ:

– **Նաեւ աշուղական արվեստի դպրոցի ղեկավարն եք, հակիրճ ներկայացրեք դրա գործունեությունը:**

– Այո, աշուղական արվեստի դպրոցի հիմնադիր ղեկավարն եմ, որը ստեղծել ենք 1997 թվականին: Դպրոցը կրում է հայ ազգային աշուղական դպրոցի հիմնադիր մեծն Ջիվանու անունը: Նպատակը մեկն է՝ մեր կուտակած գիտելիքները, երգեցողության հմտությունները, աշուղական արվեստի կանոնները փոխանցել այսօրվա սերունդին, որ ապահովվեն կապը անցյալի եւ վաղվա միջեւ: Պատրաստենք մեր մեծ վարպետներին արժանի փոխարինողներ:

– **Ինչպե՞ս եք նշելու մեծ աշուղի 100-ամյակը:**

– «Սայաթ-Նովա» անսամբլը պարբերաբար անդրադառնում է մեծ աշուղների հորեյաններին եւ այս տարի անպայման անսամբլը հանդես կգա մի ամբողջական ծրագրով «Արամ Խաչատրյան» մեծ համերգասրահում, որ մեր ամենապատկառելի համերգասրահն է, նշելով Աշոտի փառապանծ 100-ամյա հորեյանը:

– **Նաեւ մի հանգամանք ծշտենք՝ գուսան, թե աշուղ, ո՞րն է ձիշտ մեր ճանաչված Աշոտ Դադայանի պարագայում:**

– Աշուղ Աշոտի ստեղծագործությունների մեջ գուսան բառը չէր օգտագործվում, մինչեւ որ պետության ղեկավարներից մեկը (խոսքը խորհրդային տարիների մասին է. խմբ.), որ ընդամենը գյուղատնտես էր մասնագիտությամբ, հրահանգ տվեց, որ գու-

սանը հայերեն է, աշուղը՝ թուրքերեն, գուսան գործածեք: Եվ ցավալին այն է, որ ոչ մի արհեստավարժ արվեստաբան ռիսկ չարեց ընդդիմանալու նրա դիւետանտությանը: Հավանաբար ստալինյան տարիների մթնոլորտն էր պատճառը, եւ մեր աշուղներն արհեստականորեն սկսեցին իրենք իրենց կոչել գուսան. մինչդեռ աշուղ Աշոտի բազմաթիվ հրատարակված ստեղծագործությունները մեր աչքի առաջ են. «Ինձ ասում են, աշուղ Աշոտ, յարդ ո՞ր է, ես ասում եմ՝ նա իմ սրտում վառվող հուր է» եւ այլն: Եվ ես զարմանում եմ մեր նախնական գրույցի ընթացքում բացատրել եմ, եւ դուք էլ շարունակ գուսան Աշոտ եք ասում եւ խորապես համոզված եմ, որ Աշոտի 100-ամյա հորեյանին նվիրված ձեր թերթի մեջ աշուղ բառը գործածված է լինելու միայն այս հարցազրույցի մեջ: Ուզում եմ ասել, որ մենք գիտության ժողովուրդ ենք, հարուստ պատմություն, հարուստ մշակույթ ունեցող ժողովուրդ, եւ մեզ վայել չէ գիտության եւ մշակույթի մեջ սիրողական մակարդակ դրսեւորելը, դիւետանտի վերաբերմունքը: Գուսանական արվեստը մեր հնագույն մշակութային շերտն է, որ ունի երկուսից-երեք հազար տարվա պատմություն: Աշուղական արվեստը 5 հարյուր տարվա պատմություն ունի, տարբերակներն նրան ենք բերում-մոտեցնում 6 հազար տարվա մշակույթը եւ առաջանում է անհարկի մի խառնաշփոթ, թե ինչ է գուսանը, ինչ է աշուղը: Տարբերակ է ինչու Սայաթ-Նովան, Ջիվանին, Շիրինը աշուղներ էին, եւ ահա Աշոտը, Շահենը, Հավասին գուսաններ են: Ինչու՞: Չէ՞ որ նրանք Սայաթ-Նովայի, Շիրինի, Շերամի հետնորդներն են: Էլ չխոսելով այն մասին, որ վերջիններիս էլ են երբեմն գուսան անվանում, մի տերմին, որ այդ մարդիկ չեն կիրառել իրենց ստեղծագործությունների մեջ: Դա նույնն է, որ այսօր Ջիվանուն, Սայաթ-Նովային անվանենք կոմպոզիտոր: Ձավեշտական է չէ՞ այս անենք: Իսկ գուսան տերմինը շրջանառության մեջ դնող կուսակցական ֆունկցիոները չի գիտակցել, որ եւ գուսանը, եւ աշուղը փոխառություններ են, գուսանը՝ պահպանվելից՝ հին պարսկերենից, աշուղը՝ արաբերենից: Այնպես որ թուրքերենն այստեղ տեղ ու դեր չունի: Պետք չէ ճղճիմ մտածողությամբ վերաբերվել մեր մշակույթի այն փառավոր էջին, որ աշուղական արվեստն է:

– **Պարոն Պողոսյան, դուք դասավանդելով կոնսերվատորիայում, ղեկավարելով աշուղական երգի անսամբլը, նախելառաջ երաժիշտ կատարող եք: Աշուղ Աշոտի երգերից ո՞րն է ձեզ սրտամոտ, հոգեհարազատ: Ո՞րն եք ավելի հաճույքով երգում:**

– Աշոտն այն բացառիկ հեղինակներից է, որի երգերից դժվար է մեկ-երկուսն առանձնացնել, նրա երգերն ինձ չափազանց սրտամոտ ու սիրելի են, բայց այս պահին «Սայաթ-Նովա» անսամբլում ես կատարում եմ «Հայոց ձորեր» երգը, որն անսահման սիրում եմ: Դա նրա վարուց չինչած երգերից է, որ այսօրվա սերնդի համար հնչում է առաջին անգամ: Այն կատարվել է երեք-չորս տասնամյակ առաջ: Վարպետը դեռ այն տարիներից արդ երգն ուսուցանելիս ինձ ցուցումներ էր տալիս: Ահա ինչու է սրտամոտ:

ՌՈՒԲԵՆ ՄԱԹՎՈՍՅԱՆ. «ԳՈՒՍԱՆԻ ԵՐԳՆ ԱՅՆՔԱՆ ԽՈՂԵՂԵՆ Է ԵՎ ԱՅՆՔԱՆ Է ՃՈՒՎԱԾ ԽԱՅ ՄԱՐԴՈՒ ԷՆՈՒԹՅԱՆՆԸ, ՈՐ ԲՈՂՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԻՆՉԵՂԻ ԿԼԻՆԻ»



➔ դարյանի, Շարա Տալանի, Ավագ Պետրոսյանի մահ կատարողների երգացանկ: Նրանք սիրով էին երգում գուսանի երգերը եւ գնահատում գուսան Աշոտ երեւույթը: Հպարտություն է Ձանգե-

զուր աշխարհի համար եւ Հայաստան աշխարհի համար, որ 20-րդ դարի երկրորդ կեսում ունեցավ մի մարդ, որն իր ողջ էությանը մեղեդի էր: Քանի հարյուր երգ է գրել, կարելու չէ, կարելուրն այն է, որ նրա գրած երգերից ոչ մեկը չի ծերացել:

– **Կառանձնացնե՞ք նրա երգերից որեւէ մեկը:**

– Եթե ինձ հարցնեն՝ վարպետի երգերի երգը որն է, կասեի՝ «Գուսանն էն է», այն որ մեկն ասես՝ «Օջախում», «Հայրիկ», «Օլոր-մոլոր» կամ ինչպես կարելի է չհիշել «Մարի սիրուն յարը» կամ «Սյունյաց սարերը», կամ թե չէ՝ «Լուր տվեք» կամ «Ծով աստղիկս»: Այդպիսի երգ չկա, որ պարզապես երգ լինի: Բայց նաեւ երգը՝ երգ, կատարողից էլ է շատ բան կախված, նախելառաջ երգի երկարակետությունը, ասել է թե՛ նրա կյանքը: Թե որքանով երգչին կհաջողվի այն տանել դեպի ժողովուրդը: Իսկ վերջինս այնքան սիրեց նրա երգը, որ այսօր անկարելի է պատկերացնել որեւէ տոնախմբություն, խմջույթ, համերգային ծրագիր, որում ընդգրկված

չլինի գուսան Աշոտի երգը: Նա մեր ժամանակների անհրաժեշտություններից մեկն է եղել:

– **Շատերն այն կարծիքն են, որ նա իրեն աշուղ է կոչել, գուսանը հետո է կպել նրա անվանը:**

– Ես չեմ ցանկանում տերմինների հետեւից ընկնել եւ դա թողնում եմ նրանց, ովքեր սիրում են տերմինների շուրջ բանավեճեր ծավալել: Ինձ հետաքրքիր չէ, թե ինչ անուն են տալիս: Ինձ համար նա գուսան Աշոտ է, թե՛ կուղ միայն Դադայան ասեն, գիտեմ դա գուսան Աշոտի մասին է: Իսկ աշուղ են ասում, թե՛ գուսան, դա կարելու չէ: Բայց այդ ժամին կատարելապես տիրապետող մարդը պետք է որ տիրապետեր չորս մասնագիտության բանաստեղծ, երգահան, կատարող եւ երգիչ: Ինքը քանանա էր նվագում, ինչ գուսան, եթե չտիրապետեր որեւէ ժողովրդական գործիքի, երգելն էլ, երգում էր՝ որքան կարողանում էր: Դրա համար կային Մերանգուլյան եւ Ալբունյան, որ կարող էին գրանցել այնպես, ինչպես անհրաժեշտ էր: Բայց բոլոր

Ժողովրդական, գուսանական երգը հոգու երգ է

➔ րան են, որը ոչնչով չես փոխարինի: Թող մեծամտություն չհամարվի, եւ հեռուստատեսությամբ, եւ ռադիոյով հնչում են երգեր, որ իմ երգած երգերն են, դրանց անդրադիվ կատարողը ես եմ եղել: Դա դասավանդելուց մի բան էլ ավելին է: Ժամանակին լսում էի ինչպես իմ գործընկերների, այնպես էլ ավագ սերնդի երգիչների կատարումները, որն ինձ դուր էր գալիս, կատարում էի: Ընդօրինակում էի, իհարկե, ստեղծագործաբար: Պատկերացրեք, լսելով մույնիսկ սովորում էի: Մինչ երաժշտական կրթություն ստանալը ես լսում էի գուսանի երգը, եւ իմ ականջին շատ հարազատ էր հնչում: Ես կարող էի էստրադային երգ երգել, մույնիսկ ինձ դասավանդողներն առաջարկեցին օպերային երգ երգել, բայց նախընտրեցի ժողովրդականը, գուսանականը, որով հետեւ, ժողովրդական, գուսանական երգը հոգու երգ է:

– **Եթե անհամեստ հարց չէ, ինչու՞ է այսօր զբաղված Օֆելյա Համբարձումյան երգչուհին:**

– Արդեն մեծցի, որ աշակերտներ չունեն, աշակերտները նրանք են, որ միջնորդավորված կապ ունեն հետները, երբեմն համերգների եւ մասնակցում: Գիտե՞ք՝ ժամանակն այնպիսին է, որ ժողովրդական, գուսանական երգարվեստին շատ քիչ տեղ է հատկացվում, ինչի համար անկեղծորեն ցավում եմ: Էստրադային եւ ժամանակակից երգի խառը-խուռը չխչխկոցը, աղմուկը չափից դուր շատ են: Եթե ռադիոյով համերգ է լինում, երկու երգ լինում է գուսանական, քսաներկուսը՝ էստրադային, ուզես-չուզես ծանծառնում ես: Սա ոչ միայն իմ, այլ ժողովրդի կարծիքն է: Ինձ դրսում հաճախ մահաբեր են տալիս, թե ի՞նչն է պատճառը, որ մենք չենք լսում մեր ժողովրդի երգն այնքան, որքան կցանկանայինք:

– **Նախկինում հեռուստատեսությամբ, ռադիոյով հաճախակի էին հնչում հայ երգարվեստի երախտավորների՝ Արամ Մերանգուլյանի, Թաթուլ Ալբունյանի դեկավարած վաստակավոր անսամբլների կատարումները, ճանաչված երգիչներ Վաղարշակ Սահակյանի, Նորայր Մնացականյանի, Օֆելյա Համբարձումյանի,**

Հովհաննես Բաղալյանի, Ռուբեն Մաթեոսյանի կատարումները: Այժմ այդ բոլորը քաղցր հուշ են դարձել, մանավանդ հեռուստատեսությունը մի տեսակ երես է թեքել ժողովրդական-գուսանական արվեստից:

– Այդ մի հարցին մասամբ պատասխանել եմ: Դա նաեւ այն պատճառով է, որ հեռուստառադիոյում կազմակերպիչները մեծամասամբ երիտասարդներ են, նրանք շատ քիչ են լսել կամ լսում իսկական ազգային երգը: Երբեմն լսում եմ համերգի ժամանակ գուսանի երգ եւ հայտարարում, ասում եմ՝ ժողովրդական, կամ այլ ստեղծագործողի անուն են տալիս: Այս բոլորը գալիս է չինացությունից: Դա մշակում է, որ այդ մարդիկ երաժշտություն քիչ են լսել եւ չեն ջուրկում մեկը մյուսից: Սա ցավալի է, չարչրկված հարց է, բայց որին նաեւ լուծում պիտի տրվի: Ինչու՞ չչափազանց մեր իսկական ազգայինը, անարատը, առանց աղճատելու: Գուսան Աշոտի երգերը շատ անարատ են, լսում ես երգերը եւ քեզ ակամայից գգում ես Հայաստանում՝ ծորերում, սարերում, բնության գրկում, եղնիկի հետ ես խոսում, աղբյուրից պաղ ջուր խմում: Թող աղավաղված երաժշտության կողքին գոնե դա էլ լինի: Արամ Մերանգուլյանի անվան անսամբլը, ինչպես դուք մեծցիք, ժողովրդական երգեր էր պրոպագանդում, այդ ամենի վրա խաչ է քաշվել: Բացի դրանից, ինչ ժամանակին ծայնագրվել է, դրա վրա էլ է խաչ քաշվել: Հանրային ռադիոյի պատասխանատուներից մեկը մի անգամ հայտարարեց, թե իրենք պարտավոր չեն ամեն օր դիմել արխիվին: Նկատի ունեւ երաժշտական ֆոնդում պահպանվող ծայնագրությունները, որոնք ժամանակին մարդիկ լսել են, ոգեշնչվել դրանցով, մի՞թե դա արխիվ պիտի համարել բացասական իմաստով: Կոմիտասը մեր օրերում չի ստեղծագործել, համարենք արխիվ, Սայաթ-Նովային մոռանա՞նք, Ջիվանուն, Շիրինին, Աշոտին համարենք արխիվ, ինչ է թե՛ են ժամանակ են ստեղծագործել: Այն, ինչ պահպանվում է հեռուստատեսությունում, այսօր չի հնչում: Իզուր չի ասված՝ Որոք լավ մոռացված իմն է: Այլ բան է, որ նախկինում ծայնագրման տեխնիկան կատարյալ չէր, բայց չէ՞

որ ժամանակակից տեխնիկան թույլ է տալիս այդ ծայնագրությունները մաքրել, հստակեցնել եւ մատուցել ժողովրդին:

– **Պատրաստվում ենք նշելու գուսան Աշոտի 100-ամյա հորեյանը, բայց սյունեցիները չեն մոռացել Գորիսում կազմակերպված նրա 80-ամյակին նվիրված հանդիսությունը:**

– Այո, հրաշալի անցավ այդ երեկոն, որի տեսագրությունն ունեն, պահպանվում է մոտս: Այդ հիշարժան օրը ես երգեցի նրա լավագույն երգերից մեկը «Օջախումը»: Կուզեմ լայնի մահն երեկոները համախառնել լինեին: Ստածում եմ, թե ինչու «Արամ Խաչատրյան» մեծ դահլիճում գուսանի երգի երկրպագուների համար մի համերգ չեն կազմակերպում՝ դրանում ընդգրկելով նրա լավագույն երգերը: Դա նորից շունչ կտա նրա երգարվեստին: Կուզեմ Աշոտի երգերի կողքին հնչեին Սայաթ-Նովայի, Շերամի, Շահենի ստեղծագործությունները: Այս ստեղծագործողների երգերին անդրադարձել եմ եւ ունեն բավականին ծայնագրություններ: Տարիներ շարունակ հնչել են ռադիոյով եւ հեռուստատեսությամբ:

– **Ինչպե՞ս եք ընդունում այն փաստը, որ «Սյունյաց երկիր» թերթը նախածեղնել է նշելու վարպետի 100-ամյա հորեյանը՝ թերթի մի ամբողջ համար նվիրելով այդ իրադարձությանը:**

– Գուսան Աշոտը ծանրակշիռ ժառանգություն է թողել մեզ, նա հարգված է եղել թե՛ գրողների, թե՛ կոմպոզիտորների կողմից: Անպայման պիտի նշվի այդ հորեյանը, չէ՞ որ այն սերունդը, որ լսել է ընդունել է գուսանին, արդեն իր կյանքի մյուսամուտն է ապրում, ավելի ստույգ վաղուց հրաժեշտ է տվել երիտասարդական տարիներից: Նրա երգն աստիճանաբար կմարի, եթե անընդհատ չկատարվի: Եթե հորեյանական տարի է, նա էլ արժանի ստեղծագործող է եղել, անպայման պիտի նշվի նրա հորեյանը: Սա ես ասում եմ որպես նրա երգերի երկարամյա կատարող: Նրա երգերը պիտի հնչեն, որպեսզի տարբեր սերունդների միջեւ կապը չխաղվի:

← դեպքերում երգը կար, եւ ինքն էր հորինում, կատարողն էլ իրենն էր ներդնում, սեփական մեկնաբանությունը, եւ ստեղծագործությունը հասցնում կատարելության:

– Պարոն Մաթեոսյան, հիշում եմ ձեր հարցազրույցներից մեկում պատմել էիք, թե գնացել էիք Ղափան, վատառողջ էիք, բայց հանդիսատեսները այնպիսի մթնոլորտ էին ստեղծել դահլիճում, որ հնարավոր չէր ելույթ չունենալ: Նաեւ եզրահանգում էիք արել, լեռնցիները հատուկ սեր ունեն երաժշտության համոզես:

– Ես էլ լեռնցի եմ իհարկե, բոլորն էլ սեր ունեն, կենդանին նույնիսկ սեր ունի, ասում եմ օձն էլ մարդուն չի խայթում, երբ նա երգում է (ծիծաղում է): Չգիտեմ դա որքանով է ճիշտ կամ սխալ՝ մի բան գիտեմ. ով երգ չի սիրում, նա երեւի շատ վտանգավոր անձնավորություն է:

– Որքանով տեղեկացանք, դուք նաեւ հարեւաններ եք եղել:

– Գիտեք ինչ, դժվար կյանք էր ունեցել, նախ մահացել է առաջին կինը, հետո երկրորդը, հետո որդին վախճանվեց: Տխուր մարդ էր, բայց այդ տխրությունը չէր վերագրում ճակատագրին: Եվ անընդհատ երգ էր հորինում: Գուցե նրա հոգու տվայտանքն էր դուրս հորդում: Նա կարող էր մի օրվա մեջ երկու երգ հորինել: Անընդհատ երգում էր քթի տակ, քայլում էր եւ երգում քթի տակ: Մի անգամ գուսանի տուն մտա, որովհետեւ խնդրել էր իր հերթական երգերը նոտագրել: Շատ արագ նոտագրեցի, չորս-հինգ երգ, բայց վարպետին

խնդրեցի, որ նոտագրվածի տակ ստորագրություն չդնես: Լինում է չէ՞, նոտագրեց էսինչ-էսինչյանը: Ինձ համար կարեւորն այն էր, որ այդ մեղեդին չկորչեր: Դետո անցանք մտերմիկ զրույցի: Ես այն երգանիկներին եմ եղել, որ բարեկամ եմ եղել, քանզի քառասուն տարուց ավելի ճանաչել եւ երգել եմ նրա երգերը: Երբ երգ էր հորինում, ամմիջապես ցանկանում էի լսել, անկախ նրանից, ես պիտի կատարեի, թե մեկ ուրիշը: Իսկ այդ գործում նրան օգնում էր նրա երրորդ կինը՝ Արաքսյա Ղալեջյանը, որ սիրով կատարում էր գուսանի երգերը: Ես չեմ մոռանա, որ Մերան գուլյանի օրոք ներկայացրի «Յար առանց քեզ» երգը ռադիոյով, հետո շատ երգիչներ երգեցին այդ երգը, որը մտավ Բելա Ղարբինյանի երգացանկի մեջ: Եվ երգը բոլորովին այլ մեկնաբանություն ստացավ: Անչափ ուրախ եմ, որ գուսան Աշոտ երեսույթը պարուն է մինչեւ օրս: Չեմ կարծում, որ կգա ժամանակ, որ նրան կնոռանան: Քավ լիցի, նրա երգն այնքան հողեղեն է եւ այնքան ծուլված է հայ մարդու էությանը, որ բոլոր ժամանակներում նա հնչելի կլինի:

– Ես այդ հարցը պիտի տայի, գուսանի դերը ձեր կյանքում:

– Գուսանն իմ կյանքի յուրաքանչյուր փուլում ներկա է եղել, անդրադարձել եմ վարպետի երգերին, շատ եմ երգում գուսան Աշոտ, իմ երգացանկից երբեք եւ ոչ մի պարագայում չբացակայող մի հեղինակ է նա, անպայման իր ուրույն տեղն ունի իմ երգացանկում եւ ասեմ, այն անսամբը, որ ես եմ ղեկավարում՝ հպար-

տանալու առիթ ունի, չէ՞ որ աշխարհին նախելառաջ ինքն է ներկայացրել գուսանի երգերը. դա Հայաստանի հանրային ռադիոյի եւ հեռուստատեսության Արամ Մերանգուլյանի անվան ժողգործիքների վաստակավոր անսամբն է, հենց այս փորձասենյակում եմ ծնվել այն բոլոր երգերը, որ այսօր սիրելի են ժողովրդին, հենց մեր ստուղիայում եմ ծայնագրվել նաեւ երգի-պարի անսամբի փառահեղ կատարումները, որ այնպես վարպետորեն ներկայացնում էր ժողովրդին հանճարեղ թաթուլ Ալթունյանը:

– Ձեր սերնդի երգիչները՝ դուք, Օֆելյա Համբարձումյանը, Հովհաննես Բաղայանը, մյուսները ըստ արժանվույն եք ներկայացրել գուսանի արվեստը, իսկ ի՞նչ կասեք երիտասարդ կատարողների մասին, նրանց եւս հաջողվո՞ւմ է ներկայացնել վարպետին ինչպես հարկն է:

– Նրանք էլ յուրովի են ուզում ներկայացնել գուսանին: Եթե գրագետ լինեն, բնականաբար, կդիմեն նրա գրքերին, որոնցում նոտագրված կան նրա բոլոր երգերի մեղեդիները, եւ եթե փորձեն այդպես երգել, լավ կստացվի: Գնարելու հարկ չկա, այդ մարդն արդեն հորինել է: Դուք պատկերացնո՞ւմ եք, ենթադրենք Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանին» բոլորովին այլ բառերով արտասանեն, կամ որտեղ ուզեն, բառը փոխեն, ոչ մեկը իրավունք չունի չէ՞: Իսկ ո՞վ է ասում, որ երգի մեղեդին կարելի է փոխել, աղճատել այն:

Զրույցը՝ ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆԻ

ԿԱՏԱՐԵԼՈՒԹՅՈՒՆ

Ճանաչում՝ նաեւ նրանց բարձրարվեստ կատարումներով



Շարա Տալյան, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ



Վաղարշակ Սահակյան, հանրապետության ժողովրդական արտիստ



Լուսինե Զամալյան, հանրապետության ժողովրդական արտիստ




Վարդուհի Խաչատրյան, հանրապետության ժողովրդական արտիստ



Լուսինե Զամալյան, հանրապետության ժողովրդական արտիստ



Վաղարշակ Մամիկոնյան, հանրապետության ժողովրդական արտիստ




Շիրա Մարտիրոսյան



Րաֆֆի Հովհաննիսյան



Վաչե Հովհաննիսյան



Սամվել Գալստյան, գուսան Աշոտի երգերի ժամանակակից կատարող, Գյումրի

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՍՈՒԼ, ԱՐԽԻՎ

Ամենայն հայոց գուսանը



ՀՈՎՀԱՆՆԵՍ ԲԱՐԱԼՅԱՆ

Գուսան Աշոտի անունն ու երգերը լսելիս ամմիջապես պատկերացնում ենք ինքնատիպ, մեծատաղանդ մի վար-

պետի, որն ահա ավելի քան 50 տարի ջերմեռանդ սիրով ու բարձր արվեստով ստեղծում է սիրո, աշխատանքի, խրատական, հայրենասիրական, հայրենի բնությանը, բարեկամությանն ու խաղաղությանը նվիրված գողտրիկ երգեր: Ես նպատակ չունեմ շարադրելու մեր սիրելի գուսանի կենսագրությունը կամ մեկնաբանելու նրա բանաստեղծությունների ու երաժշտության մեծ արժանիքները, այլ ուզում եմ սրտի ջերմությամբ ասել, սիրելի՛ գուսան, որպես քո շատ երգերի առաջին կատարող, քո հարյուրավոր երգերի նոտագիր ու անկեղծ բարեկամ, միշտ էլ հիացել եմ տեսնելով, թե ինչպես են քո երգերը զարման գեփյուռի մեջ թափանցել մարդկանց սրտերը, ջերմացրել նրանց հույզերն ու հույսերը: Այսօր հազիվ թե գտնվի հայ մի ընտանիք՝ հայրենիքում թե սփյուռ-

քում, ուր չիմանան, չերգեն քո հոգեթով երգերը, հազիվ թե լինի ժողովրդագուսանական, էստրադային կամ երաժշտական մի խումբ, որի ծրագրում չլինեն քո մեղեդիները:

Լավ երգը երբեք չի մոռացվում, բերնեբերան փոխանցվում է սերունդներից, իր հետ հավերժացնելով նաեւ ստեղծողի անունը: Ինչպես ինքը ես ասել քո «Ոչ մի խորշակ» երգում Միտքս ծով է, երբեք լճակ չի դառնա, Հագար աղբյուր, հագար աղբյուր ունի նա, Մահ չեմ տեսնի, բեկուզ մի երգս մնա Իմ հայրենի աղբյուրների ափերին, Իմ աշխարհի աղջիկների շուրթերին:

Ես հավատում եմ քո անմահությանը, սիրելի, ամենայն հայոց գուսան, եւ հպարտ եմ, որ քո ժամանակակիցն են եւ իմ երգիչ ընկերների հետ կատարում են քո երգերը:

«Գրական թերթ», 25.06.1982թ.

Իմ սիրած երգերի հեղինակը



ՏԱԹԵՎԻԿ ՍԱԶՆԴԱՐՅԱՆ

Խորհրդային Միության ժողովրդական արտիստուհի, պետական մրցանակի դափնեկիր, պրոֆեսոր

Դժվար է այսօր հայ գուսանական արվեստը պատկերացնել առանց այնպիսի սիրված ու հանրաճանաչ անվան, ինչպիսին գուսան Աշոտն է, առանց նրա սրտահույզ ու հոգեմոտ երգերի, որոնք ուղեկցում են արդեն ունկնդիրների մի քանի սերնդի:

Ստեղծագործական ծանրակշիռ վաստակով իր ութսունամյակը բոլորեց գուսան Աշոտը, բայց այդ վաստակը, անշուշտ, դեռ վերջնական չէ նրա համար. դեռ նոր երգեր են ծնվում, նրա արվեստի բազմահազար երկրպագուներ դեռ նոր սպասելիքներ ունեն սիրելի գուսանից:

Ստեղծագործական ողջ կյանքի ընթացքում միշտ կապված մնացի մեր երաժշտության հմայիչ հատվածներից մեկի՝ գուսանների երգարվեստի հետ: Զգացմունքների գեղեցիկ աշխարհ էր բացում իմ առջեւ Սայաթ-Նովան, Շերանը...

Մեր օրերում այդ աշխարհի հետ շարունակում էի ակտիվ հաղորդակցվել իմ սիրելի գուսան Աշոտի միջնորդությամբ: Սրտիս ու հոգուս մոտ շատ նրբերանգներ եմ գտել նրա երգերում. ապրումների արտահայտման բնականություն, անկեղծություն: Ես կիսում եմ բոլոր նրանց կարծիքները, որոնք գուսան Աշոտին համարում են մեր այսօրվա հուզական երգահաններից մեկը:

Իսկ երգերում ընդգրկված աշխարհը...

Չէ ո՞ր դա իմ ու գուսանի սիրելի հողն է, հարազատ Զանգեզուրը: Նրա երկնաքեր լեռներն ու մարդկային տոկուն խառնվածքները առանձին կենսափիլիսոփայություն կարող են բերել արվեստ: Մեր գուսանի երգերում կա նաեւ այդ կենսափիլիսոփայությունը:

Ես միշտ սպասում էի այն օրերին, երբ գուսանը պետք է գանգահարեր եւ ասեր. – Տաթեւիկ ջան, քեզ համար նոր երգ են գրել... Նույն պատասխանատվությամբ,

ինչպես վերաբերվում էի նոր դերերգի կամ նորաստեղծ ռոմանսի կատարմանը, ես մշակում էի գուսանի երգերը: Ես երգեցի «Իմ ժողովուրդ», «Հով գիշեր», «Յար առանց քեզ», «Մեծ Կոմիտաս»: Հատկապես ինձ ոգեւորում էր «Իմ ժողովուրդ» երգի տեքստը: Վերջերս Գորիսում, իմ 70-ամյակին նվիրված երեկոյին, հուզված իմ հայրենակիցների ընդունելությամբ, ես կրկնեցի մեր գուսանի իմաստուն այդ խոսքերը.

Իմ ժողովուրդ, իմ ծնողը դու ես, դու,

Ինձ կյանք տվող, ինձ պահպանողը դու ես, դու:

Ինձ շեն այգում ես մի տերեւ անցողիկ,

Ինձ փայփայողն, ինձ պահպանողը դու ես, դու:

Երգի ծնունդը, անշուշտ, ունի իր որոշակի օրինաչափությունները: Երգը սիրում է մարդկային գուլալ հատկություններ: Գուսան Աշոտի երգերի հմայիչ գծերից է դա: Նրա երգերում լսվում է իր հոգու մաքրությունը, մտքի պարզությունն ու պայծառությունն ու էլի մարդկային շատ ու շատ գեղեցիկ հատկություններ:

Գուսան Աշոտը իրավամբ է դարձել ժողովրդի կողմից սիրված երգահան: Թող, ուրեմն, էլի երկար տարիներ իր ժողովրդի համար հնչի նրա քնարը, նրա ջերմ ու տաք քնարը:

«Ավանգարդ», 10.06.1987թ.

ՇԵՏՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աշուղական երգը հանրային ռադիոյում

«Այսօրվա այս համատարած «երիտասարդացման» ֆոնին, երբ բոլոր հեռուստակայանները, ռադիոկայանները հիմնականում ավելի ժամանակակից են, թվում է, թե պետք է մեզ մոտ էլ աշուղական երգ-երաժշտությանը հատկացված տեղերը նվազած լինեն: Մեր ռադիոյում (իհարկե, ցավոք սրտի մի քիչ պակասել է) բայց, բարեբախտաբար, այդ արվեստը ընդհանուր համերգային ծրագրերում դեռ իր տոկոսային չափաբաժինն ունի: Դեռ չենք կորցրել դրա հանդեպ հետաքրքրությունը, որովհետև պահանջարկն իրոք կա. ի՞նչ անենք այն մարդկանց հետ, որոնք ցանկանում են լսել դա», - ասում է Հայաստանի հանրային ռադիոյի երաժշտական ծրագրերի ղեկավար Անահիտ Կոստանյանը, որը մասնագիտությամբ երաժշտագետ է:

Նախելառաջ, հանրային ռադիոյի հաղորդումները առավելագույն սկսվում են «Հայկական ժողովրդական երաժշտություն» խորագրով համերգային ծրագրով: Բայց միշտ չէ, որ այդ ժամին միայն ժողովրդական երաժշտություն են հնչեցնում: Այդ ժամին հնչում է նաև աշուղական երաժշտություն: Բացի դրանից շաբաթական մեկ օր ունեն պարտադիր շաբթ «Աշուղական երգեր»: Մնացածը մեծ համերգամասեր են, որոնք բաժանվում են մի քանի մասերի. դրանցից մեկն անպայման հատկացվում է ժողովրդական, աշուղական երաժշտությանը:

Հանրային ռադիոյի ծրագրում կա նաև մի հաղորդաշար, որը վարում է բանահավաք Արուսյակ Սահակյանը: Երբ չէ, նա հիմնականում բանահյուսության հետ կապված

հարցեր է շոշափում, բայց դրա հետ նաև անդրադարձ է լինում աշուղական արվեստին:

«Մեզ մոտ հիմա կենդանի եթերներ են, նախկին հաղորդավարները չկան, եւ եթերը վարողները դիջեյներն են: Բացի այն պարտադիր ծրագիրը, որ ես եմ կազմում, դիջեյը կազմում է նաև իր ուզած երաժշտության ցանկը, որ պիտի եթեր տա: Հնարավոր չէ, որ օրվա մեջ որեւէ դիջեյ աշուղական երգ չհնչեցնի: Եթե ոչ ավանդական կատարումը, ապա այսօրվա գործիքավորված տարբերակն անպայման հաղորդվում է: Այդ երգարվեստն անպայման հնչում է նաև պատվերով հանձնարվող ընթացքում», - նշում է տիկին Կոստանյանը:

Նա հայտնեց, որ արծազանք միշտ լինում է: Երիտասարդ ունկնդիրների մեջ էլ շատերը կան, որ սիրում են այդ երգ-երաժշտությունը. «Օրինակ, ո՞ւմ մտքով կանցներ, որ այսօր երիտասարդը կարող է Արաքսյա Գյուլզարյան լսել: Այո՛, այդպիսի երիտասարդներ էլ կան: Պատահական չէ, որ երիտասարդ երգչուհի Սիրուշոն այսօր երգում է աշուղական երգեր եւ շատ լավ է երգում: Ի դեպ, ասե՛մ՝ շատ լավ է զգում: Երբ չէ, նա գրեթե նույնությամբ է վերարտադրում, ինչ Ա. Գյուլզարյանը, բայց այլ ձայնով, այլ տեմբրով: Միեւնույն է՝ երիտասարդի մեջ ցանկություն է չէ՞ առաջացել լսել, երգել դա, ուրեմն՝ պահանջարկը կա»: Կամ՝ գրուցակիցս վկայակոչում է անկախության տարիներին ստեղծված հայկական էստրադան. ի՞նչ է իրենից ներկայացնում հիմնականում ժողովրդական կամ աշուղական երգերի վերամշակումը: Այ-

սիքն՝ պահանջարկը կա: Այլ խնդիր է, թե ինչու այսօր եթերում աշուղական արվեստը չի թարմանում: Անընդհատ նույն անուններն են: Երեւանում գործում է աշուղական դպրոց, եւ Ա. Կոստանյանը հույս ունի սաներից ոմանք կդառնան մեծ աշուղներ. «Լավ է, որ դպրոցը շարունակվում է: Խոսել եմ դպրոցի տնօրեն Թովմաս Պողոսյանի հետ: Նա հայտնել է, որ կատարում են նոր աշուղների ձայնագրություններ, հույս ունեն դրանց շնորհիվ թարմացնել մեր ֆոնդը. իսկ այսօր եթեր ենք հեռարձակում ինչ որ ունենք»:

Վաղուց թվայնացրել են նաև հին ձայնագրությունները, հիմա երաժշտությունը միայն խտասկավառակներով են հաղորդում: Այսինքն ունեցած ֆոնդի, հին ձայնագրությունների պահպանության հարցը լուծվել է: Չնայած ժապավենները դեռ պահում են. «Ուղղակի դրանցով այլևս չենք հաղորդում: Հիմա նույնությամբ թվային ենք փոխել ինչ որ եղել է: Իսկ ձայնագրություններում եղած աղմուկը, խշշոցը մնացել են: Ուրեմն որ մաքրման տեխնիկան անընդհատ նորանում է, մաքրումը ավելի լավ ժամանակներում կանենք»:

Երաժշտական ծրագրերի ղեկավարն ասում է, որ կուրորեն չեն հետետուս ունկնդրի պահանջին, որովհետև հնարավոր է ունկնդիրը զանգի եւ պատվիրի, ասենք, «Սպիտակցի Հայկո»: Բաներ կան, որ չեն կարող իրենց թույլ տալ: Կարծում է գոնե հանրային ռադիոն պիտի ճաշակ դաստիարակողի դերում լինի: Չնայած, ցավոք սրտի, հիմա փոխվել են նաև իրենց հանդեպ եղած պահանջները. մրցակցության դաշտը խանգարում է...

Ի՞նչ կարծիքի է երաժշտագետ

աշուղական երգերի ժամանակակից վերամշակումների մասին: «Տեսակետ կա, թե չի կարելի ժողովրդական, աշուղական երգերը մշակել: Իսկ ինչո՞ւ չի կարելի... Ենթադրենք 5-րդ դարի երաժշտություն ունենք: Թողնենք մնա ինչպես որ կա՞: Դա էլ թող մնա, եւ այդ ձևով էլ ունենք: Բայց եթե այսօրվա երիտասարդն ուզում է մի գեղեցիկ ժողովրդական խաղիկ լսել, անպայման պիտի այն դարի ռիթմով լսի: Թող այսօրվա ռիթմի մեջ հնչի, որ իր ականջին խորք չլինի: Միեւնույն է՝ ինտոնացիաները չեն փոխվում. փոխվում է հանդերձանքը, գործիքավորումը: Թող փոխվի, իր քիմիան հասու լինի: Միայն թե լսի, այդ ինտոնացիաները ականջում մնան. կարելի էր սա է: Այլ խնդիր է, որ երբեմն «համը հանում են», շատ անճաշակ են անում. սա արդեն վատ է»: Եվ գոհ է, որ գոնե իրենց խմբագրությունում շատերը երաժշտական կրթություն ունեն եւ կարողանում են զուտ: «Երբ չէ՞ երբեմն, հատկապես պատվերով համերգի ժամանակ, ինչ-որ սողանք թողնում ենք... Չեն ասում բացարձակապես պահանջարկին չենք տրվում: Այդպես թորած որ լինեն, ոչ մեկը չէր լսի մեր ռադիոն: Երբեմն ժամանակի ընթացքին էլ ենք հարմարվում. լսարան գրավել կա, մեծ շուկա է... Օրինակ, նոր երգիչներ կան, անուններ չտամ, մաներան, երգելու ոճը ռաբիս է, բայց շատերը նրան ազգային երգի կատարող են համարում... Հնչում են եթերում»:

ԱՄՍԻՆԵ ԱՎԱԶՍԵ

ԳՈՒՄԱՏԻ ԵՐԳԱՇԽԱՐՀՈՒՄ

Մյուսյաց աշխարհի հորովել

Խնձորը ծոցին իմ ջահել ախպեր,
Քո ձայնն է լսում, քո մաճկալ ափեր,
Հոլ արա Խումար ջան, հո արա հոտաղ ջան,
Ապերն ինչ ասի, հոտաղը լսի:

Հացի բորմունքով ձորերը լցնի, հոլ-արա-հո-հո-հո...
Ամուլ ջան, ուսիդ սարի չափ բեռ կա,
Քեզ աստված ասեմ, տասը մեծ դարդ կա՝
Հոլ-արա, Շումալ ջան, Շումալ ջան, հո-հո...
Հո-արա, հոտաղ ջան, հոտաղ,
ջան հո-հոլ արա հո-հո-հո...

Խնձորը ծոցին իմ ջահել ախպեր,
Քեզնով է ուրախ քո մաճկալ ափեր,
Հոլ-արա, Խումար ջան, հո արա, հոտաղ ջան,
Էս քարոտ հողին խոփը դեմ չառնի:

Աստված մեր հացը թող պակաս չանի,
հոլ-արա-հո-հո-
Ամուլ ջան, ուսիդ սարի չափ բեռ կա,
Քեզ աստված ասեմ, տասը մեծ դարդ կա՝
Հոլ-արա, Ծաղիկ ջան, Ծաղիկ ջան, հո-հո,
Հո-արա հոտաղ ջան, հոտաղ ջան, հո-հո,
հոլ-արա-հո-հո-հո-.

Խնձորը ծոցին իմ ջահել ախպեր,
Հարսանքիդ քավոր քո մաճկալ ափեր,
Հո-արա, Թումար ջան, օրը ճաշ դատալ,
Ամառվա վարը ոսկի հաց կտա:
Օջախի ժպիտ խնդրություն կգա, հոլ-արա, հոլ-հո-հո...

Ամուլ ջան, ուսիդ սարի չափ բեռ կա,
Քեզ աստված ասեմ, տասը մեծ դարդ կա,
Հոլ-արա, Դումաշ ջան, Դումաշ ջան, հո-հո,
Հո-արա, հոտաղ ջան, հոտաղ ջան,
հո-հոլ-արա հո-հո-հո-:

Սարի սիրունը ճաշը կբերի,
Հոտաղի սերը նորից կնորի,
Հոլ-արա, Խորմա ջան, հո-արա հոտաղ ջան,
Մաճել ու զակեփ օգկիար ձեռեր՝
Հե՛յ, մրտապատն հացը խինդ ու սեր,
հոլ արա հո-հո-հո-
Ամուլ ջան, ուսիդ սարի չափ բեռ կա,
Քեզ աստված ասեմ, տասը մեծ դարդ կա,
Հո արա, ուտաղ ջան, հոտաղ ջան,
հոլ արա հո-հո-հո-:

ՄԱՏԻՊ ԳՈՐԾԵՐԻՑ

Ծովեծով արհավիրք

(ղեկավարներ 1988թ.)

Աշխարհներին լուր հասավ՝ լցված վշտի արցունքով,
Աշխարհը եկավ աշխարհով, ազգ, բարեկամ
հուզաբով,

Քաղաքներ խորտակվեցին, լեռ ու սարեր շարժվեցին,
Ակնթարթում ձորերը դարձան արյան ծովեծով:

Մեկն իր սիրո բույրն առած, մեկն էլ ճամփին աչքը
հառած,

Մայրն աղոթքի տաճարում սուրբ հավատքի մոմ
վառած,

Ա՛յս, անմուրազ գնացին, մրմունջները մնացին,
Վեհ Աստված գրառատ, ինչո՞ւ մեզ չգրացիր, սիրտս
վշտով լցրեցիր:

Վշտաբեկված հոգիներ աղետներդ տեսներով,
Ծով հույզերով լցրեցին մրմունջներդ լսելով,
Ազգերը եկան հեղեղված օգնության սուրբ ձեռք
մեկնած,

Խղճի քրտինք էր ծորում վշտաբեկված տեսիլքով:

Արհավիրքի ողբածայն մրմունջները ծովացան,
Փլատակի մոր-մանկան խուլ ձայները ծովացան,
Աշխարհ-աշխարհ ողբացին, Աստծո հետ էլ խոսեցին
Աղոտ, այնքան ողբացին, ողբանքները հորդացան:


Մեկն իր սիրո բույրն առած, մեկն էլ ճամփին աչքը
հառած,

Մայրն աղոթքի տաճարում սուրբ հավատքի մոմ
վառած,

Ա՛յս, անմուրազ գնացին, մրմունջները մնացին,
Վեհ Աստված գրառատ, ինչո՞ւ մեզ չգրացիր, սիրտս
վշտով լցրեցիր:

ՀԱՆՐԱՅԻՆ ԶԱՅ ԱՇՈՒՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հարգված էր ու սիրված



ՀԱՎԻՂ ԳՐԻԳՈՐՅԱՆ
Հայաստանի գրողների միության անդամ, բանասիրական գիտությունների դոկտոր, հայ աշուղների միության նախագահ

կնոջ՝ սիրած եակի հանդեպ էր, այլ ընդհանրապես բոլորի, այդ պատճառով նա չափազանց սիրված էր մայրաքաղաքում, փողոցով անցնելիս մատով ցույց էին տալիս՝ թե տեսեք, աշուղ Աշոտն է անցնում: Այդ հարգանքին ու սիրուն նա արժանացավ ոչ թե հենց այնպես, այլ իր գրչով, իր մտածելակերպով, իր ստեղծած բարձր արվեստով: Անդրամիկ ժողովածուն կոչվում էր «Գուսանական երգեր»՝ հրատարակված 1946 թվականին, իսկ վերջինը՝ 1988 թվականին «Լեռները կանչում են» վերնագրով: Բավական է փաստել, որ նրա նախավերջին գրքի առաջաբանը գրել է ակադեմիկոս Սեւակ Արզումանյանը: Այդպիսի մի այլ աշուղ չենք ունեցել, որի մասին մնամ գրականագետ որեւէ բան գրեր: Նա բանաստեղծաբար էր ստեղծագործում, թեեւ մի երանգն աշուղական էր անշուշտ, այնպես որ կիսով չափ աշուղ էր, կիսով չափ՝ բանաստեղծ: Նրա երգերը նոտագրել են բավականին հարգված մարդիկ՝ այդպիսով դրսևորելով իրենց հարգանքը նրա անձի ու ստեղծագործու-

թյան հանդեպ: Վարպետի ժողովածուները վկայում են նրա տաղանդի, բանիմացության, նույնիսկ հայերենին անսովոր տիրապետելու մասին: Զարմանալի բան է գործիքի աշուղ առանց բարձրագույն կրթության, ընդամենը Բաքվում է սովորել մի քանի տարի, բայց ստեղծագործել է մանուկ տարիներից մինչև իր կյանքի վերջը, ստեղծել աշուղական երգեր, մեկը մյուսից կատարյալ: Նա ստեղծագործեց այնքան, որքան չեն ստեղծագործել մեկ տասնյակից ավելի աշուղներ, օրինակ Ծովյանը, Աշխույժը, Բագրատը, Ռազմիկը, մյուսները: Նրանք ամենքը երկու գիրք են հրատարակել՝ 50-60 էջանոց: Դա մշանակում էր, որ մարդը լրջորեն էր զբաղվում իր նախասիրած գործով եւ հասավ այնպիսի մակարդակի, որ դարձավ ոչ միայն կոմպոզիտորների միության անդամ, աշուղների միության անդամ, այլև արժանացավ հանրապետության ժողովրդական արտիստի բարձր կոչման:

Չափազանց բազմազբաղ մարդ էր. իր տիկնոջ՝ Արաքսյա

Ղալեչյանի հետ խումբ էր ստեղծել եւ համերգներով հանդես էր գալիս հանրապետության քաղաքներում եւ գյուղերում: Նույնիսկ ժամանակ չունեցավ մասնակցելու այն հաղորդաշարին, որ վարում էի հայկական հեռուստատեսությամբ 1969-ից մինչև 1976 թվականը եւ որին մասնակցել են բոլոր աշուղները, այդ թվում եւ Հավասին: Եվ դա ոչ թե միտումնավոր էր, այլ, կրկնում են, որովհետև բազմազբաղ մարդ էր եւ ժամանակը նրան երբեք չէր բավականացնում:

Տաղաչափությունը Աշոտի բանաստեղծական շնորհներից էր դարձյալ, որովհետև նա ամեն ինչում էր վարպետ՝ եւ աշուղական, եւ դասական պոեզիայի: Աշուղական պոեզիայինը տասնմեկ վանկն է, դասական պոեզիայինը՝ տասը: Այնպես էլ է գրել, այնպես էլ: Քանի որ իսկական ստեղծագործող էր եւ տասը վանկով է գրել, եւ տասնմեկ: Դա վկայում է նրա բանաստեղծական բարձր մակարդակի մասին:

ՄԵՐՈՐՅԱ ՅԱՅՄՔ ԳՈՒՄԱՆԻ ՍՏԵՂԵԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Գուսան Աշոտի իսկապես Սայաթ-Նովայի հեղինակը դարձավ



ԱՐՋԱՍ ՈՍԿԱՆՅԱՆ
Կոմպոզիտոր, երգիչ, ՀՀ պետական մրցանակի դափնեկիր, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ազգային միջազգային կենտրոնի տնօրենի և հայ երգեցողության ամբիոնի վարիչ

բանաստեղծական ինքնատիպ մտածողությունը՝ գեղեկական տարրերով, Աշոտը եւ Յավասուց, եւ Շահենից տարբերվեց նրանով, որ զանգեզուրյան այդ հրաշալի մելոսի (եւ ոչ միայն) մեջ կարողացավ հայտնաբերել աշուղական արվեստի այլ երանգներ: Նրա երգերը համարում են հայկական մտածողության ստեղծված երգեր: Եվ կարողացավ հնարավորինս մնալ չափի մեջ, քանզի վտանգ կար աղերսվել պարսկական, ադրբեջանական, թուրքական, մի խոսքով՝ մուսուլմանական երգարվեստին: Իմ խորին համոզմամբ եւ Սայաթ-Նովան, եւ Աշոտն այս տեսակետից կարողացան մնալ չափի մեջ: Այս էի ցանկանում մշել գուսան Աշոտ ստեղծագործողի պարագայում:

Շամանակը ոչ միայն գիտության, այլև բոլոր առումներով նպաստավոր ու բարեհաճ էր այդ երեք գուսանների հանդեպ: Անցյալ դարի 50-ական թվականներից մվագախմբեր, փոքրիկ համույթներ ստեղծվեցին ուսումնական հաստատություններում, գործարաններում, ամենուր ինքնագործ աշուղական երգեր էին հնչեցնում, 1956 թվականից սկսեց գործել հայկական հեռուստատեսությունը: Այս ամենը համընկան գուսան Աշոտի ստեղծագործական վերելքի հետ, եւ նա ստեղծագործական երջանիկ կյանքով ապրեց: Նա ոչ միայն իր ծննդավայրում եւ մայրաքաղաքում, այլև ողջ

Հայաստանում, Սփյուռքում եւ Ղարաբաղում մեծ ճանաչում ձեռք բերեց: Նրա երգերի համահեղինակներ կարելի է համարել նրա ժամանակակից հրաշալի կոմպոզիտորներին, որոնք եղան եւ Աշոտի, եւ խորհրդային շրջանի գուսան-աշուղների (ինչպես կուզեք կոչել) ուսուցիչները, նրանց երգերի նուստագրման, շտկման, հղկման, գործիքավորման առումներով: Համերգի ժամանակ հայտարարում են գուսան Աշոտ՝ «Օջախում»: Բայց այդ երգի ամբողջ մվագախմբային համակարգը ինչպե՞ս ստեղծվեց: Դա գուսանի եւ պրոֆեսիոնալ կոմպոզիտորների համատեղ աշխատանքի արդյունք էր: Իսկ Աշոտը բարեբախտություն ունեցավ շփվել հայ կոմպոզիտորական դպրոցի ճանաչված անունների հետ՝ Գրիգոր Հախիճյան, Մանվել Բեգլարյան, Ստեփան Ջրբաշյան, Արմեն Մանդակունյան, Արամ Մերանգուլյան: Ահա կոմպոզիտորների եւ երաժիշտ կատարողների ոչ լրիվ ցանկը, որոնք օգտակար եղան վարպետին: Նրանց հանձնարարվում էր ստեղծել վարպետի երգերի գործիքային մվագակցությունները, եւ ծնվում ու տարածվում էին նրա բանաստեղծական եւ մեղեդիական միաձուլումից ծնված քնարական երգերը: Իհարկե, չպիտի մոռանանք եւ արժանի մատուցեց նրա երգերը կատարողներին: Այս առումով եւս բախտավոր էր, իր ստեղծագործությունների հրաշալի կատարողներ ու-

ՎԱՐՄ ՕՐԲԵՆԱՆ

ՀԱՐՈՒՄԱԿՈՒԹՅՈՒՆ

Ռուբեն Դադայանի «Անավարտ քնարը»

Գուսան Աշոտի որդին է: Տարբեր տարիների գրված բանաստեղծությունները, քառյակները, աֆորիզմներն ու գրական հարցերին նվիրված հոդվածները տեղ են գտել նրա մահից հետո լույս տեսած «Անավարտ քնար» գրքուկում: Ներկայացնում ենք Ռուբեն Դադայանի բանաստեղծություններից երկուսը:



ՔԱՆԻ ԵՐԵԿՈ, ՔԱՆԻ՝ ԱՌԱՎՈՏ...

Քանի երեկո, քանի՛ առավոտ, Եղա աշխարհում գրկված ու կարոտ Հայրենի հողից, հայրենի ջրից Ու հեռվից եկող ջերմագին գրի:

Քանի երեկո, քանի՛ առավոտ Եղա աշուն պես դժգոյն ու թախծոտ, Անխիղ, անծիծաղ, լալախար երգով Ու հին վերքերիս ավեցող վերքով:

Քանի երեկո, քանի՛ առավոտ Երազներն իմ հեռավոր ու մոտ Եղան անկատար, եղան խորտակված, Բայց հույսով հզոր մնացին ապրած:

ՎԻՐԱՎՈՐ ՄԻ ԿՈՌԻՆԿ ՏԵՍԱ

Մի վիրավոր կռուկ տեսա՝ ընկած ճամփի քարերում, Նետահարված ու արյունոտ, ուժը հատված թևերում, Վիրավոր էր, ա՛խ նա կրծքից, թեղ ջարդված, արմաներկ, Ընկած անզոր, անօգնական, սակայն կրակն աչքերում:

Ասի՛ կռուկ, ո՞ր երամից, ո՞ր երկրից ես հեռավոր, Արյոք գիտի՞ երամը քո, որ ընկած ես վիրավոր, Օտար երկրում, խորթ երկնի տակ, դարձած տերեւ ցրտահար, Դարձած զոհը այս քարերի, դու վիրավոր, մե՛նավոր:

Թող էր նա երկար ճամփա, անցել հազար ջուր-կրակ, Չէր վնասել նրան անգամ ոչ փոթորիկ, ոչ կայծակ, Սակայն կրծքին դե՛մ էր առել թունոտ մի նետ չարանենգ... Թողել նրան հեռու՝ հեռվում, մե՛նակ օտար երկնի տակ...

ՔԱՐԵՐ, ՈՐՈՍՑԻՑ ՔՆԱՐՍ Է ԲՈՒՄՆՈՒՄ ԳՈՒՄԱՆԻ

ՀԱՄՈ ՍԱՅՄԱՆ. Ես ձեր երգն եմ երգում նորից, -

- Մեկը մեկի ուսին թիկնած,
- Մեկը մեկի շոգից շիկնած,
- Մեկը մեկի վրա թեքված,
- Մեկը մեկից ահաբեկված
- Խամրած քարեր
- Մամռած քարեր
- Կիրճերն ի վար անփութորեն
- Փռված քարեր Հայաստանի,
- Չեր բախտի հետ հաշտված քարեր
- Հազար տարի
- Պաշտված քարեր Հայաստանի...



ԳՈՒՄԱՆԻ ԵՐԳԱՇՄԱՐՅՈՒՄ ՍՅՈՒՆՅԱՑ ՍԱՐԵՐ

Հազար ու մի երգում գոված սար եմ տեսել, Բայց միշտ ձեր կարոտը քաշել Սյունաց սարեր, Ասես մեծ վարպետ Նաղաշի ձեռքն է հասել, Ծաղիկների գույն-գույն նախշել, Սյունաց սարեր, Ինձ մոր սրտով ձեր գիրկն առեք, Սյունաց սարեր: Յայլաների ծովսը սահող երամ դառած, Իմ նազելին երամի մեջ երազ դառած:

Ծաղկիդ բույրը հազար դաշտ ու ձոր կլցնի, Հազար ցամաք հողի, քարի շուրթ կբացի, Տուն կբերեք ձեր պանդուխտին, չեք կորցնի, Հովերդ ինձ ձեռքով կանեն Սյունաց սարեր, Ինձ մոր սրտով ձեր գիրկն առեք, Սյունաց սարեր:

Մարդուն քաջի ուժ կտա ձեր օղն ու ջուրը, Մուրք մոր նման օրոր կսաի գով գեփյուռը, Աշխարհով մեկ տարածվել է ձեր անունը, Չեզ հազարան խաղ եմ կանչել, Սյունաց սարեր, Ինձ մոր նման ձեր գիրկն առեք, Սյունաց սարեր:

Գուսան Աշոտ, Սյունաց հողը անարատ է, Չարի սերմը բուն չի դնի, անարմատ է, Մարդն արծիվ է, լեռնածին է, հրահատ է, Հազար հողմեր ձեզ չեն մաշել, Սյունաց սարեր: Ինձ մոր նման ձեր գիրկն առեք, Սյունաց սարեր: Յայլաներիդ ծովսը սահող երամ դառած, Իմ նազելին երամի մեջ երազ դառած:

ԳՈՒՄԱՆԻ ՕՋԱՏՈՒՄ

ՀԱՄԼԵՏ ԴԱԴԱԼՅԱՆ.

«Նրա երգի ձայնն իմ ականջում է...»

«Միշտ, երբ առիթ է լինում պատմելու հորս մասին, սիրտս լցվում է ե՛ւ ուրախությամբ, ե՛ւ տխրությամբ, - ասում է Համլետ Աշոտի Դադալյանը: - Տխրությամբ, որովհետև նա մեզ հետ չէ, ուրախությամբ, որ անունը մեզ հետ է, մեր հոգում վառ ենք պահում այդ անունը... Նրա երգերը մեր սրտում են. միշտ երգում ենք թե՛ աշխատանքի պահին, թե՛ մտերմների շրջապատում...»

Համլետը գուսանի կրտսեր որդին է և այսօր կնոջ՝ Կիկոտրյայի հետ ապրում է հայրական օջախում:

Գուսանը ուներ 3 զավակ. ավագ որդին՝ Ռուբենը մահացել է 45 տարեկանում, դուստրը՝ Արշալույսն ապրում է Երեւանում:

Ռուբենը ունեցել է երեք զավակ՝ Աշոտ (ավագ թոռն է, կոչել են պապի անունով), Ազամատ, Անուշ: Համլետի զավակներն են՝ Հարություն (պապը կոչել է Սայաթ-Նովայի անունով), Հայրապետ (գուսանի հոր անունն է), Հայկ, Հասմիկ (գուսանի առաջին կնոջ անունն է): Արշալույսն ուներ որդի՝ Արմեն:

Գուսանի առաջին կինը՝ Հասմիկը (զավակների մայրն է) մահացել է 1944 թվին, երբ կրտսեր որդին 5-6 ամսական է եղել:


Գուսանը 2-րդ անգամ է ամուսնացել. երկրորդ կինը՝ Աշխենն էլ մահացել է 1951 թվին ավտոկթարից: «Հայրս համերգների էր գնում, արտաքինով էլ զրավիչ էր. երեւի խանդի զգացումից որդեկան ձայնով ստիպում է իր համար քանոն գնել: Նվագել է սովորում, որ ամուսնու հետ շրջագայի՝ որպես անսամբլի անդամ: Այն ժամանակ էլ իբրև տրանսպորտ բեռնատարներն էին ծառայում: Մի անգամ էլ, երբ մեկնում էին քարաղ տանող մեքենայով, այն շրջվում է...», - պատմում է որդին:

Դրանից հետո, ըստ Համլետի, հայրը տեղափոխվում է Երեւան, մի քանի տարի վշտից Գորիս չի գալիս, տանում է նաև զավակներին: Ինքը միջնակարգ մասնագիտական կրթություն ստանալուց հետո 1965թ. ամուսնանում ու վերադառնում է այստեղ՝ հայրենի տունը շեն պահելու համար:

Իսկ գուսանի կյանքի վերջին ընկերուհին եղել է Արաքսյա Դալեչյանը, որը մահացավ 2006թ. սկզբին:

Գուսանը սկզբում իբրև գառնարած սրինգ է նվագել: Հետո սրինգը փոխարինվել է քամանչայով. գնում է Բաբո, խնդրում մեծ երգերը իր համար քամանչա առնել: Աշոտի այդ առաջին գործիքը, որ տասնամյակների պատմություն ունի, ժամանակի ընթացքում ձեռափոխվել, վերանորոգվել, նախապատվել է, մինչև հիմա պահպանվում է Գորիսի տանը: Որդին ասում է, որ հայրը քամանչայի հետ շատ զգուշորեն է վարվել:

«Կենցաղում զուսպ էր, չէր սիրում շոտլանդական զուսպը, - պատմում է Համլետը, - համեստ կյանք էր վարում: Ուրիշների նման խորհրդային շրջանում կարող էր օգտվել իր «արտոնություններից»: Սիրում էր գյուղական ճաշատեսակներ՝ դավուրման, «ճղթթոն», թոնրածաշու, պակաթանը, թփով տոլման: Սիրում էր, որ մառախուղ միշտ տնական գինի էր օղի լիներ: Պետական գինի չէր սիրում. ուներ ծանոթ գինեգործներ ե՛ւ այստեղ, եւ Երեւանում, բայց չափավոր էր խմում: Տոններից ամենաշատը սիրում էր նոր տարին. նախօրոք, ասենք մի ամիս առաջ նախապատրաստվում էր. նոր տարուն նվիրված երգեր էլ ունի: Սիրում էր փայտի վառարան: Գազը չէր սիրում, չնայած ամենաառաջինը նրա տունն էին գազ անցկացրել, բայց էլի փայտի վառարան էր դնում...»



Հիշում է, որ հայրը քիչ էր քնում, անընդհատ հորինում էր, եւ գիշերները միշտ նրա երգի ձայնն իր ականջում էր եղել: Եվ այդ երգերն իր սրտի մեջ տպավորվել են. մանկությունից վկա է եղել ամեն երգի, ստեղծագործության ծնվելուն: Նա չէր հորինում եւ ասում վերջ: Իր հորինվածքը նորից մի քանի անգամ մշակում էր. ձեռագրերում էլ կա

նույն երգը՝ մի քանի անգամ մշակված: Այդպես էր հասնում կատարելության: «Չէր սիրում երկար քնել ու քնկոտ մարդկանց: Ինձ էլ էր ասում՝ շոտ արթնացիր: Առավոտ վաղ վեր էր կենում. գնում, Գորիսում մի հատ շրջում (նույնը՝ նաև Երեւանում ապրելիս): Սիրում էր առավոտյան ցողը, օդը, դուրս էր գալիս, շրջագայում, որ տեսնի՝ ինչ կա-չկա...»

Գուսանը երաժշտական կրթություն չուներ, եւ չնայած ինքը չէր նուտագրում երգերը, բայց գիտեր նուտաները:

Երեւանում ապրելու տարիներին, որդու պատմելով, տոնական կամ այլ հիշարժան օրերին իրենց տանը միշտ հավաքվում էին արվեստի մեծերը՝ գրողներ, երգիչներ եւ այլն... Տան հիմնական այցելուներն էին Համո Սահյանը, Սերո Խանգաղյանը, Սուրեն Այվազյանը, Գարեգին Հովսեփյանը: Շատ անգամ են հյուր եղել Օֆելյա Համբարձումյանը, Ռուբեն Մաթեոսյանը, Բաֆֆի Հովհաննիսյանը, Բելա Դարբինյանը, Վարդուհի Խաչատրյանը, Հովհաննես Բաղդասյանը, Աստղիկ Քամայանը, Լուսին Քոչյանը, մշակույթի ոլորտի աշխատողներ:

ներ:

Աշոտը խորությամբ գիտեր միջնադարյան աշուղական արվեստը, միշտ ընթերցում եւ ընթերցել էր տալիս ներկայիս եւ միջնադարի բանաստեղծներին, Նարեկացի, Հաֆիզ, Խայամ, Սաադի էր սիրում:

Որդու պատմելով՝ աշուղներից սիրում էր Նաղաշ Հովնաթան, Միսկին-Բուրջի, Սայաթ-Նովա, Ջիվանի, Շերամ: Մանուկ տարիներին նրան ոգեշնչել է գորիսեցի Աթան: Ժամանակակիցներից բոլորի հետ էր շփվում, բայց շատ էր հավանում Շահինին:

Հետաքրքրվում են այսօրվա իշխանությունները գուսանով. «Դե, գուսանի հիշատակի հավերժացման ուղղությամբ քայլեր են արվել. Գորիսի կենտրոնական փողոցներից մեկը, որտեղ ինքը սիրում էր կանգնել, անվանակոչվել է գուսանի անունով, այնտեղ հուշատախտակ կա: Նրա անունով է կոչվում Գորիսի մշակույթի կենտրոնը, որի դիմաց դրված է կիսանդրին... Բա որ մշակույթի կենտրոնը նրա անունով է, արձանն էլ դրել են դեմը, գուսանի տղան այստեղ նստած է, երբ միջոցառում է լինում, ինչո՞ւ մի հրավիրատուն էլ չեն ուղարկում Աշոտի ընտանիքին, որ մի ներկայացման կամ համերգի ներկա լինի: Ել ինչպե՞ս են հարգում...»

Ի դեպ, մեր գրույցը Համլետը երբեմն ընդհատում եւ հոր երգերն էր երգում. ինքն իր համար առանձնացրել էր արտագրել է առավել սրտամոտ երգերը, որ միշտ ձեռքի տակ լինեն: Իրեն երգիչ չի համարում, բայց «սրտով» է երգում, հուզմունքով, ապրում հոր ամեն մի տողով: Նաև ստեղծագործում է. բայց ասում է, որ հայրական զենն առավել շատ փոխանցվել էր վաղամեռի եղբորը Ռուբենին: Ինքն է նախածեմել մահվանից հետո եղբոր գրվածքների լույս ընծայումը: «Չեմ ասում, թե բանաստեղծ եմ, ինքս ինձ համար գրում եմ ինչ որ իմ սրտից բխում է: Իսկ այ՝ Ռոբերտը նաև նվագում էր շվի, դուդուկ, թառ, քամանչա, ակորդեոն...»:

Հայրը անտիպ գործեր է թողել, որ հիմա խմամբով պահում են ժառանգները: Իհարկե, որդին վստահ չէ, որ իր մոտ բոլոր անտիպներն են, չի բացառվում, որ այլ տեղերում, այլ մարդկանց մոտ էլ մնացած լինեն: Ինքը նաև դրանց՝ դեռևս համրության սեփականությունը չդարձած երգերի մեղեդիներն է հիշում, երգում, ափսոսում, որ դրանց հրապարակման գործը կիսատ մնաց...

Գուսանը վերջին երգարանը՝ «Լեռները կանգնում են», հրապարակելուց հետո պիտի ժողովածուում ընդգրկված երգերը նաև նուտագրված տպագրեր: «Նրա յուրաքանչյուր երգարան սկզբում հրապարակվում էր փոքր գրքով՝ միայն տեքստը, հետո մեծ գրքով՝ արդեն նուտաներով տարբերակը, - ասում է որդին: - Բայց վերջինն այդպես

էլ կիսատ մնաց, մահը խանգարեց: Նաև նուտաների խմբագիրը մահացավ՝ կոմպոզիտոր Լեւոն Տեր-Աստվածատրյանը, որը նրա նախկին երգարանների երաժշտական խմբագիրն է եղել...»

Հայրը նաև նպատակ ուներ «Հավերժություն» անունով երգարան հրատարակել, որի մեջ պետք է ներառվեին ե՛ւ անտիպները, եւ նախկին գործերի ընտրանին:

Գուսանը մի անտիպ հետաքրքիր գործ էլ է թողել, որը տարբերվում է նրա մյուս ստեղծագործություններից եւ ուսումնասիրման կարիք ունի: Դա երգախառը հեքիաթ է եւ կոչվում է «Արարատ եւ Ոսկեհատ»: Այն ունի չափածո մուտք, ընթացքում հեքիաթ էլ պատմվում է, եւ կան չափածո մասեր, որոնք երգվում են. դրանք նուտագրված են: Համլետն ասում է, որ կուզենար այն նկարագրողուններով տպագրված տեսնել:

Թե՛ նախկինում, թե՛ հիմա երաժշտական գրագողության էլ են ականատես լինում. «Ունեմ արդեն դեղնած սամակներ, որտեղ գուսան Աշոտին պատմում են, թե այսինչ տեղը լսեցի երգ ուրիշի անվամբ, վիճեցի, թե սա ձեր երգն է: Գողանում են, - ցավով պատմում է որդին: - Մենք էլ ենք երբեմն երաժշտություն կամ խոսքեր լսում մի քիչ փոխված, գիտենք, որ իրենք է: Տեքստը դեռ ոչինչ, բայց որ երաժշտությունն են գողանում ու աղավաղում, ցավում են: Երգեր կան, որ ուրիշների կատարմամբ լսում են, երաժշտությունն ինձ հիշեցնում է նրա երգերի մեղեդիները...»:

Գուսան Աշոտը եւ Երեւանում, եւ Գորիսում խումբ է ունեցել, որի հետ շրջել է Հայաստանի գյուղերում եւ քաղաքներում: Կազմը միշտ նույնը չի եղել, բազմիցս փոխվել է: Նրանում ընդգրկված են եղել երգիչներ, տարբեր երաժշտական գործիք նվագողներ՝ դիդլ, սագ, շվի, ակորդեոն, քանոն, սանթուր, քամանչա, դուդուկ, կլարնետ: Խմբով համերգներ է տվել նաև Հայաստանից դուրս՝ Վրաստան, Ադրբեջան, Միջին Ասիա, Ռուսաստանի հայաշատ վայրեր: Տանը պահպանվել են համերգների ազդագրերը:

Նրան շատ էին հրավիրում նաև խնայքների, հարսանիքների: «Գորիսում շատ է պատահել, որ իրեն հատուկ եկել-տարել են: Եվ չնայած ինքը սովորական սագանդարություն անող չէր, իր քամանչայով գնացել է, չի մերժել...», - հիշում է որդին:

Ո՞րն է եղել հորից ստացած ամենակարեւոր խրատը. «Ինձ էլ է ասել, իր գրվածքների մեջ էլ է ասում՝ միշտ եղիր ազնիվ. առաջին պայմանը սա էր... Եղիր աշխատասեր, շտապ, հարգիր մեծին, ընկածին բարձրացրու...»:

ԱՐՄԻՆԵ ԱՎԱԳՅԱՆ

ԳՈՒՄԱՆԻ ԵՐԳԱՇԽԱՐՀՈՒՄ

ՀԱՅՐԻԿ

Օջախդ շեն, այգիդ՝ ընդմիշտ դալար է, Ո՛վ այգեպան, իմաստուն իմ հայրիկ, Մայր Արազի նման սերդ վարար է, Իմ աչքի լույս, իմ սրտիս այուն, իմ հայրիկ: Բարի հայրիկ, խրատներդ լսել եմ, Սրտիս բոլոր մտրազներին հասել եմ:

Միշտ ծաղկում են գգած այգուդ ծառերը, Գարնան երգով կարկաչում են ջրերը, Կանաչել են, կանաչ հագել քարերը, Հոգիս մատաղ քո սուրբ հոգում, իմ հայրիկ, Բարի հայրիկ, խրատներդ լսել եմ, Սրտիս բոլոր մտրազներին հասել եմ:

Գուսան Աշոտ, հայրը փառքն է օջախի, Հույսը, լույսը բարի կամքն է օջախի, Նվիրական վառ կրակն է օջախի, Լույս եւ տալիս սրտիս անքուն, իմ հայրիկ: Բարի հայրիկ, խրատներդ լսել եմ, Սրտիս բոլոր մտրազներին հասել եմ:

ԳՐԱՎԳ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գորիսյան բանահյուսության նշխարներ, որ կյանքի վերջին փարիներին հավաքում էր եւ ի մի բերում

Գուսան Աշոտը փորձում էր փրկել ժողովրդական բանահյուսության նշխարները՝ անթերջված գորիսեցիների հիշողության մեջ: Եվ այդ նպատակով խնդիր դրեց շրջել Գորիսի շրջանի բոլոր գյուղերով՝ հանդիպել տարեց մարդկանց, վեր հանել եղած երգերը, գրառել, մշակել, նուտագրել դրանք: Գուսան Աշոտն իրեն օգնականներ ընտրեց ճանաչված երաժիշտ Վալերիկ Գասպարյանին եւ Գորիսի շրջանային կուլտուրայի բաժնի վարիչ Սամվել Ալեքսանյանին: Դա 80-ականների կեսերին էր: Մոտ վեց ամիս գուսանը զբաղվեց այդ գործով: Կարեւոր այդ գործը, սակայն կիսատ մնաց, երբ առողջական վիճակի պատճառով նա այլևս չէր կարողանում շրջագայություններ կատարել: Այդ ընթացքում հավաքվեցին մի քանի տասնյակ քառյակներ, բանաստեղծություններ, երգեր: Երգերը նուտագրելու խնդիր ուներ Վալերիկ Գասպարյանը: Իսկ քառյակների, բանաստեղծությունների, երգերի տեքստը հավաքում էր Սամվել Ալեքսանյանը: Դրանք մինչև այժմ պահպանվում են վերջինիս մոտ՝ այն տեքստով, ինչպես որ գորիսեցիները ներկայացնում էին գուսանին:

Սիւս հավաքված մասունքներից մեկը:

Էսքան բոռ կյալ կինի, Էսքան սել ու սուլ կինի, Եկեք ճուխ ման ածենք, Ախր արտը լաց կինի:

Ճուխ-ճուխ մեր ճուխ, Սըվըքետկալ մեր ճուխ, Թուռաքափա, սե լելա, Սըվըլեչակ մեր ճուխ:

Ճուխն քիցենք էս ծովը, Ծովը ծրանի տառնա, Վեր աչք պանա էս հողը, Կողկերքը հիլի տառնա:

Կյախը պերեք նի քաշենք, Չուվան պերեք տուս քաշենք, Պերեք վարսին յեղ քիցենք, Անդին-հանդին լուս քաշենք:

Ճուխ-ճուխ մեր ճուխ, Սըվըքետկալ մեր ճուխ, Թուռաքափա, սե լելա, Սըվըլեչակ մեր ճուխ:

Գուսան Աշոփի մասին.

ՀՈՒՇԻ ԹԵՐԹԻԿՆԵՐ

«Երկրորդ ամենամեծ զանգեզուրցին է». Համո Սահյանն է ասում



ՈՐՈՇՐՍ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԸ երկար տարիներ ղեկավարել է Գորիսի շրջանը եւ մտերիմ է եղել գուսան Աշոփի հետ: Այսօր էլ նա գուսանի ընտանիքի ջերմ բարեկամն է, եւ այս գրույցը կայացել է Դադախյանների օջախում:

- Գուսանի հետ վաղուց էինք ծանոթ. հայրս՝ Արմենակ Խաչատրյանը եւ նա ընկերներ էին: Չեմ կարող ասել, թե երբ եմ ծանոթացել նրա հետ, որովհետեւ միշտ միմյանց տուն էինք այցելում: Հայրիկս մահից հետո շարունակվեց այդ բարեկամությունը՝ չնայած տարիքային մեծ տարբերությանը: Շատ էի սիրում իրեն, իր երգն էի սիրում, փիլիսոփայությանը մերծծված իր բանաստեղծությունն էի սիրում:

Չնայած ինքս մոտ 20 տարի շրջանի ղեկավարն եմ եղել, կարծում եմ եւ նախկին, եւ այսօրվա իշխանությունը չկարողացավ ըստ արժանիքի գնահատել Աշոփին: Սա մեր եւ ապագա սերունդների խնդիրն է: Գոնե իր մահից այսքան տարի հետո գուսանը պետք է գնահատվի ըստ արժանիքի:

- Իսկ ինչպե՞ս էր վերաբերվում մեծարանքին, գնահատանքին, ուշադրությանը: Ի՞նչ վերաբերումը ուներ մարդկանց հանդեպ:

- Արտակարգ համեստ անձնավորություն էր, մարդամոտ, բարի: Ինքը սիրում էր մարդկանց. բնությունն իրեն այդպիսին էր ստեղծել: Ուրախանում էր Գորիսի ամեն ինչով, գորիսեցիների ամենափոքր հաջողություններով: Երբեք էլ չէր տեսել նրա զայրանալը, ջղայնանալը: Չարությունը բացակայում էր նրա մեջ: Ու նաեւ հուճկոյի մեծ զգացում ուներ:

Մի անգամ Սիսիանի ղեկավարները, ընկերները հրավիրել էին գորիսեցիներին՝ օրը միասին անցկացնելու: Ներկա էր նաեւ Համո Սահյանը: Սիսիանի շրջանի առաջին քարտուղար Կիմ Հովհաննիսյանն առաջարկեց խմել ամենամեծ զանգեզուրցու: Համո Սահյանի, կենցաղը: Երբ բոլորս մեծարանքի խոսքեր էինք հղում բանաստեղծին, նա ասաց. «Ամենամեծ զանգեզուրցին ես չեմ, Ակսել Բակունցն է: Երկրորդ մեծը՝ գուսան Աշոփը: Մնացածը «ջահելներ» են... Հետո կիմանաք՝ ով էր գուսան Աշոփը»:

Նրա երգը շատ եմ լսել նաեւ արտասահմանում՝ Սիրիայում, Լիբանանում, Հունաստանում, Ֆրանսիայում եւ այլ երկրներում: Ինձ համար մեծ հայտնագործություն էր, երբ Հայկազի շոգ երեկոներին, փողոցով անցնելիս, հայկական գաղթօջախում լսում էի «Սերս վանքում Տաթևի» կամ «Ծովաստ-

ղիկ»... Նրա երգը լսել եմ անգամ Դեր-Չորում, որտեղ ընդամենը 17 հայ ընտանիք կար: Սա ցույց է տալիս, թե ինչպիսի հանրապետություն էր կար նրա երգարվեստի համընդհանուր հայրենիքում, թե՛ Սփյուռքում:

- Որո՞նք էին նրա սիրած վայրերը. Գորիս քաղաքում եւ դրանից դուրս որտե՞ղ էր սիրում լինել:

- Իրեն հատուկ քայլվածքով տնից դուրս էր գալիս, փողոցով իջնում ներքեւ մինչեւ խաչմերուկը՝ ուսուցչի տան մոտ, որտեղ հիմա հուշաքարն է փակցված: Հիմնականում այնտեղ էր կանգնում, այդ վայրում էին գորիսեցիները հանդիպում նրան: Դրսից եկած հյուրերն էլ անցնելիս՝ զարմացած մտնեցին էին. խոսում էր բոլորի հետ:

Հին հնձորեսկն էր շատ սիրում: Սիրում էր Տաթևի վանքը եւ այդ ձորը, Որոտանի կիրճը:

- Որեւէ սովորույթ, ավանդույթ հիշո՞ւմ եք նրա կենցաղից, որը բնորոշ էր իրեն:

- Ամեն տարի աշնանը Գորիսում իր հարկի տակ հավաքում էր մտերիմներին՝ մի օր միասին անցկացնելու համար: Շատ չէր խմում, բայց գինի սիրում էր, քիչ-միջ օգտագործում էր: Ամբողջ օրը միասին էինք անցկացնում: Ձրուցում էինք, երգում, պարում, հուշեր, պատմություններ պատմում: Ինքն ու տիկին Արաքսյան երգում էին: Այդ հանդիպումները դրանց մասնակիցների հիշողությունների մեջ երկար կմնան...

- Ինչպե՞ս ընտրեցիք գուսանի աշունքն ամփոփելու վայրը:

- Մի անգամ մտերմիկ գրույցի ժամանակ գուսանն ինձ ուղիղ ձեռով հասկացրեց, որ կուզեր իրեն այդտեղ, այդ բլրի վրա թաղեն: Իհարկե, այդ ժամանակ ասացի, որ դեռ պատեհ ժամանակը չէ այդ մասին խոսելու...


Մահվանից հետո հուղարկավորման համար ընտրեցինք այդ վայրը: Գորիսի գրեթե ամեն տեղից այն երեւում է. մի տեսակ հույսի, լույսի խորհուրդ կա մեջը, նեղն ընկած մարդը լիցքավորվում է: Այդ բարձունքից էլ Գորիսն է երեւում:

Ծանր, շատ ցուրտ օր էր, երբ ճանապարհում էինք գուսանին: Ողջ քաղաքն էր մասնակցում հուղարկավորությանը: Շատ էին եկել շրջանի գյուղերից, դրսից: Բոլորն էին ուզում վերջին հրաժեշտը տալ նրան:


- Քանի որ հորեյանը գուսան Աշոփի արվեստի, հիշատակի հանդեպ ուշադրություն հրավիրելու եւս մեկ առիթ է, ի՞նչ կառաջարկեք անել նրան ըստ արժանիքի գնահատելու համար:

- Կիսնդրեի պետական այրերին Գորիսում կամ Երեւանում գուսանի թանգարանի բացման խնդիրը լուծել: Շատ կուզեմայի նաեւ նրա ստեղծագործությունների հատընտիրը հրատարակված տեսնել: Կփորձեն դիմել ում կարող եմ... Նա արժանի ոչ միայն սրան, այլև շատ ուրիշ արժեւորումների:

ԱՐՄԻՆԵ ԱՎԱԳՅԱՆ



Ասա, անունդ մաա, անունդ...



ԱՐՄԵՆԱԿ ԱՎԱԳՅԱՆ

Միջօրե էր, արեւը երկնքից կրակ էր թափում: Օդը կանգնած էր: Շնչառատ էի լինում շուրջ: Տեսա, որ մտերիմներս չեն երեւում, թեքվեցի դեպի գետնայգի, մտածելով, որ այստեղ հով կլինի: Իրոք, որ սպասածից լավ էր: Թափուր տեղ չկար: Ձրուցում կենտրոնը մարդաշատ էր, մտտեցա:

Գուսանը նստել էր իր տարեկիցների միջեւ եւ տաք-տաք գրույց էր անում: Բարեկեցի, ընդունեց բարեւս եւ նշան արեց, որ տեղ չգնամ: Չնայած ուղեքն չէիմ դիմանում, մնացի: Չգացի, որ գրույցը շատ է ջուր տանում, տեղ զբաղեցրի կից նստարանի ծայրին ունկս դեպի ետ, դեպի գուսանը, դեպի խորհուրդն ու խորհրդավորը:

Մի անձանոթ մտտեցավ, ամաչ-ամաչ բարեկեց ու տեղավորվեց կողքիս: Ուշադրությունս հետեւում էր, Գուսանը մի նորաբուխ երգի նախանված էր գնում, երթուխս սարսուղ էր... Գոհացման խոսքեր լսվեցին, ունկնդիրների դեմքերը պայծառացան ու սկսեցին շափաղ-շափաղ անել:

- Հը, դուրդ եկավ, - դիմեցի հարեւանիս:

- Հիասքանչ էր, հիասքանչ, - գլուխը օրորելով ասաց նա:

- Ի՞նչ խոսք, որ մեծ է գուսանը, մեծ, մեր ամենահայրցն է, հավիտենության շողերից է հյուսում իր երգերը ու երիցս կգնա, - ասացի:

- Ես էլ եմ հորինում, գուսան եմ, - վախվորած ասաց գրուցակիցս՝ շիկնելով:

Ականջներս չհավատացի.

- Այս երգվանի՞ց, ինչպե՞ս, որտեղի՞ց, - հարցրի:

- Դե հորինում եմ էլի, հարթաշենցի եմ, - հաստատեց նա:

- Է՛հ քանի մի արա՛, Հարթաշենցի՞ն, գուսանն ո՞ր, գիտե՞մ բանաստեղծ ունե՞ք, իսկ թո մասին բոլորովին չե՞մ լսել:

- Չայն է՞լ ես տալիս:
- Հա՛, բա ո՞նց, եւ ծայն եմ տալիս, եւ տեքստ եմ գրում, դեռ երգում էլ եմ...
- Դե, ասա կարգին մարդու հետ եմ էլի հարեւանացել...
Խնդրեցի, որ մի բան կատարի, փորձը հո փորձանք չէ: Չմերժեց:
Տպավորությունս մեծ էր, ներքուստ ուրախացա, որ ի վերջո նոր գուսան է հայտնվել Այուրայց աշխարհում, առանց սագի ու քամանջայի եւ մտքումս հանկարծակի հղացավ առիթն օգտագործել ու ներկայացնել գուսանին: Նստարանն ասեւ բեռնաթափվել էր, մոտեցանք: Ներկայացրի եւ ասացի, թե ինչը ինչո՞ց է:

- Չէ՛, մեր տղա՛, դժվար բան ես վիզ առել, գուսան դառնալը հո հաճաք-մասխարա չի, դա կոչում է, ինքնուրթուն է, դա կյանք է, տարիների փորձ ու իմաստություն: Հետո, պիտի տրված լինի, պիտի ծնվել...
Երիտասարդը ավելի համառ էր, քան ես կարծում էի, պնդեց, որ հորինում է, ինքը գտնում է, որ իր կոչումն էլ դա է:

- Սիգուցե, ո՞վ գիտե, միջամտեցի, թող մի բան կատարի, եթե չհավանես էլ, ոչինչ չի տուժի: Չընդդիմացավ: Նա քաշվելով մի երգ կատարեց, եւ գյուտ արածի պես ցնծում էի... Չհավանեց... Ասեւ զվիսի սառը ջուր լցրեցին: Սկսեց հարցեր տալ երգերի տեսակների, չափերի, ուղեքնի, գուսանական տերմինների մասին, հազար ու մի բան...
Չափեղ համարյա թե բոբիկ էր, որտեղից գիտեմար մնան բաներ, ո՞չ երաժիշտ էր, ո՞չ կերթություն ուներ, ո՞չ տեսել էր ոչ էլ լսել: Մեկը իմաստության տաճար էր, վաստակած հավերժություն, աշխարհի հազար ու մի կեռամաններով անցած, աշխարհը՝ աշխարհի մեջ, մյուսը՝ անփորձ ու օգնության կարոտ, կանաչ արահետ:

- Չէ՛, չէ՛, թույլ է, պիտի մաքրել, հստակեցնել, երգը տառապանքի գինն է...
- Եթե ուժեղ լինեք, իմաստ չէր ունենա մոտենալը, - ասացի, - պիտի օգնեք, ուղղություն տալ, թույլ ուժեղացնել, տեղը-տեղիք բերել, դա է շահեկանը, իսկ վարպետը մնում է վարպետ, սա՛նը՝ սա՛ն...
- Եթե անուր ես բռնել, տար, ժամանակը իրենը կասի, դժվար է, դժվար, - ասաց ու վեր կացավ: Գուսանը ասաց.
- Յանի դու հավան կցա՞ր, ախր

դու ամեն բանի հավան կենող չես, երանց էր...

- Գուսան, խոսքը մեր մեջ, լավ էր, մի քիչ ծայնի մեջ թույլ երանգ կար, այն կարելի է ուղղել, իզուր ես վատաբանում, երկիրս հո մի օրում չեն կառուցել:

- Դեռ մի երկունս էլ քո քաղաքում կա: Անբան եմ, անբան, մի-մի երգ եմ գրել, թե մենք ենք որ կանք, բա դա մեզ պատի՞վ է բերում, պիտի հետեւողական լինել, գիշեր ու գոր մտմտալ, մեր լուսահոգի գուսանների նման, յանի հիմա քանի գուսան կա է՛...
- Քեզ նմանը չկա ու չի էլ լինելու, դու մի աշխարհ ես, բայց քո անտարբեր ձեւանալը հիմքեր չունի ու իրեն էլ չի արդարացնում, պիտի սատար լինել, թե տալ, թխասմոր պես աճեցնել, հետո թե թույլ էլ լինի, դեռ չլինելուց լավ ա...
Վերջին բառերիս նշանակություն տալով լրջացած ասաց.
- Յանի քե՛ֆա՛վը էր, - ուզում էր հաստատեմ պնդումս:
Դա իմ համոզումն է, պիտի օգնել տղային, գուսանական երգը քանի գնում, մարում է, իսկ մեր ինքնությունը՝ կորում, մենք ենք կորչում աշխարհի երեսից ու մեր երգը: - Երգը պիտի իր մեջ լինի, իր մեջ, գլուխս ինչերի է՛ տրաքել, ինչերի՛, - գիտեի գուսանի կյանքի ողիսականը ու տոն չտվեցի: Հետո, թե դե լսիր, թե բեկը, Շամխալ բեկը ինչ խորհուրդ է տվել ինձ:

- Մի օր ռադիոհամագույցից էինք գալիս, - սկսեց գուսանը, - ես էի ու թառախի Ղազարը, օդորմի հորա՛նց, էն ինչ թառախ՝ էր, ինչ թառախ՝ վիրտուոզ, երկնքից հավք էր իջեցնում, յանի՛ նրա նմանը էլի կծնվի: պահ, պահ, պահ... Հրաշք էր, հրաշք...
Չգացի, որ գրույցը երկարելու է, հիշեցրի:
- Բեկն է՛, բեկը, բեկը մնաց... իսկ էն ջախելն էլ...
- Հա՛, ճիշտ որ գրույցը գնաց, իսկ բեկը՝ մնաց: Ամոռաց օր էր: Ղազարի հետ հասել էինք մեր տան մոտ, բեկը պատշգամբից կանչում էր, որ բարձրանանք: Ղազարը հրաժարվեց, քամանջա քեւիս տակ ելա, ինքս ինձ մտածելով, թե բեկը իր խաչ էր գնացել, ու գլուխ չէի հանում: Բեկը հարգանքով վեր կացավ, երանի էն օրերի՛ն, ձեռք սեղմելով ասաց, որ լսել է «Չանգեզուրի չոր-չուրերը» երգը ու հավանել:

- Այստեղ շրթունքս կծեցի, բեկը լցրեց բաժակները, վերցրեց մի բաժակ ու հանդիսավոր, թե
- Աշուտ, էն կերած կաթը հալալ լինի, ուրախությունս անչափ է, որ Չանգեզուր աշխարհը քեզ ծնել ա, շատերն են եկել, քիմացալ եւ պերել են, եւ տարել, աշխարհը մնացել է, իսկ իրենք չկան... Դու աշխարհով մնաս ու աշխարհիկը, ու երգը թեւածի ծագե-ծագ, ու Գուսան Աշուտ անունը մնա հավերժին, հավիտենությանը, - մի քիչ շունչ առավ եւ շարունակեց, - պիտի ամուսնո՞ պահես, ամուսնո՞. «Ապրանքի կաշին է մնում, մարդու՝ ամուսնո՞», թե չես կարողանալու պահես, էսօրվանից հրաժարվի գուսան օծվելուց՝ օրհնությունս քեզ հետ...
- Ահա թե բեկն ինչ ասաց, - մեր Շամխալ բեկը, իմաստուն բեկը, էն բոլ-բոլ մուլքի շուքը գնացել է, պատերն են մնացել, բեկից էլ հուշն է մնացել, այս փոքրիկ հուշը...
Գուսանը խոր թառանջ քաշեց, երեկի ջախել օրերի հուշերի տուտն էր բռնել, թարմացել էին հիշողությունները, ճախր էին առնում եւ մտքերը հավքերի նման ու տանում էին ետ, դեպի անցյալը, մով սարերի մշուշը, Ղալու քարը, Տուրտ աղբյուրի կարկաչը, «Ոչխարհանգին» ու զառնուկների քաղցր մայունը: Հանկարծ սթափվեց. - Էն ջախելին էլ ասա, որ երկար-բարակ չմտածի՛ հորինի՛, հորինի՛, հորինի՛, տեղը տեղիք ունի, որ երգը ժողովրդին հասնի, եւ եւ նրան գուսան օծելու, ես, եւ դա իմ հոգու պարտքն է: Այդպես էլ եղավ...

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇՈՒՂԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

Աշուղական արվեստի առանձնահատկությունները

Ինչպե՞ս են այսօր աշուղ ձեռնարկվում

Երաժշտագետ, աշուղագետ Լուսինե Նազարյանը, որն աշխատում է «Սայաթ-Նովա» մշակութային միությունում (նաեւ երգչուհի է պարուհի է), պատմում է, որ 2001թ. միության շրջանակներում գործում է աշուղագիտական կենտրոն, որի նպատակը ոչ միայն անցյալի աշուղների ստեղծագործությունները պահպանելը, հրատարակելն ու քարոզելն է, այլեւ ներկայումս ստեղծագործող աշուղներով հետաքրքրվելը. նրանք թիվը արդեն անցնում է չորս տասնյակը: Աշուղները գրած երգերը բերում են իրենց մոտ, նոտագրում են, խմբագրում, պատրաստում հրատարակության: Այդ երգերից շատերն ընդգրկվում են «Սայաթ-Նովա» աշուղական երգի անսամբլի եւ այլ անսամբլների երգացանկում: Կազմակերպվում են նաեւ աշուղի ձեռնարկության արարողություններ:



Աշուղագետ Լուսինե Նազարյան

տո է երգը փոխադրվել հայերենի, դժվար է ասել: Բայց միանշանակ այն մեզանում դարձել է երգերի երգ», – ասում է պարոն Թովմասյանը:

Ինչպե՞ս է զարգացել

Երգնկացուց հետո մեր տաղերգուներն են աշուղական տաղաչափական ձեւերը կիրառել իրենց ստեղծագործություններում: Այդ ձեւերի կիրառումը նկատելի է նույնիսկ Ներսես Շնորհալու մոտ: Նրա «Առավոտ լուսոյ» եւ «Աշխարհի ամենայն» տաղերը գրվել են արաբերեն «ալիֆամա» կոչվող ձեւով: Բոլոր ժողովուրդների աշուղական արվեստի մեջ գործածվող տերմինները հիմնականում արաբերեն են: Թ.Պողոսյանն ասում է, որ այնուհետեւ աշուղական արվեստի զարեցությունը տեսանելի է տաղերգուներից Պետրոս Ղափանցու, առավելապես Պաղղասար Դպիրի մոտ: Նաղաշ Գովաթանով արդեն աշուղական արվեստը մեզանում լիահուն ընթացք ստացավ, որի բարձրագույն դրսևորումը Սայաթ-Նովան է:

«Իսկ Ձիվանին դարձավ այդ արվեստը վերջնականապես ազգայնացնող հեղինակը մեզանում. այդ արվեստը դարձրեց հայալեզու, իր ստեղծած մեղեդիներով ցույց տվեց, որ ունենք հզոր ժողովրդական եւ հոգեւոր երաժշտություն, որի հենքի վրա պիտի բարձրանար նաեւ աշուղական արվեստը: Մեղեդիներն ազատվեցին արեւելյան մեզ ոչ բնորոշ պաճուճանքներից, գեղեզանքներից: Նա հիմնադրեց է աշուղական արվեստի ազգային դպրոցի»:

Գուսանի եւ աշուղի միջև 1000 տարվա անջրպետ կա...

Գուսանական արվեստը մեր հնագույն, նախաքրիստոնեական մշակութային շերտն է, որն ունի հազարամյակների պատմություն: Այդ արվեստի մասին տեղեկություններ են փոխանցել Մովսես Խորենացին եւ Փավստոս Բուզանդը, որոնք նաեւ մեզ պատահիկներ են հասցրել հնագույն գուսանական երգերից. «Երկներ երկիրը», Արտաշեսի եւ Սաթենիկի ամուսնության պատմությունը, Արտավազդի մասին պակմությունը եւ այլն: Պրոֆեսոր Թովմաս Պողոսյանը պարզաբանում է, որ գուսանական եւ աշուղական արվեստը մասն են իրար ընդամենն այնքանով, որ երկուսն էլ երգարվեստի ճյուղեր են: Եվ գուսանը, եւ աշուղը երգ հորինողներ են, որոնք երգեր են կատարել իրենց իրենց նվագակցելով: «Սակայն նրանց միջև մոտ 1000

տարվա անջրպետ կա: Գուսանական արվեստին ավելի շուտ փոխառվելու եկավ տաղերգությունը: Հետո՝ միջնադարում արդեն, աշուղական արվեստը եղավ տաղերգության աշխարհիկ դրսևորումը: Եվ «գուսան» եւ «աշուղ» բառերը փոխառություններ են. առաջինը պահպակերեցի, երկրորդը՝ արաբերենից: Բայց երկուսն էլ այսօր հայկական բառեր են: Այս ձեւով նրանք չեն գործածվում ո՛չ պահպակերեցում, ո՛չ արաբերենում. հայացվել, դարձել են մեր հիմնական բառապաշարի բառերը»:

Եվ պարոն Թովմասյանը վրդովվում է, որ այսօր սխալմամբ են անհարկի մեկը գործածվում է մյուսի փոխարեն: Մինչեւ 20-րդ դարի կեսերը մեր բոլոր մեծերն էլ աշուղ էին կոչվում: Գետո, գրուցակցիս պատմելով, քյուրիմացաբար Խորհրդային Հայաստանի դեկլարներից մեկը, որն ընդամենը գյուղատնտես էր, բանավոր հրահանգ է տալիս, թե աշուղը թուրքերեն է, թող դրա փոխարեն գործածեն գուսան բառը՝ առանց խորամուկ լինելու երեւութների գիտական ստուգաբանության մեջ:

«Ժամանակներն էլ այնպիսին էին, որ գիտականներից ոչ մեկը չկարողացավ ընդդիմանալ: Շահենը, Աշուղը, Հավասին, որոնք մինչ այդ շրջանն իրենց բոլոր երգերի մեջ աշուղ էին կոչվում, վերանվանվում, գուսան են կոչվում: Ափսոսում եմ, որ այսօր էլ շատ լուրջ մարդիկ այս տարրական բաները այսքան բացատրելուց հետո չեն հասկանում եւ ինքնզիայով շարունակում են բառերի սխալ գործածումը: Նրանք, ովքեր կողմ են պրոֆեսիոնալ արվեստին ու գիտությանը, պիտի հասկանան, որ չպիտի հրաժարվենք մեր ստեղծած աշուղական մեծ մշակույթից: Վստահաբար ասում եմ, որ տարածաշրջանում ամենահարուստ աշուղական արվեստը հայ ժողովուրդն է ստեղծել: Եվ իրավունք չուներ ինքնագործ մոտեցմամբ այդ պատիվը թողնելու մեկ այլ ժողովրդի»:

Կառուցվածքային եւ թեմատիկ տարբերություններ

Գուսանները գովերգում էին աստվածներին, թագավորներին, զորավետներին: Գուսանական արվեստը ստուգաբանվում է իբրեւ գովեանելու արվեստ: Բառն այսպիսի բացատրություն էլ ունի՝ գով ասան (գովք ասող) գուսան: «Իսկ աշուղական արվեստը սիրտ արվեստ է: Աշուղական երգերի գերակշիռ մասը վերաբերում էր սիրուն վարդը սիրտ առարկան է՝ աղջիկը, իսկ բլրոսը՝ տղան, որը գովերգում է սիրելի

վարդը: Մրանք աշուղական արվեստի խորհրդանիշերն են», – նշում է Թ.Պողոսյանը:

Երաժշտագետ Լուսինե Նազարյանը բացատրում է, որ կառուցվածքի իմաստով էլ, ի տարբերություն աշուղականի, գուսանական երգն ավելի ազատ ստեղծագործություն էր: Աշուղական երգն ունի իր կառուցվածքային խիստ կանոնները, յուրահատկությունները, ունի հստակ տաղաչափություն, որով էլ տարբերվում է բանաստեղծության այլ տեսակներից: Եղել են նաեւ «դասական» մեղեդիներ: Դրանք դարերի ընթացքում ձեւավորված մեղեդային կառուցվածքներ են. այսինքն այդ տաղաչափությամբ գրված երաժշտությունը երգվում է պատրաստի մեղեդիով: Առանձնահատկություններից է նաեւ այն, որ աշուղական բանաստեղծության վերջին տան մեջ պարտադիր նշվում է աշուղի անունը:

Ինչպե՞ս են փոխանցվել այդ կանոնները

Աշուղը սիրված անձնավորություն է եղել, մուտք է ունեցել բոլորի տները: Բացի այն, որ ամեն գյուղ իր աշուղն է ունեցել, եղել են նաեւ թափառիկ աշուղներ: Աշուղ դառնալ պատրաստվող երեխաները տարիների ընթացքում սովորել են այս հմտությունները: Նրանց տարել, աշուղին աշակերտ են տվել:

«Շատ անգամ այնպիսի երեխաներ էին, որոնք ունակ չեն եղել գյուղական ծանր աշխատանքի: Կամ էլ լավ ձայն, երաժշտական ունակություններ են ունեցել: Աշակերտը որոշ ժամանակ ծառայություն է արել աշուղի մոտ, սպասավոր է եղել, հետո էլ սովորել այդ արվեստը: Վարպետներն ուսուցիչ մարդիկ էին. շատ էին շրջում, շփվում, այսօրվա տերմիններով «ինքնակրթությամբ» են զբաղվել: Եվ բացի տաղաչափական կանոնները, աշուղական արվեստի հիմքերը սովորեցնելուց, վարպետը աշակերտին նաեւ ընդհանուր գիտելիքներ է հաղորդել»: – փոխանցեց Լուսինեն: Նա ավելացրեց, որ ներկայումս ստեղծագործող աշուղները, որոնք չեն աշակերտել վարպետների, իրենց մոտ են սովորում այդ տաղաչափությունը, արվեստի առանձնահատկությունները եւ սկսում են այդ ձեւով գրել:

Նախկինում ամեն մեկն իրեն համարել է այս կամ այն հայտնի աշուղի աշակերտը: Բնականաբար, սառն ազդվել է նրանից, ում մոտ սովորել է: Նրա ոճում զգացվել է վարպետի ազդեցությունը: Այսպես հիմք է դրվել տարբեր աշուղական դպրոցների:

Կոնկրետ աշուղ Աշուղի աշակերտներից Լուսինեն հիշեց արտաշատցի աշուղ Մեխակին:

Գործիքները

Որպես կանոն, բոլոր աշուղներն էլ նվագում էին որեւէ գործիքի վրա: Ամենատարածվածը եղել է սազը, որովհետեւ այն եղել է ամենահեշտ նվագվողը: Սիրված են եղել նաեւ թառը, քամանին, քամանչան, սանթուրը: Ձիվանին նվագել է ջութակ, բայց ծնկան վրա դրած, քամանիի նմանությամբ: Շահենը քանոն է նվագել: Քամանին շատ տարածված է եղել համաձայնակների մեջ: Ո՞րն է գուտ հայկական գործիք. երաժշտագետը պատասխանում է, որ դժվար է ասել:

«Բայց բոլորն էլ այնքան հին ժամանակներից են մեզանում օգտագործվում, որ վստահաբար սրանք բոլորն էլ կարելի է հայկական համարել: Ամեն մի գործիք ժամանակի ընթացքում կատարելագործվում, զարգանում է տվյալ ժողովրդին համապատասխան: Գործիքը ձայն արտադրող

միջոց է: Այդ ձայնն էլ պիտի վերարտադրեր համապատասխան երաժշտությունը, ուստի՝ պետք է լիներ մեղեդուն հարմար գործիք: Այսպիսով, ոչ միայն մեղեդին է գործիքի առանձնահատկությունից բխում, այլեւ գործիքը պետք է ենթարկվեր մեղեդուն: Գործիքները նաեւ փոխանցվում էին. մեջլիսների ժամանակ պարտվող աշուղն իր գործիքը տալիս էր հաղթողին: Ու հետո, ասենք, հարուստ չեն եղել հատուկ չեն գնացել գործիք գներու. ինչ ձեռքներն ընկել է, նվագել են: Ձիվանին ո՞նց է ջութակ նվագել. գործիքը ձեռքն է ընկել, նման է եղել քամանուն, ձայնն ավելի հնչել է եղել, հարմարեցրել-նվագել է»:

Այլ հետաքրքիր տեղեկություններ

Լ. Նազարյանը տեղեկացրեց, որ Ձիվանուց հետո սկսեցին ոչ միայն տեքստերը բացառապես հայերեն գրել, ինքնուրույն ու հայեցի մեղեդիներ ստեղծել, վերացան նաեւ օտարալեզու, օտարահունչ անունները: Եթե նախկինում կային, ասենք, Ջամալի, Շիրին են այլ ոչ հայերեն անուններ, աշուղները սկսեցին իրենց կոչել արդեն հայերեն անուններով՝ Շերան, Աշխույժ, Գրկեզ, Կարկուտ են այլն: Իհարկե, պարտադիր չէր, որ աշուղն անպայման ուրիշ անուն վերցներ. հաճախ մնացել է ավագանի անունը, օրինակ՝ աշուղ Աշուղ:

Ձիվանու հետ հայ աշուղական արվեստում նաեւ գերակշռող դարձան հայրենասիրական, խրատական թեմաները:

«Աշուղը որպես ույալ, շատ բան տեսած մարդ ավելի փորձառու էր, եւ դա ստիպում էր մտածել աշխարհի թարս ու շիտակի մասին: Այդ փորձը նույնպես փոխանցվում էր երգերի միջոցով: Աշուղական արվեստի այսօրվա թեմատիկան գրեթե նույնն է՝ սեր, հայրենասիրություն, խրատ: Ուղղակի, այսօրվա մտահորիզոնն ավելի լայն է, եւ ամեն ինչն այսօրվան է հարմարեցված. կենցաղային թեմաներն էլ կան»:


Աշուղին սիրում էին, կանչում խրախմանքների, հարսանիքների, տանում էին տուն, հյուրասիրում, նստեցնում ամենապատվավոր տեղում: Լուսինեի պատմելով, երեք տեսակի աշուղներ են եղել:

«Սովորական՝ երգող-պատմող աշուղները, որոնք հիմնականում հեքիաթներ, երեւելյան սիրավեպեր էին պատմում երգելով: Երեկոյան գալիս էին գյուղ, գյուղացիներից ում օդան որ ամենամեծն էր, հավաքվում էին սյուրտեղ է ողջ գիշեր լսում աշուղին: Ժողովուրդը լսում-սովորում էր այդ պատմությունները, տարածում: Երկրորդը բանաստեղծ աշուղն էր, որն ուղղակի բանաստեղծություն էր հորինում, հարմարեցնում արդեն եղած «դասական» մեղեդիներին ու երգում: Եվ մեզ ծանոթ տաղանդավոր մեծ աշուղները, որոնք նաեւ մեղեդի էին հորինում»:

Ամբողջ արեւելքում ստեղծված աշուղական արվեստն այսօր էլ կա. ամեն տեղ պարզացել է իր ուրույն ձեւով: Խորհրդային տարիներին հիմնականում շփումները, մրցույթները եղել են Կովկասի աշուղների միջև: Այսօր աշուղագիտական կենտրոնում հազվի հասցնում են հավաքել մեր երկրում եղածը: Շփում ունեն հիմնականում Թեհրանի հայ աշուղների հետ, որոնց արվեստը, բնականաբար, տարբերվում է կրում է պարսկական ազդեցությունը, ինչպես հայկական ամեն մի տարածաշրջանի ստեղծագործողների մեջ էլ տարբերություն կա. օրինակ՝ արտաշատցի, դարաբաղցի, իջեւանցի երգողները տարբերվում են միմյանցից...

ԳՈՒՄԱՆ ԸՆԳՄԻՇՏ ԳՐՈՇԱԿԱԾ Է ԳՈՐԻՍԵՑԻՆԵՐԻ ԶԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՁ

Գուսանի հիշարարկի քարե հավերժացումները



Գուսան Աշոտի շիրմին կանգնեցված մահարձանի հեղինակը **ՍԵՎԱԴԱ ԶԱՔԱՐՅԱՆ** է: 1989թ., երբ մահացավ գուսանը, նա Գորիս քաղաքի գլխավոր ճարտարապետն էր:

Նրա կարծիքով արվեստներից երաժշտությունն ամենամոտն է ժողովրդին: Եվ գուսանին թաղեցին այնպիսի մի բարձունքում, որը եւ դիտվում է քաղաքից, եւ շրջապատում իշխող է, ուստի այնտեղ պիտի յուրօրինակ մահարձան լիներ:

«Նախ շատ էի սիրում իր արվեստը, - պատմում է Սեւադա Զաքարյանը, - հետո էլ նա՛ որպես գործիսեցի, եթե մեր մեծերի մեջ առաջինը չէ, ապա նրանց շարքում է, դրա համար էլ մտածում էի, որ նրան վայել շիրմաքար պիտի կանգնեցվի: Բայց միայն տեղային մտածելակերպով չվերաբերվեցինք նրան, այլ որպես համագայյին երեւույթի: Ուզում էի, որ այնպիսի մահարձան ունենար, որ հենց գերեզմանով էլ որպես մեծություն հիշվեր դարեդար»:

Ճարտարապետն ասում է, թե լավ է, որ այդ ժամանակ խորհրդային կարգեր էին, եւ քաղաքային խորհրդի գործկոմը դեռ կարող էր միջոցներ տրամադրել մնամ ձեռնարկների համար: Եվ մահարձանը կառուցվեց այդ ձևով եւ ոչ հանգանակությունների հաշվին, ինչպես հիմա է ընդունված: «Քաղխորհրդի

գործկոմի նախագահն այն ժամանակ Թունյան Մայիսն էր: Ինքն էլ՝ որպես գուսանի սիրահար աջակցեց... Կարծում եմ՝ ոչ բոլոր քաղաքապետերն են այդքանը հասկանում-գնահատում: Զարցը բարձրացվեց քաղաքային խորհրդի գործկոմի նիստում, առաջարկեցի մեր միջոցներով մահարձան կառուցել, որոշում կայացվեց: Կառուցող վարպետներն էին Զամո Սարգսյանը, Սերոբ Աթայանը»:

Մահարձանը տեղադրված է փոքրիկ հրապարակ հիշեցնող վայրում, որտեղ հատվում են այդ գերեզմանատան ճանապարհները, մի յուրահատուկ խաչմերուկ է: «Այսինքն՝ ինքն արդեն թելադրող շեշտադրում է, - բացատրում է մեր զրուցակիցը: - Բլուրն իր հերթին, մահարձանն էլ իր հերթին իշխող դիրք ունեն: Զայաքքո ուղղում ես դեպի այդ բարձունքը եւ միշտ իրեն ես տեսնում: Դրա համար մասշտաբով, լուծումով էլ այն սովորական մահարձաններից պիտի տարբերվեր»:

Մահարձանը կառուցվել է Գորիսի բազալտ քարից: Այն չորս սյուներով բաց սրահ է գմբեթով, որը ճարտարապետության մեջ «ռոտոնդա» է կոչվում: Վերադրի վրա խաչ է դրված: Սրահում թաղված է Աշոտ Դադախյանը: Տապանաքարն արդեն դրել են գուսանի հարազատները: «Ես ուրիշ տապանաքար էի ուզում այն ժամանակ դնել, բայց դա միջոցների հետ կապված էր, հետո երկիրը փլվեց, չկարողացանք անել այն, ինչ մտադիր էիք», - ցավում է Ս. Զաքարյանը:

Գորիսում գուսան Աշոտի կիսանդրու տեղադրման վայրն էլ Սեւադա Զաքարյանն է ընտրել: Պատմում է, որ չնայած ինքն արդեն քաղաքի գլխավոր ճարտարապետ չի աշխատում, բայց պնդել է, որ հատկապես այդտեղ դրվի. «Որովհետեւ նախապես որոշվել էր դնել մշակույթի տան ներքին բակում: Դա քննարկումների տեղիք տվեց, ասացի, որ սխալ տեղ էն ընտրել:



2005 թվականին Գորիսում տեղադրվեց գուսան Աշոտի կիսանդրին (բանդակագործ՝ Գեորգի Բաղդասարյան) ■



1991թ. ապրիլի 25-ին վեր խոյացավ գուսան Աշոտի մահարձանը ■

Գեորգի Բաղդասարյանն արձանն անում էր այդտեղ դնելու համար, որովհետեւ արդեն հուշաքար էր տեղադրվել, որը ծանուցում էր, թե այդ ներքին բակում պիտի դրվի արձանը»:

Գետնի վրա գնացել, քանդակագործի արվեստանոցում տեսել է արդեն պատրաստ կիսանդրին, հասկացել, որ նախատեսված տեղում տեղադրելը նշանակում է տանել-թաքցնել մարդուն. ո՞վ պիտի գնար այն տեսներ... «Առաջարկեցի Զամ աղբյուրի մոտ դնել: Նախ, քանի որ այն վատ վիճակում էր, կվերականգնվեր: Եվ հետո՝ կիսանդրին ինքը փոքր ճարտարապետական տարր է: Այսինքն՝ քաղաքում չես կարող կիսանդրիով որեւէ միջավայր ստանալ, որտեղ ասես՝ այս միջավայրում ինքն իշխում է, - պարզաբանում է ճարտարապետը: - Դրա համար մտածեցի, որ իրեն լրացուցիչ բան է պետք: Ներքին բակում ընդհանրապես ոչ մի կապ չպիտի ունենար քաղաքի հետ: Իսկ այսպես աղբյուրն ու քանդակը մեկը մյուսին կլրացնեն: Նախ գալիս իջնում ես, ջուր ես խմում, դեռ ջուր խմելիս էլ՝ խոնարհվում ես, դա վերաբերում է նաեւ գուսանին... Ուրեմն՝ ինչո՞ւ թաքցնեցինք»:

Ասում է, որ քաղաքի այսօրվա իշխանությունները, գլխավոր ճարտարապետը դեռ էին իր առաջարկին: Ինքն էսքիզները ներկայացրել է տարածքային իշխանությանը, ասել, որ իր կարծիքն է. մեծությունը քաղաքում պիտի երևա, թող վարվեն այնպես, ինչպես ճիշտ

են գտնում... «Ինձ թվում է՝ հաջողվել է, ճիշտ վայր է, տարածքն էլ բարեկարգվեց, այդ միջավայրում ինքն ավելի լավ է դիտվում»:

Գորիսում ուսուցչի տան պատի (սա աշուղի սիրած վայրն էր, այնտեղ էր կանգնում ու գործիսեցիներին ներկայացնում իր նոր երգերը) ցուցաբերել է փակցվել է Ս. Զաքարյանի ճարտարապետ եղած ժամանակ:

Գուսան Աշոտի հիշատակը հավերժացնելուն ուղղված որեւէ մտահղացում ունի՞ ճարտարապետը, որը դեռես իրականություն չէ: Պատասխանում է, թե կարելի էր, օրինակ, ցուցատախտակ փակցնել այն տան պատին, որտեղ նա է ապրել, բայց ո՞վ պիտի նախաձեռնի... **ԱՐՄԻՆԵ ԱՎԱԶՅԱՆ**


ԶԱՎԵՐԺՈՒԹՅԱՆ ԱՌՅԱՎԱՏՉՅԱՆ

«Անհուն երկնի շողն առած, կենաց սիրտ կա օջախում»


Գուսանը նաեւ օջախն էր փառաբանում, ուր հիշատակ կա, կենաց սիրտ կա, վատ կրակ կա: Գուսանը հավատում էր, որ «Ինչքան էլ որ խիստ լինի ծյուն ծնե՞րը ես տարվա / Ինչքան էլ որ ուշ բացվեն ճանփաները գարունը վա», միեւնույն է, կրակները սրտերի չեն մարի եւ կման վառ օջախում:

Գուսանը, որ մամուլի հասակում մայր էր կորցրել, որ առաջին եւ երկրորդ կնոջն էր կորցրել, մեծ վիշտ ապրեց ավագ որդու՝ Ռուբենի

նի ողբերգական մահվան համար (1981թ.): Եվ այդ կսկիծը, բնականաբար, անդրադարձներ ունեցավ նրա առանձին ստեղծագործությունների վրա: Կյանքն էր, նաեւ զանգեզուրյան ավանդույթները, որ ստիպել էին գուսանին սրբության սրբոց համարելու օջախը: Եվ իր օջախի հավերժության առեղծվածային համարում էր թոռնիկներին, որոնց հետ կապված էր անհուն սիրով:



Աշոտ (Ռուբենի որդին) ■



Զայկ (Զամելի որդին) ■



Զայրապետ (Զամելի որդին) ■

Զարությունը՝ Գուսանի հեղինակը (Զամելի ավագ որդին՝ մահացած 1993-ին, 25 տարեկանում) ■



Զամիկ (Զամելի դուստրը) ■

ԳՈՒՄԱՆԻ ԵՐԳԱՇՆԱԹՅՈՒՆ

ՍՈՒՐԲ ՄԱՅՐԵՐ

Անկարող եմ մոր թախիծը տանել լուռ, Հուզմունքներն ու խորը կսկիծը տանել լուռ, Նրա սրտի հեքն ու կանչը տանել լուռ:

Ով սուրբ մայրեր, ձեր վիշտն առնեմ տանեմ ո՞ւր. Մորմոքներն ու հոգսերն առնեմ տանեմ ո՞ւր. Կարտուններն ու խոհերն առնեմ տանեմ ո՞ւր: Տանեմ լուռ, Վառվեմ լուռ, Հալվեմ լուռ:

Մոր ապտակը հեզ համբույր է ինձ եղել, Մոր գայրույթը հույս խրատ է ինձ եղել, Նզովքն անգամ սուրբ օրհնանք է ինձ եղել:

Երբ երազում տեսնում եմ իմ սուրբ մորը, Տանս շեմին վարդ է բացվում այդ օրը, Տաղ եմ բերում հոգուս տխրակն ու լորը:

Աշտոն ասաց, սրբի դուռ է իմ մայրը, Ջերմացնող կրակ, հուր է իմ մայրը, Հայրենի տուն, զանգ, մատուռ է իմ մայրը:

Ով սուրբ մայրեր, ձեր վիշտն առնեմ տանեմ ո՞ւր. Մորմոքներն ու հոգսերն առնեմ տանեմ ո՞ւր. Կարտուններն ու խոհերն առնեմ տանեմ ո՞ւր: Տանեմ լուռ, Վառվեմ լուռ, Հալվեմ լուռ:

Գուսան Աշոտն իր երգերի կարարողն էր, գորիսյան երաժշտական խմբերի ներշնչանքի աղբյուրը

Թբիլիսի, 1963թ.: Գուսան Աշոտը ելույթ է ունենում Սայաթ-Նովայի ծննդյան 250-ամյակին նվիրված համակովկասյան փառատոնում («Заря Востока», 12 հոկտեմբերի 1963թ.)



Աշոտի երգերի լավագույն կարարողներից էր Արաքսյա Ղալեջյանը: Նա եղել է գուսանի երգերի մեծ մասի առաջին կարարողը, իսկ 1950-60-ական թվականներին՝ նաև նրա երգերի առաջին տարածողներից մեկը (այդ ժամանակ աշխատել է Կարբեր համույթներում)



Գորիսի շրջանային մշակույթի տան ժողգործիչների ժողովրդական անսամբլը 1980-ականներին (համույթը ստեղծվել է գուսան Աշոտի նախաձեռնությամբ)



Գորիսի գրադարանների կենտրոնացված համակարգում գուսանի խորհրդով 80-ականներին ստեղծվել էր երգչախումբ



ԳՈՒՄԱՆԻ ԵՐԳԱՇՆԱՐՅՈՒՄ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ- ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ

Գարուն բացվեց, գարուն եկավ,
Անձրեի տեղ արյուն եկավ,
Մայր աղավնու խաղաղ բույնը,
Չագուկ փախցնող ուրուրն եկավ:

Արծիվները վեր խոյացան,
Մե-սեւ ամպերն իրար անցան,
Նորեն խաղաղ գարուն բացվեց,
Շատ-շատերը վերադարձան,
Իսկ շատերն էլ հուշեր դարձան...

Անմար լույսեր հոգիների՝
Իմ քարակերտ հուշարձաններ,
Նոր պատմություն սխրանքների՝
Իմ հրակերտ հուշարձաններ:

Սերունդները միշտ ուժ կառնեն,
Հարս ու աղջիկ մոմ կվառեն,
Ես էլ նրանց հետ կվառվեմ,
Հուշարձաններ, հուշարձաններ:

Հասակներն եր քաջ-քաջերի,
Փայլ ու կրակ կայծակների,
Հագար երագ, մորթակների,
Իմ փարակերտ հուշարձաններ:

Արծիվները վեր խոյացան,
Մե-սեւ ամպերն իրար անցան,
Նորեն խաղաղ գարուն բացվեց,
Շատ-շատերը վերադարձան,
Իսկ շատերն էլ հուշեր դարձան...

Ձեր նախազարդ սուրբ քարերում,
Մայրն իր որդու աչքն է տեսնում,
Քույրն իր եղբոր կանչը լսում,
Իմ վեհակերտ հուշարձաններ:

Հուշարձաններ՝ հավերժ կանգուն,
Երկինքն էլ է ձեզ շափաղում,
Աշտոն երգեց ձեր փառքն անհուն,
Իմ նորակերտ հուշարձաններ:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Կենդանության օրոք լույս են տեսել հեղեղյալ գրքերը

Գուսանական երգեր, 1942թ., Երեւան:
Գուսանի սերը, 1955թ., Երեւան, «Հայ-պետհրատ»:
Գուսանի սերը (նոտագրված), 1958թ., Երեւան, «Հայպետհրատ», տպաքանակը՝ 3000, ծավալը՝ 15,5 տպագրական մամուլ:
Սիրո կրակներ, 1974թ., Երեւան, «Հայաստան», տպաքանակը՝ 10 000, ծավալը՝ 17,1 հրատարակչական մամուլ:
Սիրո կրակներ (նոտագրված), 1974թ., Երեւան, «Հայաստան»:
Սրտի նվագներ, 1979թ., Երեւան:
Ծովաստղիկս (նոտագրված), 1982թ., Երեւան, «Սովետական գրող», տպաքանակը՝ 3000, ծավալը՝ 27,72 տպագրական մամուլ:
Լեռները կանչում են, 1988թ., Երեւան, «Սովետական գրող», 184 էջ, տպաքանակը՝ 10 000:

«Սյունյաց երկիր» խմբագրությունը շնորհակալություն է հայտնում Գուսան Աշոտի որդուն՝ Համլետ Դադայանին, հարսին՝ Վիկտորյա Դադայանին, Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ազգային նվագարանների եւ հայ երգեցողության ամբիոնի վարիչ Արգաս Ոսկանյանին, համրապետության ժողովրդական արտիստուհի Անժելա Աթաբեկյանին, Գորիսի նախկին փոխքաղաքապետ Մարտին Մայսուրյանին, Կապանի երաժշտական ուսումնարանի տնօրեն Լիանա Հակոբյանին՝ գուսան Աշոտի ծննդյան 100-ամյակին նվիրված համարի պատրաստմանն աջակցելու համար: